

ՄԻՈՆ

ՅՈՒՆՈՒԱՐ

ՓԵՏՐՈՒԱՐ

ՄԱՐՏ

Թիւ 1 - 2 - 3

1997



ՄԻՌ

ԱՄԱԱԳԻՐ
ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԶՈՒԹԵԱՆ
ՀԱ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1997	ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ - ՄԱՐՏ	Թիւ	1 - 2 - 3
1997	January - February - March	No.	1 - 2 - 3

SION

VOL. 71

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor : His Beatitude The Armenian Patriarch Of Jerusalem



St. James Press, Jerusalem



ԿՐՕՆԱԿԱՆ

ՃԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱՇԻՆ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

“ԱՍՏՈՒԱՍ ԸՆԴ ՄԵՁ”

ԵՒ

ՄԵՆՔ՝ ԱՌ ԱՍՏՈՒԱՍ

«Ահա կոյս յղասցի և ծնցի որդի,
եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ,
Որ թարգմանի 'ընդ մեզ Աստուած'»
(ՄԱՏԹ. Ա. 23):

Նոր Տարի մըն ալ ահա կը բացուի մեր կենսընթացութեան դարագնաց ճամբուն վրայ: 1997 թուանիշով ան պիտի արձանագրուի և ճանչցուի թէ՛ մեր անհատական կենսագրութեան և թէ՛ մեր ազգի և մարդկութեան տարեգրութեան մշտարաց էջերուն վրայ: Այս օրերուն յատուկ ուշակեղորոնութեամբ կ'անդրադառնանք որ 1997 տարիներ են անցած այն օրէն ասդին երբ երկինքը իջաւ ու միացաւ երկրին հետ, երբ երկրի անշուք մէկ կէտին վրայ, Բեթղեհէմի մէջ, Աստուած Ի՛նք խոնարհեցաւ ու մարդացաւ Իր Որդւոյն՝ Բանին Աստուծոյ մարմնառութեամբը և մեր մարդկային քնութեան հետ նոյնացումովը, ի սէր այս վերջնոյն աստուածատիպ ցկարագրին վերաբիրեղացման և աստուածադրոշմ պատկերին վերականգնումին:

Ս. ԾՆՆՂԵԱՆ տօնն է որ քրիստոնեաներուն համար կ'իմաստաւորէ և կ'արժևորէ այսպէս կոչուած “Նոր Տարին” և ժամանակի ու նիւթեղէն տարածութեան թելերով հիւսուող մեր կեանքը այս աշխարհի վրայ: Որովհետև բացուող ամէն Նոր Տարուայ առաջին մեծ տօնն է ան, որ իր խորհուրդով կը լիցփաւորէ մէկ նոր հանգրուանը մեր կեանքին, գալիք 365 օրերը դրոշմելով Աստուծոյ մեզ հետ ըլլալու գաղափարովը:

Քրիստոնէութիւնը Քրիստոսի անձն'ով է կեանքի կոչուած և այդ անձին ներկայութիւնը ունի իր մէջ որպէս իր բուն էութիւնը կազմող զօրութիւն: Գաղափարաբանութիւն չէ քրիստոնէութիւնը. ոչ ալ սոսկ բարոյական ուսուցումնիրու համակարգ մը. և ոչ ալ իշխանութեան մը տիրապետութիւնը: Անձի մը ճանաչալու մէն է ան: Ատոր համար “արեգակ”ի է նմանցուած Յիսուս: Արեգակը արեգակ է, որովհետև կը ճառագայթէ և երբեք չի դադրիր ճառագայթելէ և չսպառիր ճառագայթելով: Քրիստոս կ'ապրի և չի դադրիր երբեք կեանք ճառագայթելէ: Ոչ խաչը կրցաւ զԱյն զամուած անշարժութեան դատապարտել և ոչ ալ հողը կրցաւ զԱյն պարփակել: Աստուած էր, եղաւ մարդ. Աստուած է, և չի դադրիր մարմին

ըլլալէ նիւթեղէն մարմինը փոխարինելով "խորհրդակաճ մարմնով", այսինքն՝ եկեղեցիով: Ատոր համար է որ եկեղեցին մեր ծննդավայրն է, Իր մարմնին հետ մեր հաղորդութիւնը:

Այս օրերուն քրիստոնէական եկեղեցիները աշխարհի անծայրածիր տարածքին վրայ կը պանծացնեն իրենց հիմնադրին և սկզբնատիպին՝ Քրիստոսի ծննդեան դրուագը իրենց հաւատացեալներուն ըսելու համար թէ Քրիստոսի անունը էմմանուէլ է, թէ՛ "Աստուած իրենց հետ է": Մեր մէջ Աստուծոյ ներգոյութիւնն ու ներգործութիւնը մեր հարազատ ինքնութեան կնիքն է և միանգամայն մեր կեանքին հոգեկան զօրութեան աղբիւրը: Ան որ կը կտրուի այդ աղբիւրէն՝ շուտով կը ցամփի իր ուժականութեան մէջ: Պատմութիւնը կը վկայէ որ մարդիկ յաճախ երբ հեռացած են Աստուծմէ՛ տկարացած են և նաև այլասերած՝ իրենց հարազատ մարդկային ինքնութեանը մէջ: Մարդիկ այսօր գիտական և ճարտարարուեստական ու ճարտարաշինական այնպիսի հսկայական նուաճումներ են կատարած, որ զիրենց կրնան մղել - ինչպէս երբեմն մղած են և այսօր ալ կը մղեն - իրենց ոյժերը այնպէս բացարձակութեան ըմբռնումին տանելու որ կարծես իրենց ըլլան արարիչը երկրի և երկնի, մեծատիեզերքին (macrcosmos) և մանրատիեզերքին (micrcosmos) և նաև տէ՛րը մարդկութեան լինելութեան:

Քրիստոսի ծննդեան տօնը հակադեղն է այդ փորձութեան, և դարմանը մեղքին հիւանդութեան: Անով Աստուած մեզի կ'ըսէ. - ո՛ր որ ալ ըլլաս, ի՛նչ որ ալ ըլլաս՝ ես քեզի հետ եմ, քու մէջդ եմ, քեզ համար մարդ եղայ, որպէսզի դուն ճշմարիտ մարդ դառնաս, Իմ քու վրայ ներդրած դրոշմը անաղարտ պահես, քու հոգիիդ մէջ Իմ Հոգիին ճառագայթը չշիջուցանես:



Սիրելի՛ք,

Մօտէն հետևելով ներկայ աշխարհի մէջ յառաջ եկած մտածողութեանց և կեանքի յեղաշրջական փոփոխութիւններուն՝ Մենք յստակ կերպով կը տեսնենք հոգևոր վերարթնութեան նշանները մարդկութեան կեանքին մէջ: "Դէպի Աստուած", "դէպի աստուածայինը" շարժումը իրական շարժում է մանաւանդ երիտասարդ սերունդին մէջ, որ նիւթական աշխարհի բարիքներով ինքզինքն յագեցած կը գտնէ և հոգևոր սպրուհի ծարուն ու տեղը կը զգայ:

Մեր հայ ժողովուրդն ալ ընդհանուր մարդկութեան կեանքի շրջագիծին մէջ իր կեանքն ապրելով, և մանաւանդ մեր ժողովուրդի քրիստոնէական պատմութեան և մշակոյթին ժառանգորդն ըլլալով՝ աւելի կարիք ունի հոգևոր վերազարթոնքին: Այլևս չտարուինք միշտ ըսելու և կրկնելու որ 70 տարիներ մեզի Հայաստանի մէջ մնացիմք զուրկ քրիստոնէական դաստիարակութիւնէն: 70 տարիներն ի՞նչ կ'արժեն 1700 տարիներու այնքան լիացած քրիստոնէական կեանքի արժէքներուն պատմական փորձառութեան հարստութեան դիմաց....:

70 տարիներու սովը չի կրնար 1700 տարիներու առատութիւնը ջնջել, մոռցնել տալ կամ ստուերի տակ դնել...: Եթէ ճշմարտօրէն հաղորդակից և հաւատարիմ ենք մեր պատմութեանը՝ պէտք ունինք այսօր այդ ֆրիստոնէական ինքնութիւնը վերաքրեղացնելու, վերաթևորելու և վերագորացնելու:

Աստուած մեզի հետ եղաւ դարե՛ր դարե՛ր շարունակ, թէ՛ տառապանքի և թէ՛ յաղթանակի, թէ՛ խղաղութեան և թէ՛ խռովութեան վիճակներուն մէջ:

Աստուած մեզի հետ եղաւ մեր հաւատքին պերճախօս վկայութիւնն եղող մեր փառակերտ տաճարներուն մէջէն, Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլովը ներբափանցուած և լուսեղինացած:

Աստուած մեզի հետ եղաւ մեր Հայ Գիրին մէջէն, Ս. Մեսրոպ Մաշտոցի տեսիլովը ձև ստացած և մեր նակտին դրոշմուած:

Աստուած մեզի հետ եղաւ Աւարայրի դաշտին վրայ, Ս. Վարդանի կողմին կանգնած Ս. Ղևոնդի հրաշունչ աղօթքներովը:

Աստուած մեզի հետ եղաւ մեր մագաղաթներուն և տպագիր մատեաններուն մէջէն, մեր գրիչներուն և գծողներուն տառերով, գիծերով և գոյներով:

Աստուած մեզի հետ եղաւ մեր խաչքարերուն մէջէն, մահուան դառնութեան դիմաց անմահութեան շունչը ապրեցնելով մեր մէջ:

Աստուած մեզի հետ եղաւ մեր սուրբերուն և նահատակներուն մէջէն, մաքրաշունչ կեանքի և արեան գնով արտայայտուած հաւատքի հաւատարմութեան ըմբռնումը կենդանի պահելով մեր ողջ գոյութեանը մէջ:

Աստուած մեզի հետ եղաւ "բազում եղանակօք և բազում ժամանակօք", բայց ոչ միայն անցեալին, այլև այսօր:

Աստուած մեզի հետ եղաւ երբ Արցախի ժողովուրդը և Արցախացեալ հայ ժողովուրդի բոլոր զաւակները ի Մայր Հայրենիք և ի Սփիւռս աշխարհի հաւատարիմ մնացին Աստուծոյ տուած ազատութեան գաղափարին և պարտաւորութեան ու իրաւունքին:

Աստուած մեզի հետ եղաւ մեր Հայրենիքի անկախութեան հռչակումին մէջէն, դեռ հինգ տարիներ առաջ, ազատութեան գաղափարը շօշափելի իրականութեան վերածելով:

Աստուած մեզի հետ եղաւ մեր Ս. Եկեղեցւոյ՝ իր Միածին Որդւոյն մարմնին վերառողջացումովը, վերակենդանացումովը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերածաղկումովը և ողջ Հայց. Եկեղեցւոյ յարաճուն պտղաբերութեամբը:

Աստուած մեզի հետ է այսօր: Սա ինձ համար — և Վստահ եմ ձե՛զ համար — կենդանի հաւատք է, մեր բոլորի գոյութեանը հետ շաղախուած համոզում է և ապրում միանգամայն: Աստուծոյ մեզ հետ ըլլալու գիտակցութիւնը առաւել ևս ուժեղ և ներգործօն կը դառնայ մեր մէջ երբ մենք յատուկ ճիգով ջանանք մեր գերագոյն կարելին ընել որպէսզի *մենք* ըլլանք


Աստուծոյ հետ: Ըլլա՛ցք լիասի՛րտ կերպով և ոչ թէ պարագայական եղանակով. ըլլա՛ցք վաւերական ապրումով և ոչ թէ յիշատակային անդրադարձումով. ըլլա՛ցք ճշմարիտ, տա՛մ, անկեղծ, ամբողջական ինքնամիացումով Անոր հետ և ոչ թէ ձևական պատկանելիութեան տարտամ զգացումով:



Այս մտածումներով և զգացումներով առաջնորդուած՝ սրտագին կոչ կ'ընենք մեր սիրեցեալ ժողովրդեան, որ մարդեղացեալ ՅԻՍՈՒՍԻՆ հետ մեր ըլլալը, էՄՄԱՆՈՒԷԼ-ին հանդէպ հաւատարիմ մնալը և էՄՄԱՆՈՒԷԼ-ին զօրութիւնը մեր մէջ կենսարար և առողջարար ոյժի վերածելը դառնայ մեր կենսընթացի արևելումը. ուղղուածութիւնը 20-րդ դարի այս վերջին տարիներուն երբ կը պատրաստուինք ողջունելու ճոր, երրորդ, հազարամեակ մը քրիստոնէական յաւերժագնաց պատմութեան մէջ:

Ջերմօրէն կը շնորհաւորենք մեր Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ ճշմարտական միւս Աթոռներու գահակալները և մեր սիրեցեալ եղբայրները՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը և Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ Պատրիարքները, մեր բեմերու Առաջնորդները, մեր Հայրենիքի Հանրապետութեան Նախագահն ու պետական աւագանին, մեր բոլոր կրօնական, եկեղեցական, բարեսիրական, կրթական, մշակութային, ընկերային հաստատութիւններն ու կազմակերպութիւնները ի Մայր Հայաստան և ի Սփիւռս աշխարհի:

Մեր աղերսալից աղօթքն է ու սրտալից մաղթանքը որ էՄՄԱՆՈՒԷԼ-ը դառնայ մեզ համար էՄՄԱՆՈՒԷԼ, Աստուած ըլլայ մեզ հետ մեր լինելովն իրեն հետ, վասն շինութեան և բարգաւաճութեան ազգիս Հայոց, և վասն բարօրութեան համայն մարդկութեան և ի փառս Ամենասուրբ Երրորդութեան. ամէն:



ԳԱՐԵԳԻՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

5 Յունուար 1997

Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին

ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄ ԲԵԹՂԵՀԷՄԻ

Սիրեցեալ ժողովուրդ Հայոց, որ յԻսրայել եւ ի Պաղեստին, որ ի Յորդանան եւ ի Հայաստան, որ յԱրցախ եւ ի Սփիւռս աշխարհի ցրուեալ:

Փառք Ամենակալին, կրկին համախմբուած ենք Քրիստոսի Ծննդեան Սուրբ Տաճարին եւ Մսուրին մէջ, ի Բեթղեհէմ, եւ հայկական աւանդութեամբ, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, եւ մեր ժողովուրդի հաւատաւոր զաւակներուն հետ, Սուրբ Երկրի սրբավայրերուն մէջ դարաւոր մեր առանձնաշնորհումներուն համաձայն, յանուն մեր ազգին, կը մատուցանենք մեր Սուրբ Պատարագը, եւ կը կատարենք Հայաստանեայց Ուղղափառ մեր Եկեղեցւոյ պաշտամունքները:

Անցնող տարուան սկիզբները, այնքան յուսալից էինք որ պիտի վերջ գտնէին կործանարար պայքարները, ցեղային ատելութիւնները, ընկերային եւ տնտեսական տագնապները, ընտանիքներու անհիտումը, եւ մօտ էր Տիրոջ պատգամին իրականացումը Եսայի մարգարէին բերնով, թէ՛ ժողովուրդները պէտք է ձուլեն իրենց սուրբերը, եւ զանոնք խոփերու վերածեն, եւ իրենց սուրբները մանգաղներու փոխակերպեն. եւ այլեւս ազգ ազգի վրայ սուր պիտի չը բարձրացնէ: «Եւ ոչ եւս ուսանիցին տալ պատերազմ:»

Յաւիտենական եւ նոյնն է պատգամը մարդացեալ Աստուծոյն, Քրիստոսի մարդեղութեան եւ Աստուածայայտնութեան խորհուրդին:

Խաղաղութեան եւ բարգաւաճութեան կարօտ անհատներուն, ինչպէս նաեւ ազգերուն համար, չկայ ասկէ աւելի անխարդախ պատգամ մը յոյսի եւ փրկութեան:

Բայց չարին սադրանքները, եւ կայէնատիպ ատելութեան եւ եղբայր սպանութեան պոռթկումները, մեր շուրջն են միշտ, ամենազգի կերպարանքներով եւ շարժառիթներով:

Եւ այդ պատճառաւ իսկ, ազգերը պէտք է սորվին եւ սորվեցնեն հոգիի պատերազմը պատերազմելու, եւ ընդդէմ չարին գինուորեալ հաւատաւորներու բանակը զօրացնելու, ձայնը լսելի դարձնելու:

Այն ատեն, «Անբաւելին երկնի եւ երկրի» իսկապէս մեր մէջ պիտի բնակի, իբրեւ «հօր իշխան», իբրեւ «խորհրդական», իբրեւ «էմմանուէլ» եւ «մարդացեալ փրկիչ» աշխարհի:

Եւ ի՛նչ՝ աւելի անկասկած ապահովութիւն եւ ուրախութիւն, քան տեսնել, անդրադառնալ, եւ հաւատալ որ, Բեթղեհէմի խոնարհ մտուրին մէջ, «ի խանձարուրս պատեալ» մանուկ Յիսուսը եղաւ, եւ է, Վարդապետը եւ տիպարը՝ հոգիին անարիւն պատերազմը պատերազմող, եւ իսաչելութեան խորհուրդով՝ հոգիի անխարդախ երջանկութիւնը ապահովող: Անհատներուն, ինչպէս նաեւ Ազգերուն եւ ամբողջ մարդկութեան համար:

Աստուածային օրհնութիւն է, որ ազգերու շարքին եւ ընտանիքին մէջ, հայ ժողովուրդը առաջինը եղաւ աշխարհին յայտարարելու, թէ ինք ընդունած է եւ յանձն առած է կրել Յիսուսի իսաչը, հաւատալով անոր յաղթանակին, անոր յարութեան: Եւ քան զարեւր հաւատարիմ մնացած է իր յայտարարութեան եւ իր խոստումին:

Այսօր եւս, հայրենական հողերուն վրայ մեր անկախ Հայաստանի եւ Արցախի, մեր հաւատքի զանգակները կը դողանցեն, հակառակ մեր տանջակոծ ժողովուրդին կրած զրկանքներուն, հակառակ մեզ շրջափակող չար ուժերու սպառնալիքներուն:

Ժողովուրդներուն եղբայրութեան եւ արարիչ Աստուծոյ հայրութեան հաստատ հաւաստումը քարոզող «Խաղաղութեան Իշխանին», Յիսուս Քրիստոսի պատգամը կը մնայ յաւերժական նշմարտութիւն, երբ կը յայտարարէ թէ՛ «Հոգին է կենդանարար», եւ թէ՛ «Մի՛ վախնա՛ք անոնցմէ որոնք մարմինը կը սպաննեն,

այլ վախցե՛ք միայն անոնցմէ՛, որոնք կարող են հոգին սպաննել:»

Ամէն ազգէ եւ ամենուրեք, նոյն հաւատֆոյ գօտեպիւնդ հոգիներու հետ, մենք եւս, Քրիստոսի Մննդեան Սուրբ Այրին մէջ հաւաքուած, կ'աղօթենք որ, Աստուծոյ օրհնութեամբ, խաղաղութիւն եւ բարօրութիւն հաստատուի Սուրբ Երկրի եւ շրջակայ երկիրներու եւ խոռվայոյզ բոլոր ազգերու կեանքին մէջ:

Աղօթենք որ Տէրը ինք առաջնորդէ Ընդհանրական Իր Եկեղեցին, հաւատարիմ սպասաւորը մնալու իրեն տրուած առաքելութեան: Եւ անասան պահէ հայրենի մեր պետութիւնը, նուիրապետական Աթոռները մեր Մայր Եկեղեցւոյ, եւ «կենդանարար հոգիով» առատաբաշխ շնորհագարդէ աշխարհի համամարդկային ընտանիքը, խորհուրդովը Սուրբ Մննդեան նուիրական այս տօնին: Եւ Սուրբ Հոգին ֆշմարտապէս բացայայտէ հրաշքը մարդացեալ Փրկչին յայտնութեան:

Եւ ուրախութեան ղօղանջներով թող արձագանգէ օրհնաբեր աւետիսը Մննդեան.—

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ.

Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի:»

Թ.Ա.Մ.

18 January 1997

ARMENIAN CHRISTMAS IN BETHLEHEM

Dear children of the Armenian Apostolic Orthodox Church all over the world, and men and women of good will everywhere:

During this Christmas season, for Latins, the Greek Orthodox, the Armenian and Oriental Orthodox Churches, the celebrations are extended from December 24th to January 19th, and there is jubilation in Bethlehem, the manger of the birthplace of our Lord Jesus Christ.

This is the second celebration for our Palestinian brethren, who act like hosts, who in their capacity as official government authority, join the Christians in their Christmas festivities.

His Excellency the President Mr. Yaser Arafat, is an undeniable witness to the world, aiming at building new bridges, together with the Government and the leaders of the people of Israel, establishing unwaivering understanding and cooperation for peace, security and prosperity, for the mutual benefit of coming generations.

A few months ago, here in this hallowed spot, in this humble grotto, people said they had seen the miracle of a weeping Christ.

Thousands of believers, of all ages and professions, from all parts of the land, congregated in these narrow confines to gaze in awe, hope and trepidation upon the sight of the blood-drenched tears of the Saviour, and to pray for an answer to their innermost longings.

While many declared it a real miracle, others scoffed. While many prayed on their knees for a sign of the grace and favour of God, others stood by, and laughed.

The actual miracle is not that an ancient, faded icon shed tears, but that in this age of uncertainty and scepticism, there are still people willing to believe in miracles, in the mercy of God and the promise of Christ.

Christmas is a timely reminder to us of the permanence of Christ's message of hope and salvation. And if we want to witness a miracle, we need look no further than our own heart.

"Glory to God in the highest, and peace on earth and goodwill towards men," the Angels sang to the shepherds as they crouched by their fire, and their words have echoed down the ages, and will continue to be heard as long as there is a living soul inhabiting our planet.

"**Glory to God,**" the Angels said, because God is everything, and everything belongs to Him. We are nothing without His special grace. This is His kingdom, and we are full-fledged citizens of it, endowed with inalienable birthrights that nothing can deprive us of. If only we realise the full meaning of this, we shall never lose hope or surrender to despair.

"**On earth peace:**" it is the most fundamental longing of every human being, particularly those of us who are caught up in the horror of war and famine. God promises us peace on earth, if only we would purify our hearts and accept each other as brothers of the same family, and love each other, without distinction, whether the other is a friend or a foe. For without such love, particularly the "impossible" one of loving your enemy, there shall be no peace on earth.

"**And goodwill towards men;**" love cannot flourish without good will. If we really want to be loved, we must exorcise any feelings of ill-will we bear towards others, and fill our heart with good-will towards all others.

When, twelve months ago, we gathered here at this hallowed spot, to celebrate our first Christmas in Bethlehem under the Administration of our brothers, the Palestinians, just as for centuries past, others before us had knelt, under different Administrations, we were filled with all sorts of expectations.

Many of these, particularly our yearning for peace, have still to be fulfilled, for although many things have happened in these 12 months, much is still left to be done.

We pray that the coming year will see the realisation of all our dreams, so that eventually peace may reign on earth, that the world may be filled with men of good will and that the Glory of God may be manifested among us, and may the whole universe worship the compassionate, the merciful God, the Allah, the Yahweh, and the Saviour of mankind, for ever and ever.

AMEN.

Patriarch Torkom Manoogian

ՆՈՐ ՏԱՐԻՆ

«Կեանքը անով էր ու կեանքը մարդոց լոյսն էր»
Յովհ. Ա.4

Նոր Տարին կը թեւակոխենք, հաւատով, յոյսով եւ յանձնառութեամբ: Նոր Տարին կը բանայ մեր առջեւ գործունէութեան նոր հորիզոններ: Անցնող տարուայ ընթացքին, ունեցանք յաջողութիւններ եւ ընկրկումներ: Տարեփակը պէտք է մղէ մեզ խորհրդածելու մեր անցեալի թերութիւններուն մասին, եւ հաստատ որոշումը առնելու զանոնք սրբագրելու եւ չկրկնելու:

Ժամանակը մեզի տրուած է Աստուծոյ կողմէ բարեգործութեան եւ եղբայրասիրութեան օգտակար արարքներ կատարելու: Քրիստոսի պատգամը նոր դարաշրջան մը բացաւ մարդկային պատմութեան մէջ: Նոր արժեչափեր գոյութիւն առին պատմութեան բեմին վրայ: Կեանքը որ մեզի բերաւ Քրիստոս իրական կեանքն է, հարուստ հոգեւոր եւ բարոյական մթերոյով:

Պատմութիւնը յարատեւ պայքարը եղած է նիւթի եւ հոգիի միջեւ: Քրիստոնէութիւնը գերադասեց հոգեկանը, առանց բոլորովին անտեսելու նիւթականը: Հակառակ քրիստոնէութեան անօրինակ ծաւալումին, տակաւին աշխարհի մէջ կը շարունակուին խլրտումները, պատերազմները, առեւանգումները, սովը եւ հանոյապաշտութիւնը: Ինչպէ՞ս կատարել ախտահանաչումը այս բոլոր ժխտական երեւոյթներուն: Հարցը, ներքին բարեկրօնական հարց է: Քրիստոս մեզ ներքնապէս վերանորոգեց իր շինիչ եւ կենսատու պատգամներով: Քրիստոս ոչ միայն խօսեցաւ, այլ նաեւ ապրեցաւ իր արտայայտած գաղափարները: Նոյնիսկ քրիստոնեայ աշխարհին մէջ այսօր ցաւալի ենդ մը կայ, խօսքի եւ ապրումի միջեւ: Սկզբնական քրիստոնեաները այդպէս չէին.

իրենց ապրած կեանքը, կենդանի օրինակն էր իրենց պատգամին, եւ այդ էր որ փոխեց պատմութեան անիւր եւ այդ իսկ պատճառով անոնք կը զանազանուին իրենց շրջապատի հեթանոս բազմութիւններէն, որոնք մատնանշելով զիրենք կ'ըսէին. «Տեսնէ՛ք թէ ինչպէ՞ս եւ ո՞րքան քրիստոնեաները զիրար կը սիրեն»: Անոնք եղան լուսատու փարոսները մեր քրիստոնէական կենցաղին, եւ այս բոլորը եղաւ զոհողութեան, ինքնագրկումի եւ նուիրաբերութեան ոգիով: Անոնք լիեցին հին մարդը, իր եսասիրական եւ մեղանշական ձգտումներով, եւ հագան նոր մարդը իր այլասիրութեան եւ զոհողութեան ոգիով:

Արծաթասիրութիւնը եւ ազահութիւնը արմատն են բոլոր չարիքներուն: Ամէն օր, մամուլէն եւ հեռատեսիլէն ականատես կ'ըլլանք նիւթի բազինին երկրպագուներուն, որոնք անտեսելով ամէն բարոյական արժէք եւ սրբութիւն, կ'ապականեն ներկայ երիտասարդ սերունդին թէ նկարագիրը եւ թէ հոգին, իրենց նիւթապաշտական ուսուցանողութիւններով: Ջինուած քրիստոնէական բարոյականով, հարկ է պայքարիլ, մարդկութեան ապագան ֆանդոդ այս ուժերուն դէմ: Կեղծ ազատութեան այս մունէտիկները, նիւթականը կը գերադասեն հոգեկանէն:

Ազատութիւնը առանց պատասխանատուութեան, մեզ կ'առաջնորդէ դէպի խորխորատ: Գիտութիւնը բազմապիսի բարիքներ բերաւ մարդկութեան, բայց, որպէս զի իր առաքելութիւնը արդարանայ, պէտք է առաջնորդուի բարոյական սկզբունքներով:

Նոր բացուող տարին, մեր առջեւ կը դնէ պարտաւորութիւններ: Նորահաս

սերունդին բարոյական կրթութիւնը: Դրոշմել մեր երիտասարդներուն մէջ, պարտականութեան եւ գոհաբերութեան ոգին: Կառչիլ հոգեւոր եւ բարոյական արժէքներուն: Կ'ապրինք սպառողական ընկերութեան մը մէջ, ուր շատ անգամ այս կէտերը կ'անտեսուին: Նպատակակէտերու այս ժխորին մէջ, յարկ է յստակ եւ մեկին կեցուածք ունենալ: Մեր Տէրը կը պարգեւէ մեզի այդ լեցուն կեանքը որուն մենք բոլորս չեքմ բաղձանքը ունինք:

1997ի սեմին կանգնած, կը մաղթեմ Սրբոց Յակոբեանց զինուորեալ Միաբանութեան, արիութիւն եւ յարատեւութիւն իրենց սրբազան առաքելութեան մէջ, եւ իր ֆաշակորով Գահակալին, առողջութիւն, արեւշատութիւն եւ երկար կեանք, միաբանութեան բոլոր անդամներով եւ ժողովուրդով իրագործելու համար ազնիւ եւ ազգաշէն գաղափարներու պակուսմը:

ԱՆՈՒՇԱՒԱՆ Ծ. ՎՐԴ. ԶԴՋԱՆԵԱՆ

ՅԱԿՈՒՅՍ ՏԵԱՌՆԵՂԲԱՅՐ

Աստուածաշնչական սուրբերէն Յակոբոս Տեառնեղբայր եւ Յակոբոս Զեքեղեան առաքելներ յատուկ յարգանք կը վայելեն Հայ Եկեղեցիէն, քանի որ նուիրապետական մեր Աթոռներէն Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Մայր Տաճարը կառուցուած է անոնց անիւններուն վրայ, եւ այս իսկ պատճառով կը կոչուի «Սրբոց Յակոբեանց Տաճար», իսկ միաբանութիւնը՝ «Սրբոց Յակոբեանց Միաբանութիւն»:

Սակաւ է մեր ծանօթութիւնը Յակոբոս Տեառնեղբոր մասին: Նոր Կտակարանէն գիտենք, որ երբ Յիսուս իր առաքելութեան ժամը հասած համարեց, լքեց ատաղձագործի իր կեանքը եւ սկսաւ քարոզչութեան: Անոր եղբայրները չեն հաւատար իրեն (Յովհ. է. 5) եւ ինքնացած կը համարեն զայն (Մարկ. Գ. 21): Յիսուս անոնց ժխտական դիրքորոշումին ու ընթացքին համար ըսաւ «եւ մարդուն թշնամիները իր տնեցիները պիտի ըլլան» (Մատթ. Ժ. 36): Սակայն, Դուկաս կը վկայէ թէ Յիսուսի համբարձումէն ետք երբ առաքելներ իրենց բնակած վերնատունը

վերադարձան, հոն ներկայ եղած են նաեւ Յիսուսի մայրը եւ եղբայրները (Գործք. Ա. 14):

Յակոբոսի կեանքը փոփոխութեան կ'ենթարկուի երբ Յիսուս անոր կ'երեւի Յարութիւնէն ետք (Ա. Կորնթ. Ժե. 7: Այս երեւումը պատճառ կ'ըլլայ Յակոբոսի դարձին. ան այլեւս հաւատարով Յիսուսի աստուածութեան, դարձի կը բերէ նաեւ իր եղբայրները ու բոլորը միասին Ս. Հոգին կը ստանան Հոգեգալստեան օրը (Գործք. Բ. 4):

Երեւման դէպքին պատմութիւնը անյի մանրամասն նկարագրուած կը գտնենք Յերոնիմոսի գործին մէջ (Տէ Վիրիս Իլլըուդրիպուս 2). հեղինակը զայն ընդօրինակած է «Աւետարան ըստ Երրայեցւոց» կորսուած պարականոն գիրքէն. —

«Տէրը, երբ կտաւեայ հագուստը ֆահանայապետին ծառային տուաւ, Յակոբոսի երեւցաւ (որովհետեւ Յակոբոս երդում ըրած էր հաց չուտել, այն ժամէն ասդին երբ ըմպած էր Տիրոջ բաժակէն, մինչեւ զԱյն մեռելներէն վերստին յարուցեալ

չտեսներ) : Քիչ ետք Տէրը ըսաւ՝ «ինձի սեղան մը եւ հաց բերէ՛ք» : Եւ անմիջապէս կ'աւելցուի . ան առաւ հացը, օրհնեց եւ կտրելէ ետք Յակոբոս Արդարին տուաւ եւ ըսաւ . «ո՛վ եղբայրս, կե՛ր հացդ, որովհետեւ Մարդու Որդին մեռելներէն յարութիւն առաւ» :

Դուկասի եւ Պօղոսի գրութիւնները ի յայտ կը բերեն ու կը փաստեն Յակոբոսի խաղացած կարեւոր դերը նախնական եկեղեցւոյ պատմութեան մէջ : Պետրոս եւ Յովհաննէս առաքելներուն հետ ան եղած է առաջին ֆրիստոնէական եկեղեցիին սիւններէն մին . եւ ըստ աւանդութեան ան Յիսուսի կողմէ նշանակուած է առաջին եպիսկոպոսը Երուսաղէմի եկեղեցիին :

Յակոբոս Տեառնեղբայր մեզի կը ներկայանայ պարագլուխը Երուսաղէմի ֆրիստոնէական եկեղեցիին հրէական խումբին, մինչ Պօղոս Առաքել կը գլխաւորէ անոր հեթանոսական թելը : Պետրոս աշխատած է այս երկու հատուածներուն գաղափարաբանութիւնը հաւասարակշռել : Առաջին խմբակցութիւնը հեթանոսութենէ դարձող ֆրիստոնէաներէն կը պահանջէին խստօրէն կիրարկել Մովսիսական օրէնքներն ու հրէական սովորութիւնները, մինչ Պօղոս եւ անոր գործակիցները ատիկա արգելք կը նկատէին ֆրիստոնէութեան տարածման : Երուսաղէմի Առաջին Առաքելական ժողովին որպէս Ատենապետ, Յակոբոս իր խոհական կեցուածքով յարուցուած վէճը կը լուծէ ըսելով . «ես իրաւունք կը սեպեմ ինձի՝ նեղութիւն չտալ անոնց, որոնք հեթանոսներէն կը դառնան Աստուծոյ» (տես Գործք. ԺԵ .) :

Եւսեբիոս յոյն պատմագիրին վկայութեան համաձայն, Յակոբոս Տեառնեղբայր եղած է բարեպաշտ անձնաւորութիւն մը . թէ հրեաներ եւ թէ ֆրիստոնէաներ զինք սուրբ անուանած են որովհետեւ «ան մօրը որովայնէն սուրբ էր, գինի եւ ոգելից ըմպելի բնաւ չէ խմած, ոչ ալ միս կերած

էր . ոչ մէկ անելի դպած էր իր գլխուն, ան ինքզինք բնաւ իւղով չէր օծած, եւ բաղնիք չէր առներ : Ծունկերը ուղտի ծունկերու նման կարծր էին, որովհետեւ յարատեւօրէն կ'աղօթէր եւ կ'աղերսէր Աստուծոյ ժողովուրդին հանդէպ բարեգութ ըլլալ : Իր բարեպաշտութեան համար ԱՊՒԱՐԸ կոչուած էր ...» (Եկեղ . Պատմ . Բ . 23) :

Հրեայ կրօնական իշխանութիւնը կասեցնելու համար ֆրիստոնէայ դարձողներու խումբերամ բազմութիւնը, կը դիմէ իրենց վստահութիւնը շահած Յակոբոսի, որպէս զի Տեառնեղբայր աշտարակէն յայտարարութիւն մը ընէ ու ժողովուրդը ետ կեցնէ ֆրիստոնէայ դառնալէ . սակայն, երբ ան համոզումով կը բացազանչէ թէ «Յիսուս Մեսիան է եւ Աստուծոյ Որդին, որ այժմ նստած է Աստուծոյ աջ կողմը եւ պիտի գայ դատելու աշխարհը արդարութեամբ» (նոյն անդ), կատարած հրեաներ այս գրպարտիչ խօսքերը լսելով ու իրենց ակնկալութիւնը ձախողած համարելով, Յակոբոսը աշտարակէն վար նետեցին ու ֆարկոծեցին : Ան իր հոգին աւանդեց երբ մէկը թափչի հարուածով փշրեց անոր գանկը :

Իսկ Յովսէփոս՝ հրեայ պատմիչը, Յակոբոս Տեառնեղբայր մահուան պատճառ կը նկատէ Անանոս ֆահանայապետը, որ օգտուելով հռովմէացի կառավարիչ Փետրոսի մահէն (Յ . Ք . 61) դատավարութեան կը կանչէ Յակոբոսը ու իրրեւ օրէնք խախտող՝ ֆարկոծել կու տայ գայն (Հնութիւնք Ի . 9) :

Քրիստոնէական իր հաւատքին համար Յակոբոս Տեառնեղբայր մարտիրոսացաւ . Պարֆլէյի խօսքով «Յակոբոս մեռաւ անունին համար իր այն եղբոր, որուն հետ նախապէս արհամարհանքով վերաբերած էր ... Խաչին զոհագործական սէրը եւ յարութեան ներկայութիւնն ու ոյժն էին որ թշնամի Յակոբոսը փոխակերպեցին այն Յակոբոսին, որ մինչեւ մահ հաւատարիմ եղաւ :

Քրիստոնեան միշտ մարդ մըն է, որուն սիրտը բեկանուած է խաչով, եւ որուն կեանքը վերանորոգուած է յարութեամբ» (Տասներկուրդ, էջ 116-117):

Յակոբոս Տեառնեղբօր մարմինը քաղուած է իր տան պարտեզին մէջ (այժմու Սրբոց Յակոբեանց Տաճարը). հոն նաեւ քաղուած է գլուխը Յակոբոս Ձեքեղեան Առաքեալին, որ սուրով սպաննուեցաւ Հերովդէս Թագաւորին կողմէ Յ. Ք. 44 թուին (Գործք. ԺԲ. 2):

Հայց. Եկեղեցին կը դաւանի որ Յիսուս միածին զաւակն է Յովսէփի եւ Մարիամի: Նոր Կտակարանին մէջ յիշուած Յիսուսի եղբայրները եւ քոյրերը. անոր մօտիկ ազգականները եղած են (Մատթ. ԺԳ. 53-58, Մարկ. Զ. 1-6): Յիսուսի եղբայրներուն հարցը հետեւեալ ձեւով մեկնարանած է հմուտ աստուածաբան եւ եկեղեցական իրաւագէտ Մաղաքիա Արք. Օրմանեան.-

«Եղբայր կոչման խիստ իմաստին հետեւելով, հիմներէն ոմանք այս չորսերը (Յակոբ, Յովսէփ, Յուդա, Սիմոն) իբր Յիսուսի հարազատներ ընդունեցան, Յովսէփի եւ Մարիամու զաւակներ, Յիսուսի ծնունդէն ետքը եղած, քանի որ Յիսուս կոչուած է անդրանիկ (Ղուկ. Բ. 7). սակայն ասով եղծած կ'ըլլային Աստուածածնայ կոյս յետ ծննդեան եւ միշտ կոյս լինելուն պատիւը: Ասոր համար ուրիշներ ըսին թէ Յովսէփ առաջին ամուսնութենէ յիշեալ չորսերը ունեցած էր, եւ Մարիամ իրեն իբր երկրորդ կին կը սեպուէր, որով Յիսուս յայս հանրութեան միւս չորսերուն եղբայր կը ճանչցուէր, ինչպէս որ Յովսէփի որդի ալ կը կոչուէր: Այս դրութիւնն ալ Յիսուսի ծնունդը իր եզական եւ գերազանց պատիւին մէջ չի պահեր: Կը մնայ ուրեմն Յիսուսի եւ չորս Տեառնեղբայրներուն ազգակցութիւնը ոչ հարազատ եղբայրութեան, այլ պարզ համարիւն եղբայրութեան մէջ փնտռել, ինչպէս որ սովորաբար եւ մանաւանդ Արեւելի մէջ իրարու եղբայր եւ քոյր կը կոչուին եղբայրներու եւ քոյրերու զաւակներ ... (Համապատում, էջ 182):

ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

Քրիստոսի հրաշագործութիւնները

«Ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ»

(Տէր Յիսուս Քրիստոս, Մտք. Թ 29)

Քրիստոսի հրաշագործութիւնները աստուածային վառ սիրոյ յատկանիշներն են: Նա, որ ըստ Պօղոս առաքեալի՝ սիրոյ եւ օրէնքի ամբողջացումն է (Հռոմ. ԺԳ 10), կենդանի կերպով ցոյց է տալիս մեզ Իր աստուածային ողորմածութիւնը գործելով անթիւ, անհամար հրաշքներ, բժշկելով հիւանդներին, դիւահարներին, օտարաժողովներին, խուլներին, կոյրներին, եւ նոյն իսկ մեռելներին է հրամայում կեանքի դառնալ (Յովհ. ԺԱ 36): Նա, որ պատուիրեց սիրել Տէր Աստուծոյն բոլոր սրտով, հոգով, մտքով եւ ամբողջ գորութեամբ, հաստատելով առաջին եւ մեծ պատուիրանը, Խնքն իսկ կատարեալ օրինակ հանդիսացաւ մեզ՝ Իր հրաշագործութեամբ, որովհետեւ այստեղ է, որ երեւում է Տիրոջ անհուն սէրը՝ մարդկային թոյլ եւ տկար ազգի հանդէպ: Այն աստիճան, որ հրեաներն են անգամ նկատում. «Տեսէ՛ք որքա՛ն է սիրում» (Յովհ. ԺԱ 36):

Առտնին տրամաբանութեան դէմ մի երեւոյթ է հրաշքը: Մարդ, որ չի հաւատում աստուածային կենդանի ու կենդանարար՝ արարչական կենսունակ գորութեան, չի կարող ըմբռնել հրաշագործութեան իմաստը եւ մանաւանդ այդ իրողութեան մէջ տեսնել Տիրոջ անձնաւոր ներկայութիւնը:

Առաքինութիւնների սկիզբն՝ Աստուած, համայն բարեգործութիւնն Իր մէջ ընդգրկող մի էութիւն, Իր բարի կամքն է արտայայտում հրաշքներով: Երբ Յովհաննէս Մկրտիչը իր աշակերտներին ուղարկում է Քրիստոսի մօտ վկա-

յութիւն ստանալու նպատակով, Յիսուս ուղարկուածների դիմաց շատերին բժշկում է հիւանդութիւններից, ցաւերի հարուածներից, չար ոգիներից եւ բազմաթիւ կոյրների տեսողութիւն շնորհում: Ապա դառնալով պատասխանում է նրանց. «Գնացէ՛ք, պատմէ՛ք Յովհաննէսին, ինչ որ դուք տեսաք եւ լսեցիք. կոյրերը տեսնում են, կաղերը՝ ֆայլում, բորոտները մաքրում են, խուլերը՝ լսում, մեռելները յարութիւն են առնում, աղ-փատները Բարի լուրն են լսում. եւ երանի՛ նրան, ով իմ պատճառով չի գայթակղուի» (Ղուկ. է 19-23):

Քրիստոս հրաշագործութեամբ ցոյց է տալիս Իր ամենագորութիւնը եւ բացարձակ կատարելութիւնը: Ինքն է անաստուածութեան, տգիտութեան եւ խաւարի հալածիչը: Դրա վառ օրինակն է պայծառակերպութիւնը: Աւետարանիչը պատմում է, թէ՛ Նրա դէմքը փայլեց արեգակի պէս, իսկ զգեստները դարձան սպիտակ ինչպէս լոյսը (Մտք. Ժէ 2): Յիշենք նաեւ փոթորկի խաղաղեցումը եւ զարմացած ու սարսափած առաքեալների արտայայտութիւնը թէ. «Ինչպիսի՛ մէկն է սա, որ հողմերն ու ծովը հնազանդում են սրան (Մտք. Ը 23-27):

Իր հրաշքներով Յիսուս հրաւիրում է մարդկային ազգը ապաշխարութեան, հոգեւոր վերելքի եւ հոգեկան պայծառութեան: Երուսաղէմի Պրոքրատիկէ աւագանի մօտ մի տեղ կար, որ երբայերէն կոչւում էր Բեթհեզդա: Տիրոջ հրեշտակը ժամանակ առ ժամանակ յուզում էր աւագանի ջրերը եւ ով որ այդ պահին մտնէր աւագանը՝ բժշկւում էր, հի-

անդուծիւնից նշան անգամ չպահելով (այնտեղ է այժմ լատինաց սպիտակ հայրերի Ս. Աննայի վանքը): Քրիստոս այնտեղ մի անդամալոյծ բժշկեց, որ թէպէտեւ այնտեղ էր, սակայն մէկը չ'ունէր որպէսզի ջրերի յուզուելու պահին իրեն աւազան իջեցնի եւ մինչ նա դանդաղում էր, ուրիշ մէկն էր իջնում: Սրան Յիսուս բժշկեց եւ յետոյ տանարում գտաւ ու սասաց. «Ահաւասիկ առողջացար, այլեւս մի՛ մեղանչիր, որպէսզի մի աւելի չար բան չպատահի քեզ» (Յովհ. Ե 1-15):

Մեղքով մարդ արարածը կեղտոտում եւ ապականում է իր հոգին եւ անարգում ինքն իրեն: Մեղանչելով մարդը փչացնում եւ այլանդակում է աստուածային այն կատարեալ պատկերը, ում պատկերով եւ նմանութեամբ ստեղծուեց, ապստամբելով Նրա դէմ: Զկայ մեղքից աւելի գարշահոտ եւ պիղծ բան: Սակայն հիներից աւելի ծանր պիտի լինի մեր պատիժը, քանզի Հին Ուխտի մարդիկ չ'ունէին Աստուծոյ Միածին Որդու խաչելութեան մեծ ու սքանչելի խորհուրդը, եթէ Տիրոջ մահուանից եւ մեր հաշտութիւնից յետոյ՝ դարձեալ անարգեմէ՛ Նրան մեր ցանկասիրութեամբ, ծուլութեամբ, յիմարութեամբ, բամբասանով, տգիտութեամբ, թերահաւատութեամբ եւ կամ պատշանն չ'ընծայելով: Իւրաքանչիւր քրիստոնեայ կատարելութեան եւ սրբութեան է կոչուած Աստուծոյ կողմից (Մոթ. Ե 48):

Հրաշագործութեամբ Յիսուս ցոյց է տալիս մեզ իր անյիշաչարութիւնը եւ ներողամտութիւնը: Ամենադատաւորն Աստուած անմիջապէս չի դատում մարդկային ազգն, այլ ապաշխարութեան եւ մաքրութեան քննապարհին է կանգնեցնում: Արարչի կամեցածը ողորմութիւն է եւ ոչ գոհ: Ուրեմն չարհամարեմէ՛ նրա բարութեան առատութիւնը եւ ներո-

ղամտութիւնն ու համբերութիւնը եւ յիշեմէ՛, որ Աստուծոյ բարութիւնը մեզ ապաշխարութեան է առաջնորդում: Մեր խստասրտութեամբ ու անզիղջ կամքով՝ մեր դէմ բարկութիւն չդիզեմէ՛ բարկութեան օրուայ եւ Աստուծոյ արդար դատաստանի յայտնութեան օրուայ համար. Աստուծոյ, որ հատուցում է իւրաքանչիւրին ըստ իր գործերի (Հռոմ. Բ 4-11):

Աստուծոյ ստեղծագործ եւ ներգործիչ ուժի մշտական ապացոյցն է հրաշքը: Տիրոջ համար անկարելի բան չկայ: Նա է ամենայն նիւթի, մարմնի եւ հոգու ստեղծիչն ու արարիչը: Իր անձնաւոր խօսքի գօրութեամբ եղան հրեղէնների դասերը: Իրենով է հաստատուել երկինքը եւ երկիրը: Նա՛ է խնամում, պահում եւ պահպանում մեզ այսօր. շնորհելով ուժ, կարողութիւն եւ համբերութիւն: Քանզի այս բանի համար իսկ Յիսուս մարմին զգեցաւ, որպէսզի բարիք գործի. բժշկի բոլոր իրեն դիմող հիւանդներին եւ ցաւագարներին եւ որպէսզի բոլորին տիրի՝ կենդանիներին, հիւանդներին եւ մեռելներին: Ինչպէս գրուած էլ է. «Կենդանի եմ Ես, որպէսզի ամէն ծունկ ինձ ծընրադրի եւ ամէն լեզու ինձ փառաբանի» (Եսայ. ԽԵ 21-23, Հռոմ. ԺԴ 11):

Աւետարանական հրաշքները շեշտում են Յիսուսի աստուածութիւնը եւ երանի՛ այն ազգին՝ որի օգնականը քրիստոնեաների Տէր Աստուածն է: Քրիստոսին սիրողը պէտք է պահի Նրա պատուիրանները (Յովհ. ԺԴ 15): Տէրը տուեց մեզ իր խաղաղութիւնը, վերցնելով մեր ցաւերը իր վրայ, մահուան դատապարտելով մեր յաւիտեանական թշնամուն՝ սատանային: «Զբարձրեալն գ'Քրիստոս արասցուի մեզ ապաւեն, զի ոչ հասցեն առ մեզ



չարք, եւ տանջանք մի մերձեցիկն ի յարկս մեր» (Բարձրեալ Քրիստոսին մեզ ապաւեն անենք, որպէսզի չարիքը մեզ չհասնի եւ տանջանքը չմերձենայ մեր յարկերին), - կրկնում ենք ամէն օր երեկոյեան ժամերգութեան ընթացքին: Հաւատով Քրիստոսին մօտեցողը ցանաչում է հշմատութիւնը: Աղօթքով, պահեցողութեամբ եւ պատուիրանապահութեամբ մարդ բժշկուում է ցաւերից եւ Աստուծոց ողորմութիւն գտնում:

Թո՛ղ բարձրեալն Աստուած օրհնի մեր ազգն ու եկեղեցին անասան պահելով մեզ հշմարիտ վարդապետութեան մէջ, պահպանի մեզ չարից եւ շնորհի մեզ Իր երկնային խաղաղութիւնը, ամէն:

ԷՄՄԱՆՈՒԷԼ արդ. ԱԹԱԶԱՆԵԱՆ

ISRAELI LAW PROHIBITS

*It no more has any place in modern Israel
A Jewish custom of spitting in front of the cross*

It was learnt yesterday from legal sources that the Israeli law condemned an old Jewish custom of spitting in front of the Christian cross, considering that this practice has no longer any place in modern Israel.

The Jerusalem court confirmed this week a law issued by the district court against Moshé Ironfield, who in the year 1995, spat on the ground in front of a cross which the Armenian clergy were carrying in front of the Holy Sepulchre Church in East Jerusalem.

Ironfield believes, like many other fanatic Jews, that he does something right by applying an ancient Jewish custom the aim of which is to express the rejection or ostracism of the Christian religion.

And the spokesman of the Israeli law-courts Moshé Goralı declared that the Jerusalem Court confirmed the law of the district court for a suspended sentence of imprisonment for two months, and a payment of 250 U.S. Dollar fine.

Ironfield appealed against this sentence defending himself by saying that the Jewish religion permits spitting on the cross whenever you see it pass.

But the law court took into consideration the fact that since many religions and communities exist in Israel, therefore it is incumbent on us to show respect to the various communities living in the country.

Menahem Friedman, a teacher of social sciences at the University of Bar Ilan, observed to France Press that spitting in front of the cross, which originally used to be done in secrecy, is an ancient Jewish tradition practised by the European Jews, even if it does not exist in the Jewish Religion.

Furthermore, Friedman observed that the law wanted to show that the status of the Jews during the previous centuries in Europe, when they were facing anti-Semitism, has no bearing whatsoever with the status of the Jews in Israel today where they are the sole rulers.

He then added that the law court declared the following: "Stop behaving as though you were Jews in Vienna, but behave like Jews residing in Israel."

Translation from the Arabic daily Newspaper "Al Kuds"
Dated 22 February 1997

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՀԱՐՈՒՏԻ ՈՐԴԻՈՅՆ ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆԸ

- 68) Այս Յուպիանէին շնչից կեանք մը նոր.
Քաղցր, ազատ ոյժեր իր մէջ զօրացան,
Քաղցրացաւ նաեւ առտըւան համբոյր՝
Որով ամենայն օր կ'ողջունէր զայն,
Իրեն՝ բարեմիտ շրթներն էին միայն,
Ազնիւ հպումներ միտք սըրտին անոր, բայց
Բոց կու տար այրող, լափող ջերմութեան,
Մաշող հառաչով կարծես օրհնուած՝
Ոչ թէ ըստորին մըտածումներ ըլլային բերած:
- 69) Կեանքն իր երկար մարտ էր մտայրդացման,
Թըշնամուն դէմ կամ սիրելուն վտարուած,
Միտքն իր կասկածի ապաստանարան.
Գոց՝ իրեն զոհին միայն նըփրած.
Գըթագուրկ սըրտով իր զոհն էր ընտրած.
Մոլեգնած էր ան, ով կըրնար գիտնալ՝
Ինչո՞ւ պատճառը անլուծ մընացած.
Բայց խենթ էր, հիւանդ էր ան, վըշտահար
Այն աստիճան որ Հիւանդութիւնըն ինքզինքն ցոյց կու տար:
- 70) Այսպէս ներշնչուած՝ անկէ կու գային,
Զերթ պիթեանի հին միսթիկ քարայրէն՝
Պատգամներ որոնք աշխարհն կ'այրէին,
Իսպառ փըրկելու թագակիրներէն,
Ֆըրանսան չէր միթէ՞ առաջ բոլորէն՝
Կըրող բնածին իր բըռնապետութեան
Շըղթաներ ամուր, տարիներ երկար,
Մինչեւ որ ինքն ու իրիններու ձայն
Գըրզըռեց գայրութիւն հետեւանք վախի չափազանցութեան:
- 71) Անոնք ինքզինքնին ահի յուշարձան
ըրին, ըստ իրենց փուճ, հին տեսակէտին.
Ժամանակին հետ ծնած-քողն պատռեցին
Որ իրենց ճեղքած այդ քողին ետին
Պահուածքներն ցուցնեն ամեն անհատին
Գէշին հետ լան ալ որ իյնան այնպէս.
Աւերակ մնայ միայն՝ որմէ կառուցուին
Զընտաններ, գահեր որ, առաջուան պէս,
Նոյն հիման վրայ սնափառութիւն ելլէ հանդէս:

(շարունակելի)

LORD BYRON
Թրգմն. Մուրատ Մանուկեան

THE VEIL UNVEILED

For 50 years, I have been asking
The same question of You.
The answer has always evaded me.
Perhaps, I have been too deaf to hear
Or too dumb to understand,
Or perhaps the cacophony of my pleas,
My incessant complaints, turned you off.

I asked for a sign
But I never saw one.
Was it because
I was too blind to see,
Or seeing, too foolish to understand?
They all kept telling me
Your voice is everywhere
The signs are everywhere;
Yet I never heard Your voice,
And never saw a sign.

Tonight, out of the blue,
Sitting by my window, doing nothing,
Just turning the self off,
I can finally hear and I can finally see.
You are there, always were, always have been, always will be.

ՔՕՂԱԶԵՐԾՈՒԱԾ ՔՕՂԸ

4+4+4

Յիսուսն տարի նոյն հարցումով քեզ կը դիմեմ,
 Գու պատասխանն ինձմէ ընդմիջտ է խուսափեր:
 Գուցէ ես խուլ էի այնքան՝ չը լըսելու,
 Կամ բըթամիտ՝ ըմբռնելու, եւ կամ գուցէ
 Խընդրանքներուս այն խժալուր, աններդաշնակ
 Զայները խորթ, եւ անդադրում դժգոհանքներս,
 Ըստիպեցին որ դուսն ինձմէ երես դարձնես:

Կը խնդրէի, կը փնտռէի քեզմէ նըշան
 Կամ ապացոյց, ոչինչ սակայն կրցայ տեսնել:
 Արդեօք ե՞ս կոյր էի այնքան՝ չը տեսնելու,
 Թէ տեսնելով՝ յիմա՛ր այնքան՝ չըմբռնելու:
 Ամէնքն ինծի կը պնդէին թէ ձայնը քու
 Ամէն տեղ էր, թէ ամէն կողմ քու նշաններն
 Ինձ կը նային. սակայն երբեք քու ձայնը ես
 Զը լըսեցի, ոչ մէկ նըշան ես չը տեսայ:

Եւ այս գիշեր, ըսես յանկարծ, անակնկալ,
 Պատուհանիս մօտիկ նստած, եւ անըզբաղ,
 Իմ անձը ես մէկ կողմ թողած ու մոռացած,
 Ես վերջապէս կրնամ լըսել, ես վերջապէս
 Կրնամ տեսնել: Այնտե՛ղ ես դուսն, եւ մշտապէս
 Այնտե՛ղ էիր, եւ միշտ կայիր, եւ մշտապէս
 Պիտի լինիս:

It was the veil, always the veil,
That my self wrapped around itself,
That veiled Your countenance from me.

After tonight,
There can be no more questions
Nor any need for a sign.
Before the question is asked,
The answer is given
And looking for a sign,
Is like having another face over and above
The one you wear.
It is all so simple,
It is all so clear:
We have always been face to face.

If ever it should happen
That I can see no more
Or hear no more
It will simply be
Because I have acquired another veil.

Arthur Hagopian
August 1995

Շրդարշ-ֆողն էր այնտեղ կախուած, եւ միշտ այդ ֆողն
էր որ իմ «Եսն» իր շուրջ պատած, նաեւ ինֆզիմֆն
Ամբողջ անոր մէջ փաթաթած, երեսը բու
Կը յաջողէր ինձմէ ընդմիշտ ֆողածածկել:

Այս գիշերէն յետոյ, այլեւըս հարցումներ
Պիտ' չը դրուին, եւ ոչ կարիք՝ նշաններու:
Նախֆան հարցումը՝ պատասխանն արդէն տրուած
Պիտի լինի, իսկ փնտրոտուիք նշանի՝
Պիտ' նըմանի դէմք մը ուրիշ աւելցնելու
Դէմքին վըրայ որ դուն ունիս եւ կը կըրես:
Հիմա այնֆան պարզ՝ ամէն ինչ, հիմա այնպէս
Յստակ-բիւրեղ պայծառացած ալ կ'երեսան:
Մենք միշտ եղած ենք իրարու դէմ յանդիման:

Եթէ երբեք պատահի որ չը կարենամ
Տեսնել նորէն, եւ կամ նորէն չը կարենամ
Յստակ լըսել, այդ պարզապէս նշանակէ
Պիտի թէ ես կրկին ուրիշ շրդարշ-ֆողի
Մէջ փաթաթած ինֆզիմֆս նորէն ֆողածածկել
Ես կը փորձեմ:

Արթիւր Յակոբեան

Թրգմն. Շէն-Մահ
10 Օգոստոս 1995
Երուսաղէմ

ՀԱՅՈՒ ՑԱԻ

Բըլուրներուն վէտվէտուն, որ հեռուէն կը գրկեն
 Երուսաղէմը խոցուած, մայրիներէն, ծառերէն՝
 Կան աւելի քան ու ժայռ ամենուրեք, եւ որոնք՝
 Երբ քարքառին անվեհեր, ինչե՛ր ունին Աստուած իմ,

Հին դարերէն պատմելիք, վըրիժառու ազգերու
 Ու չարախինդ մարդերու արարներէն ոնիրի.
 Բայց կը լըռեն քէն ըրած կարծես մարդոց դէմ բոլոր
 Կոխըռոտեցին անողոք, որոնք կուրծքե՛րը իրենց:

Մթընշաղին կը քայմ երբ եզերքէն քաղաքին,
 Ու կը դիտեմ քարակոփ այս քարձունքէն վիրաւոր,
 Բըլուրներու վրայ հեռուն՝ խոնարհ լոյսեր կ'երեւին,
 Բիրտ ու խըրոխտ՝ դըրացի լոյսերուն մօտ՝ մեկուսի.

Թըշնամիներ են անոնք. մին՝ կեղեքուած է միւսէն.
 Տըկար լոյսերը սակայն, կը վըկայեն լըռելեայն
 Ողբերգութի՛ւնը վերջին, որ անցաւ այս վայրերէն,
 Եւ արցունքներն են կարծես՝ յափըշտակեալ հողերու

Աննարութեան յանձնուած, որոնք կորած են ի սպառ,
 Դարձած գողօն ու աւար, արդարութեան անուռով
 Տիւ եւ գիշեր քարքառող առջեւ այդ մե՛ծ ազգերուն:
 Իսկ ո՛չ միայն կ'ուշանայ արդարադատ հատուցումն

Այլ կ'աղօտի ամէն օր հատուցման յո՛յսն անպաշտպան:
 Կարելի՞ է միթէ արդ՝ չը կարեկցիլ տեղահան
 Բընիկներուն այս աննար, երբ մարդ ունի խի՛ղն ու խա՛յթ
 Երբ հա՛յ մըն է մա՛նաւանդ տո՛ւնն իր՝ նո՛յնպէս կորուսած:

ԱՆԵԼ

ՏԻԲԵՐԱԿԱՆ

Միրտ մը կարծես բարախող,
 Փըրթած, ինկած երկընթէն...
 Միրտ մը կապոյտ, քնարուող
 Երկնի անտես մատներէն...:

Միրտն է այդ Միրտն Աստըծուն,
 Որ ինկաւ վար դըրախտէն
 Այն պահուն իսկ երբ ծառէն
 Կերան պտուղն մեղքերուն...:

Միրտ մը կապոյտ, անարին,
 Միրտ մը հալած վիշտերէն,
 Նետուած սըրտին վիհերուն
 Մեղքի լեռներն իր բանտն են...:

Բագրատունի

ԴԻՄԱՆԿԱՐՍ

Ոմանք կարծում են, թե կանգուն մեկն եմ,
 Ու չեն նկատում տկարությունս:
 Ոմանք կարծում են ահագին մեծն եմ
 Ու չեն էլ տեսնում խեղճ մանրությունս:
 Եվ թող գան, տեսնեն՝ փորձության ժամին,
 Թե ինչպես եմ ես մեկից խեղճանում,
 Ու սև փորձության փոթորկոտ քամին
 Մտքերս առնում և ո՞ւր է տանում:
 Թշնամիս գիտե, թե ես որտեղի՞ց
 Կամ էլ՝ ինչո՞ւ եմ իսկույն խեղճանում:
 Միայն Հիսուսն է այդ ահեղ ձորից
 Փրկարար ձեռքով ինձ վերև հանում:
 Դե, ինչ էլ լինի, մարդ եմ, հողածին
 Ու միշտ ենթակա՝ սայթաքելու ցած:
 Թող որ ինձ պահի Որդին Միածին,
 Ես վերքեր ունեմ դեռ չըսպիացած...:

ՄԻՇԱ ՍՎԱՐԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԼԵԶՈՒԻ ՊԱՏԿԵՐԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բան ոչ է բարբառ լեզուոյն, այլ՝ խոկումն մտացն:
ՆԵՐՄԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Ա. Բառի տարողութիւնը պատկերաւորութեան

Թերեւս ոչ մի բան այնքան չի յուզել Նարեկացուն, որքան բանաստեղծական բառի ստեղծագործական երկունքը: Հայոց լեզուն նա վերակերտել է ըստ իր հանճարի տարերփի: Նա չի գրել պատմական, ժամանակագրական, վիպական երկեր: Նրա լեզուն գերազանցապէս դրսեւորուել է ֆնարարեղբայրութեան մէջ: Զնայած դրան՝ Նարեկացին գրաբարի բառապաշարը հարստացրել է մեծագոյն չափերով: Նրա նորակազմ բառերի մի զգալի մասը այսօր էլ կենդանի եւ գործածական է գրական լեզուի մէջ: Իրրեւ լեզուաշինարար՝ Նարեկացին մնում է անհամեմատելի բարձրութիւն: Եւ այնուհանդերձ նրա աւանդածը մի տեսակ փչ է թվում իր հանճարի ընդգրկման ծիրից: Շատ բան նա տարել է իր հետ, իսկ թողածի մասին իրենց յատուկ համեստութեամբ նա կարող էր ասել. «Ահա զսակաւս ի բազմացն, զի նոֆօֆ եւ զայսն իմաստասիրեսչիք»:

Գրիգոր Նարեկացու հմայփի շառաւիղն սկսում է նրա լեզուի եռիտութիւնից եւ բանաստեղծականութիւնից: «Նարեկացու պաշտամունքն ու ժողովրդականութիւնը հիմնականում կապուած է նրա բանաստեղծական խօսքի վարպետութեան հետ» (1), - գրել է լեզուաբան Վ. Առաքելեանը: Սա

Նարեկացու ստեղծագործութեան բովանդակութեան անտեսում չէ, այլ բովանդակութեանը համապատասխան լեզուի, ոճի, պատկերաւորութեան արժանիքների գնահատութիւն:

Նարեկացու լեզուն ինձ հետաքրքրում է նրա գեղարուեստական խօսքի պատկերաւորութեան տեսանկիւնից: Քերականական կառուցուածքի, ձեւաբանութեան, շարահիւսութեան, հնչիւնաբանութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները կարելի էր են լեզուաբանի համար: Գրականագէտի խնդիրը ուրիշ է: «Գրականագէտը չի հետազօտում լեզուի քերականական կառուցուածքը - գրել է էդ. Զրբաշեանը - այլ միայն ֆննում է լեզուի գեղարուեստական կիրառութիւնը, նրա դերը պատկեր ստեղծելու գործում: Զեւաբանութեան, շարահիւսութեան կամ բառապաշարի հարցերը նրան զբաղեցնում են սոսկ իրրեւ հեղինակի պատկերաւոր մտածողութեան արտայայտութիւններ: Լեզուաբանն ուսումնասիրում է լեզուի ընդհանուր օրէնքներ, իսկ գրականագէտը՝ նրանց իւրայատուկ դրսեւորումը կոնկրետ ստեղծագործութեան մէջ» (2):

Գրական ստեղծագործութիւնը խօսքի արուեստ է: Զեւի մէջ չկայ մի տարր, որ

կապ չունենայ բովանդակութեան հետ: Պատկերը կեանք է առնում բառի շնորհիւ, գեղարուեստական ստեղծագործութիւնը՝ պատկերներին:

Նարեկացու լեզուն միատարր չէ, այլ ներկայացնում է զարգացման տարբեր մակարդակներ: Այդ երեւոյթի մէջ մի կողմից արտացոլուել է նրա՝ իբրեւ բանաստեղծի լեզուի եւ գրելածեւի զարգացման ուղին, միւս կողմից՝ նրա լեզուի եւ ոճի բիրեղացման աւարտը: Նարեկացին գործ է ունեցել հայոց լեզուի երեք իրողութիւնների հետ: Առաջին, գրական լեզուի հետ, որը նրա կրթութեան լեզուն էր, երկրորդ, ժողովրդական կենդանի խօսակցական բարբառի հետ, երրորդ, ժամանակի գրական ցաւակի ու պահանջների հետ, որոնց հետեւում էին տարբեր հոսանքների գրողներ: Նարեկացու համար լեզուի գանձարան էր դասական գրաբարը: Հոգեւոր կենդանի մթնոլորտ էր Աստուածաշնչի լեզուն: Նա շատ քան է վերցրել Ագաթանգեղոսի ճոխ ու շռայլ փոխաբերութիւններից, Խորենացու սեղմ ու ստոյգ արտայայտութիւններից, Կորիւնի բառակազմական հարուստ ձեւերից, Դաւիթ Անյաղթի փիլիսոփայական յստակ մտքերից ու սահմանումներից, Փաւստոս Բուզանդի վիպերգական պատումների ժողովրդական կենդանի ակունքներից, Ղազար Փարպեցու նարտասանական ձեւերի շարահիւսական բազմազանութիւնից, հոգեւոր երգերի, ներբողների քնարական բազմերանգ տարրերից եւ այլն: Իր ժամանակակիցներից Նարեկացին մասամբ հետեւել էր հօր՝ Խոսրով Անձեւացու մեկնաբանական ոճի պարզութեանը եւ ուսուցչի՝ Անանիա Նարեկացու բանաստեղծական լեզուի գեղեցիկ ոճին:

Նարեկացու լեզուի մասին տարածուած է այն կարծիքը, թէ բարդ է եւ խրթին: Ըստ իս՝ սա ճիշդ է մասամբ: Իսկ միթէ՞ պարզ է Աթազաթանգեղոսի, Կորիւնի,

Յովհան Օձնեցու, Թէոդորոս Բոթենաւորի եւ ուրիշների լեզուն: Նարեկացին չի ձգտել խրթին ու բարդ լինելու: Նա բանաստեղծ է, իսկ բանաստեղծական խօսքն ունի շարահիւսական աւելի հարուստ եւ ուրիշական աւելի բարդ կառուցուածք: Բանաստեղծութիւնը ենթադրում է ոճի վսեմութիւն եւ բառիմաստների հարստութիւն: Նարեկացու Մատեանը մենախօսութիւն է, աղօթք, օրհներգութիւն, եւ նա թարգմանում է իրեն: Նա խօսում է լսելի, իսկ սա նշանակում է, որ նա գրել է այնպէս, ինչպէս թելադրել է մտքի քնական հոսքը՝ տարեբային՝ անմիջական, անկաշկանդ: Բարդութեան տպաւորութիւնը քիւում է նիւթի բովանդակութիւնից:

Նարեկացու լեզուի խրթնութիւնը Գ. Աւետիքեանը տեսել է երեք իրողութեան մէջ. ա) անծանօթ, բարդ բառերի գործածութիւն, որոնք կարօտ են բացատրութեան. բ) շարահիւսական ձեւեր, որոնց մէջ «թէպէտ եւ ընդելական իցեն բառքն, սակայն ըստ ոչ սովորութեան բերելով զիւրեանց շարամանութիւն յոն գերապանծ՝ մոայլ ի բանսն արկանեն» (3), գ) իմաստի, ասուածի մթութիւն, որ արտաքին պարզութեան մէջ ընթերցողին կարող է թուալ «թէ ըմբռնեաց զիմաստս, այլ ոչ ըստ գրողին մտաց» (4):

Նարեկացու լեզուի եւ ոճի բարդութիւնն ընդգծել են Ստ. Մալխասեանցը, Ե. Դուրեանը, Մ. Աբեղեանը, Հր. Անառեանը եւ ուրիշներ: Լեզուի եւ ոճի այդ առանձնայատկութիւնը մասամբ վերագրուել է ժամանակի ցաւակին, նարտասանական ձեւերի նախասիրութեանը, խօսքի գեղման դէպքերին: «Ըստ հին ժամանակի ցաւակի, - որքան խրթին, դժուար հասկանալի լինեք խօսքը, այնքան աւելի խորամիտ ու հետաքրքրական էր դառնում» (5): Մալխասեանցի կարծիքով՝ իր բարդութեամբ հայ հին մտեւնագրութեան մէջ առաջին

տեղը բռնում է Մատեանը, յետոյ՝ Գրիգոր Մագիստրոսի նամականին: Տաղերի մէջ Նարեկացու գործածած մի ֆանի «ինքնահնար կամ անգործածական բաները» եւ արուեստական եւ խորհրդաւոր արտայայտութիւնները եւս Աբեղեանը բացատրել է «ժամանակի հաշակի համեմատ իրթնաբանութեամբ» (6):

Անառեանը գտնում է, որ «Երեք տեսակ լեզու ունի Նարեկացին. 1) հոխ, փարթամ, պերն գրաբար, 2) արդի աշխարհաբարին գրեթէ նման պարզ ու հասկանալի լեզու, 3) իր ժամանակի գաւառական բռնորով լցուած մի լեզու, որ մեզ համար անհասկանալի է մնում» (7):

Վ. Առաքելեանը հաւաստում է, որ Մատեանը «պարունակում է մօտ եօթ հազար բառ, չունի անհասկանալի եւ եզակի գործածական արմատ բառ, որ մեզ անծանօթ լինի, իսկ տաղերի մէջ այդպիսի բառերը հասնում են մէկ տասնեակի» (8): Անշուշտ, եղել են այդ բառերի բացատրութեան փորձեր, բայց դա այլ հարց է (9):

Այսպիսով, Նարեկացու լեզուն ունեցել է զարգացման իր փուլերը: Պարզութիւնը խորթ չէ Նարեկացուն: Ապացոյց՝ Երգ Երգոցի մեկնութիւնը: Սա պայմանաւորուած է ոչ միայն ժանրի բնոյթով, այլեւ մեկնաբանական արձակի իւրայատկութեամբ: Այդ պարզութիւնը նկատելի է նաեւ Նարեկացու մի ֆանի տաղերի մէջ: Մեկնութիւնը Նարեկացին գրել է երիտասարդ հասակում: Կարելի է ասել, որ դա սեփական ռեի որոնման առաջին փուլն էր: Ստեղծագործական զարգացման երկրորդ փուլը, թերեւս, աչքի է ընկնում աւելի բուն որոնումներով: Դա պէտք է լինի ներբողների ստեղծման շրջանը՝ 980ական թուականները: Նիւթի վերամբարձութիւնը, կրօնական գաղափարների եւ պատկերացումների վերացականութիւնը

լայն հնարաւորութիւն են ընձեռում դիմելու նորակազմութիւնների, փոխաբերութիւնների, բարդ պարբերոյթների, շարահիւսական այնպիսի ձեւերի կիրառութիւնների, որոնք ոչ այնքան բանաստեղծական են, որքան հարուստ ստեղծարուեստական ու ձեւական: Թվում է, երիտասարդ Նարեկացին աւելի մեծ սեր է ցուցաբերել դէպի պարզութիւնը, դէպի ժողովրդական բառն ու բանը, ֆաններողագիր այդ Նարեկացին: Երրորդ շրջանը Նարեկացու հանճարի դրսեւորման բարձրակէտն է: Մատեանի մէջ նա համադրում է իր ստեղծագործական նախորդ փուլերի լաւագոյն յատկանիշները՝ հասնելով իր լեզուի եւ ռեի բիւրեղացմանը: Ամէն ինչ նրա յուզաշխարհում արտացոլում եւ իմաստաւորում է սեփական ընկալմամբ եւ ժողովրդին է վերադարձում ուրոյն գեղեցկութեամբ:

Նարեկացու լեզուի առաջին յատկանիշը նորաբանութիւնների հարստութիւնն է: Ամէն մի բանաստեղծ բառաստեղծ է նաեւ: Նարեկացին, սակայն, չունի հաւասար մրցակից: Նրա բառաստեղծական ձիրքն ունի անանց նշանակութիւն: Նարեկացին ստեղծել է բազմաթիւ նորակազմ բառեր, որոնց մի մասը այսօր հնացել է՝ լեզուի զարգացման պատմական օրինաչափութեամբ, կապուած լինելով կրօնական հասկացութիւնների եւ պատկերացումների հետ:

Բառը բանաստեղծութեան մէջ, ի տարբերութիւն նրա բառարանային բուն իմաստի, ստանում է այլ իմաստ ու տարողութիւն: Նա դառնում է մակդիր, փոխաբերութիւն եւ այլն: փոխաբերութիւնը գեղարուեստական մտածողութեան մշտական յատկանիշն է: «Պոեզիայի բոլոր գեղեցկութիւններից միայն դա է, որ սովորել չի կարելի» (10),– գրել է դեռեւս Արիստոտելը:

Առանց փոխաբերութեան չկայ

բանաստեղծութիւն: Փոխաբերութիւնները, սակայն, որքան էլ բանաստեղծութեան կայուն տարր, փոխուում են դարաշրջանից դարաշրջան, բանաստեղծից՝ բանաստեղծը: Ինչ խօսք, միջին դարերի բանաստեղծը փոխաբերութիւններ էր վերցնում կեանքի ու բնութեան այլ ոլորտներից, նոր ժամանակի բանաստեղծը՝ այլ: Աւելի եհշտ՝ միեւնոյն ոլորտից էլ վերցրած նրանց փոխաբերութիւններն իրենց վրայ կրում են դարաշրջանի աշխարհայեցութեան դրոշմը:

Արդ, որո՞նք են Նարեկացու պատկերաւորութեան միջոցների համակարգի բնորոշ գծերը: Ի՞նչ աւանդոյթներ է շարունակում եւ ի՞նչ նորութիւններ է բերում նրա արուեստը:

Նախ՝ մակդիրի մասին: Մակդիրի մէջ արտացոլում է առարկայի անհատական ընկալման երանգը, բանաստեղծի յուզական վերաբերմունքը: Նարեկացին եւ, առ հասարակ, հին բանաստեղծները ոչ մի բանի վրայ այնքան մակդիրներ չեն ծախսել, որքան Աստուծոն բնորոշելու համար: Նարեկացու մակդիրների մի մասը եւս գալիս է Աստուծաշնչից, հոգեւոր քրտնից, հայրաբանական գրականութիւնից՝ իրրեւ փոխառութիւն: Իրենց նոխութեամբ թէեւ առանձնանում, բայց դեռեւս Մատեանի եւ մի քանի լաւագոյն տաղերի մակդիրների թարմութիւնը չունեն Նարեկացու մի շարք տաղերի, գանձերի եւ ներբողների շատ մակդիրներ, որոնք հիմնականում կրօնական հասկացութիւնների, սրբութիւնների եւ պատկերացումների կաղապարուած արտայայտութիւններ են եւ ոչ թէ ինքնուրոյն գիւտեր: Իրրեւ նորութիւն՝ Նարեկացին իր կրօնական տաղերում ձգտում է գուտ մտահայեցականին տալ առարկայական գիծ, վերացականը դարձնել զգայելի ու բանաստեղծական: Կրօնական

պատկերացմամբ Հայ Աստուծոց ծագած Որդին ընկալուել է որպէս լոյսից ծագած լոյս, լոյսի նառագայթ. «ծոցածագենի ծագումն ծիր մշտածաւալ անփոխ» (ԳՆՏԳ 108), Աստուծամօրը բնութագրում է իրրեւ «Լուսին լրացեալ, լուսով լցեալ՝ ի լոյսն աննուաղելի առաւատուն լուսոյ» (ԳՆՏԳ, 206), կամ իրրեւ՝ «Աստուծապարփակ երկիր լուսածին» (ԳՆՏԳ, 224) եւ այլն: Նարեկացու այս բնոյթի մակդիրները քնարական նշմարիտ յոյզի երանգ են հաղորդում կրօնական նիւթին:

Նարեկացին ձգտում է տալ ոչ թէ մէկ եւ միակ մակդիրը՝ բնութագրելու համար առարկան կամ երեւոյթը, այլ սիրում է թուարկել գրեթէ հնարաւոր պատշաճ մակդիրները, որոնք մի կողմից ամբողջացնում են առարկայի բնութագիրը՝ նրա տարրեր յատկանիշների թուարկմամբ, միւս կողմից ուժեղացնում են յուզական լիցքն ու տպաւորութիւնը: Կուտակումների այդ սէրը Նարեկացու ոնի անբաժանելի իւրայատկութիւններից է: Սա վերաբերում է պատկերաւորութեան ցանկացած միջոցին: Սա տաղանդի հարց չէ միայն, այլ նաեւ աշխարհայեցութեան: Բանաստեղծը գործ ունի նիւթական եւ հոգեւոր, իրական ու երեւակայական երկու աշխարհների հետ: Առարկայի բնութագիրը չի կարող նրա համար լրիւ լինել բացառապէս միայն նրա իրական յատկանիշների բնութագրմամբ: Կայ նաեւ կրօնական հայեցակէտից լրացնելու ներքին պահանջը: Ահա, օրինակ, ինչպէս է բնութագրում ծառերը. «Ծառք ամբարձուղէշք, բիւրուտեանք, ծիրանածայր ընձիղք երփնագեղք, քաղցրապտուղք եւ ախորժելիք, երկնընթացք դիտակք ընտրութեան, լուսանունդք եւ տիրահաստատք, շահաւտք եւ արդիւնականք, առոգեալք եւ արմատացեալք, պարարեալք եւ պանծացեալք ի ցօղո պարգեւողին» (ԳՆՄ, 424): Տիրահաստատ մակդիրը, որ նշանակում է

Աստուծու կողմից հաստատուած, աստուածատունկ, պատկանում է կրօնական մտածողութեան մարզին, սակայն առանց այդ քառի ծառերի բնութագիրը Նարեկացու համար կը լինէր թերի:

Նարեկացին ունի մակդիրների կուտակման այնպիսի հատուածներ, որոնք էջեր են կազմում: Նրքերանգների այն հարստութիւնը, քառիմաստների այն բազմազանութիւնը, որ ստեղծում է Նարեկացին պատկերաւորութեան միջոցների կուտակմամբ, ընդլայնում է ոչ միայն իմացութեան սահմանները, այլև խորացնում է զգացմունքների աշխարհը: Ահա, օրինակ, ինչպէս է Նարեկացին բնութագրել Սողոմոն Իմաստունին՝ իբրև բազմամեղ մէկի, որի մեղանչման ու գղջման դրաման բանաստեղծն առաւել մօտ ու սերտ է համարում իր ողբերգութեանը.

Իմաստուն սխալական, ամենագէտ
յանցաւոր,

Ամաւթապարտ գղջացեալ,
տարակուսեալ աշխարող,

Աղաչաւոր կոպաշտեալ, յամբային
դարձաւոր,

Կեղակարծ ընկալեալ, կասկածաւոր
հաշտութիւն,

Յապայս յիշատակ, յերկրայս
փրկութիւն,

Չհաւատալի գիւտ, ի մասնէ
մնացուած,

Խարդաւանեալ գերի, կիսակտուր
պրծեալ, կամաւոր անճամատն,

Տմարդի յղփացեալ, բազմավրէպ
հանճարեղ: (Բան ԽԸ, Բ)

Այստեղ նոյնիսկ ստորոգեալ չկայ: Բայց կայ շարժում: Միտքն անցնում է նրքերանգից նրքերանգ, յատկանիշից յատկանիշ, եւ դա միշտ վերընթաց գծով՝ սովորականից դէպի առաւել յատկանշականը: Անշուշտ, իմաստուն սխալական մակդրական պատկերն աւելի

մեղմ է հնչում բազմավրէպ հանճարեղ-ի յարաբերութեամբ: Առհասարակ Նարեկացու մի մակդիրը կարծես լիցք է հաղորդում միւսին, ինչպէս ալիք՝ ալիքին: Յատկանիշը հարստանում է նոր յատկանիշով: Բառը ձեռք է բերում իմաստակիր նոր տարողութիւն: Այսպէս, օրինակ, քնարական հերոսը ինքնաձաղկմամբ իրեն կոչում է՝

Ունայնաբան շաղակրատ,
պահարամիտ գոռոզ,

Անասնաւրէն ապիրատ, դժոխային
ագահ, աներասան յանդուգն:

(ԲԱՆ ԾԶ, ա)

Այստեղ ունայնաբան մակդիրը վերաբերում է շաղակրատին: Բայց շաղակրատն էլ իր հերթին ուժեղացնում է մակդիրը: Ուստի երկուսն էլ միասնաբար բնութագրելով քնարական հերոսին, թեւ կրկնաբանութեան տպաւորութիւն են թողնում, բայց ոչ թէ յատկանիշը դնում են յատկանիշի կողքին, այլ խորացնում են երեւոյթի նրքերանգը:

Նոյնանիշ մակդիրների կուտակմամբ Նարեկացին նոյնքան յաջողութեամբ է բնութագրում ոչ միայն առարկան, այլև մարդկային հոգեվիճակը: Առաջին հայացքից թվում է, թէ նա պարզապէս դիմում է թուարկման իր սիրած ձեւին:

Մինչդեռ իրականում Նարեկացին մակդիրների կուտակմամբ զարմանալի դրամատիզմ է հաղորդում խօսքին, բացայայտում հոգեկան ապրումների այնպիսի ծալքեր, որ կարող է տեսնել միայն ինքը, ստեղծում է այնպիսի մակդիրներ, որ կարող է երկնել միայն նրա հանճարը: Առարկան կամ երեւոյթը նման դէպքերում լուսագծում է տարբեր կողմերից, եւ ընթերցողն ընկալում է հենց այն յատկանիշը, որի վրայ բանաստեղծը սեւեռում է իր հայեացքը: «Բարկութեան բոցով ցուցցայ տիղմս բանաւոր» (Բան Ի, Ե), - այստեղ բարկութեան բոց նշանակում

է բարկ, թեժ բոց եւ ոչ թէ գայրոյթի, ցասման բոց: Մակդրական պատկերի առանել տարողութիւնը կրում է քանաւոր տիղմ փոխաբերութիւնը: Իրական ինչ յատկանիշ էլ վերագրուէր տիղմին, չէր հասնի քանաւոր, քանական, մտածող մակդիրին, որն անշունչ առարկան հասցնում է գրեթէ անձնաւորման: Իսկ Նարեկացին ցանկացել է ընդգծել հենց այդ յատկանիշը:

Նարեկացու լեզուի պատկերաւորութեանն առանձին գեղեցկութիւն են տալիս այն մակդիրները, որոնք մի տեսակ ստեղծում են անհամատեղելի համատեղութիւն: Այդ հակադրամիասնութեան մէջ առարկան կամ երեւոյթը բացայայտուում է մի նոր, երրորդ յատկանիշով, որը հանդէս է գալիս իբրեւ հակադիր յատկանիշներից միացնող կամուրջ: Այսպէս, երբ Նարեկացին ասում է՝ «Դի կենդանի եւ խաւսուն մեռեալ» (Բան ԺԸ, է), ապա նա շեշտում է մի երրորդ յատկանիշ՝ կեանքի չհատուած այն լարը, որ դեռ կայ նրանց միջեւ: Սա մակդիրների այն տեսակն է, որ ստեղծում է օբյեկտիւտի սկզբունքով: Հակադիր յատկանիշներից ծագում է նոր յատկանիշ: Առարկան ընկալուում է նոր նրբերանգով, բառը՝ նոր նշանակութեամբ: Ահա, օրինակ՝ քանական անասնական (Բան ԻԲ, ք), ցամաքեալ խոնաւութիւն (Բան ԻԹ, դ), ընտանիք թշնամիք, հարագատֆ հակառակֆ (Բան ԾԶ, ա), անկայուն պնդութիւն (ԲԱՆ ԶԵ, ա), յոգնատատան հիմն (ԲԱՆ ԶԵ, Բ), անմոռնչ ձայն (Բան ԿԶ, ա), տատակացան երկրագործ, երջանկութիւն եղկելի, բարձրութիւն խոնարհեալ, պատուիրագանցութիւն յարակայ (Բան ԾԶ, ա) եւ այլն:

Այսպիսով, խօսքի արուեստը չունի մակդիրների գործածութեան մի ձեւ, որ անձանօթ լինի Նարեկացուն: Միջնադարեան տաղերգուները ոչ միայն ուղղակի օգտուել են Նարեկացու մակդիրներից, այլեւ հետեւել

են մակդիրակերտման նրա սկզբունքներին: Նարեկացուց շատ բան են վերցրել նաեւ նոր ժամանակների բանաստեղծները՝ Արովեանից եւ Ալիշանից մինչեւ Սիամանթոն Մեծարեանց, Թումանեանից եւ Իսահակեանից մինչեւ Եղիշէ Զարեանց ու Պարոյր Սեւակ: Նարեկացու մակդիրների մէջ դրսեւորուել է ոչ միայն նրա ռեալ-արտայայտչական ինքնատիպութիւնը, այլեւ դարաշրջանի գեղարուեստական նաշակը:

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ

ԱՂԲԻԻՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼԵԶՈՒԻ ՊԱՏԿԵՐԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ա. Բառի տարողութիւնը պատկերաւորութեան մէջ

- 1.- Վ. Առաքելեան, նշվ. աշխ., էջ 231:
- 2.- Էդ. Զրբաշեան, Գրականութեան տեսութիւն, էջ 234:
- 3.- Նարեկուծ, էջ 2-է:
- 5.- Ստ. Մալխասեանց, Մատենագիտական դիտողութիւններ, էջ 228:
- 6.- Մ. Արեղեան, հ. Գ, էջ 613-614:
- 7.- Հր. Անտոնեան, Հայոց անձնանունների բառարան, հ. 1, Երեւան, 1942, էջ 545:
- 8.- Վ. Առաքելեան, նշվ. աշխ., էջ 254:
9. Գրիգոր Նարեկացի, Տաղեր, տեքստի բարգմանութիւնը, ներածականն ու ծանօթագրութիւնները Արշալիր Մխիթարեանի, Երեւան, 1957, էջ 115-122
- 10.- Արիստոտել, Պոետիկա, բարգմ. Ա. Կարապետեանի, Երեւան, 1955, էջ 202:
- 11.- *А. С. Лихачёв. Поэтика древнерусской литературы, с. 180-181.*
- 12.- Ագաթանգեղոս, Հայոց պատմութիւն, աշխարհարար բարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Ա. Տէր-Ղեւոնդեանի, Երեւան, 1983, էջ 414:
- 13.- *"Античные риторика", М., 1978 с. 129-130.*
- 14.- Նոյն տեղում, էջ 130:
- 15.- *Г. Ф. Гегель. Эстетика, в 4-х тт., т. 2, М., 1969, с. 114.*
- 16.- Էդ. Զրբաշեան, Գրականութեան տեսութիւն, էջ 252:
- 17.- Ստ. Ագոնց, ճարտասանութիւն, էջ 5:

ԳՐԱԿԱՆ

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆՔ ԳՐԱԲԱՐԻՆ ՀԱՆԳԷՊ

«Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս չանճարոյ...»

Մրանք են այն առաջին բառերը, որ գրուել են Հայոց լեզուով, մեարդպատառ Հայերէնով: Մատենադարանի առջև Մեարոպ Մաշտոցը կարծես Հենց այս յորդորն է կարգում ծնրադիր պատանուին:

Այս խօսքն անուած է Աստուածաշնչից, այն առաջին գրքից, որ թարգմանուել է Հայերէն, Երդ դարում:

Այդ ժամանակից ի վեր մինչև 19րդ դարը զբարբը մեր գրական լեզուն է եղել: Գրաբարձ բառն էլ նշանակում է գրի լեզու: Այդ ընթացքում, աւելի քան 1400 տարի, անթիւ անհամար գրքեր են գրուել ու թարգմանուել զբարբար: Դրանցից շատեր անհետ կորել են մեր ժողովրդի գլխով անցած բազում աղէտների ժամանակ, բայց շատերն էլ անցնելով հրի ու սրի միջով, հասել են մինչև մեր օրերը և որպէս ազգային մեծագին Հարստութիւն աչքի լույսի պէս պահուած պահպանուած են Մեարոպ Մաշտոցի անունը կրող Մատենադարանում:

Լա՛ւ, զբարբը տիրապետող գրական լեզուն եղել է մինչև 19րդ դարը: Իսկ ի՛նչ եղաւ յետոյ, ի՛նչ կատարուեց դարերով մշակուած, ճոխացած այդ լեզուի հետ: Դուք գիտէք ի՛նչ զօրաւոր երեւոյթ է ժամանակը, անորոք ու անգիշում: Ամէն ինչ ենթարկուած է ժամանակի անխուսափելի ազդեցութեանը, լեզուն՝ նոյնպէս: Ժամանակի ընթացքում, խզում է յառաջանում գրական լեզուի և խօսակցական կենդանի լեզուի միջև: Խզումը դառնում է ճեղքուածք, ճեղքուածքը՝ վիճ: Եւ մէկ էլ յայտնի է դառնում, որ գրական լեզուն մնացեր է ուսեալ մարդկանց սեփականութիւնը, իսկ ժողովուրդը խօսում է ուրիշ լեզուով: Այդպէս է եղել դարերի խորքից եկող ժողովրդների հին լեզուների հետ:

Գրաբարի և խօսակցական լեզուի տարբերութիւններն աստիճանաբար խորանալով հանգեցրին այն իրողութեանը, որ 19րդ դարից ի վեր սկսուեց կիրառութեան մէջ մտնել միջին Հայերէնը, որով ևս տեղծուել է գեղարուեստական, գիտական ու պատմական մեծահարուստ գրականութիւն Անտիպէս Ենորճալի, Ֆրիկ, Վարդան Այգեկցի, Մխիթար Հերացի և ուրիշների:

19րդ դարի առաջին կէսից ծայր առաւ զբապաշքարը զբարբարի կողմնակիցների և աշխարհաբարի կողմնակիցների միջև: Եւ այնքան էլ մեծ էին ու անհերքելի զբարբարի բարձրագին կուռ քերականութիւն, ամենաբարդ մտքերն արայայտելու ճկունութիւն, ճոխ բառապաշար, — յաղթանակը մնաց անհամեմատ թերի ու անմշակ աշխարհաբարին,

որովհետեւ ժողովուրդն այդ լեզուով էր խօսում: Ի՛նչ օգուտ ճոխ ու գեղեցիկ լեզուով գրելուց, եթէ դա անմատչելի է ժողովրդին: Յաղթանակը մնաց այն դիրքորոշմանը, որի պաշտպաններն էին Խաչատուր Աբովեանը, Միքայիլ Նալբանդեանը, արեւմտահայ իրականութեան մէջ Արսէն Այանեանը և ուրիշները:

Իսկ ի՛նչ եղաւ զբարբարը: Գրաբարը մեռաւ, իր ուժն ու զօրութիւնը տալով աշխարհաբարին: Կայ ըրելիական խորունկ մի իմաստութիւն եթէ ցորենի հատիկը հողի մէջ չի մեռնում՝ կորում է անհետ, իսկ երբ մեռնում է՝ հողի երես է ելնում մի նոր ոսկեհասակ՝ բազում հատիկներով:

Այսպէս է մեռել զբարբարը, այդպէս են մեռել լատիններէնը, հին յունարէնը և ուրիշ աքանչելիօրէն նախալեզուներ: Ճիշդն ասած, ինչքան էլ մեռան, այդ լեզուները մինչև օրս էլ անգնահատելի ծառայութիւն են մատուցում ժամանակակից կենդանի լեզուներին: Դուրս է գալիս, որ զրանք այնքան էլ մեռած չեն, բացառապէս մասնագէտների սեփականութիւնը չեն: Նրանք ապրում են ժամանակակից լեզուների մէջ: Ինչքան ղեղատոմսեր են գրուած՝ բոլորն էլ լատիներէն: Բուսաբանութեան ու կենդանաբանութեան մէջ ուր բոլոր անուանումներն են լատիներէն: Շատ և շատ գիտութիւնների մեծածախ տեղմիներ ծագում են հին յունարէնից: Եւ այդ ընթացքը շարունակուած է այսօր էլ:

Գրաբարն էլ ժամանակակից Հայերէնի պահեստն է: Մէկ էլ տեսար զբարբարից այնպիսի բառեր ու դարձուածքներ են առած ու մտած ժամանակակից լեզուի մէջ, որ ոչ ոք չէր սպասի: Շատ բան է տուել զբարբարն աշխարհաբարին, տալիս է և կտայ սպազալում ևս: Ահա ինչու զբարբարն արժանի է խորագոյն յարգանքի ոչ միայն իրրեւ պատմական երեւոյթ, իրրեւ մեր ազգային հանճարի բարձրագոյն արտայայտութիւն, իրրեւ մեր բազմադարեան և բազմադարեւ պատմութեան արտացոլում, իրրեւ Հայ գեղարուեստական մտքի շտեմարան՝ այս ամէնն իրենց հերթին: Գրաբարն արժանի է խորին յարգանքի և որպէս լեզուական ծով հարստութիւն, որ հիմա էլ պէտք է ժամանակակից Հայերէնին:

Ո՛չ Հայ հին ճարտարապետութիւնը, ոչ էլ հին Հայերէնը իրենց դարն ապրած վաստակաւորներ չեն, որոնք արժանի են հիացմունքի իրենց պատկառելի տարիքի և հնում մատուցած ծառայութիւնների համար միայն: Եւ մէկը ե՛ւ միւրը մեր ոչ միայն ազգային Հարստութիւնն են, այլև այսօրուայ կենսաբի ուղեկիցները:

ԼԵՒՈՆ ՀԱՍՎԵՐԿԱՆՍ

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՒ ԵՌԱԳՈՅՆԸ

Անդրանիկը՝ Անդրանիկ Փաշան չէր անշուշտ եւ ոչ ալ Մառուկեանը: Պուրճ Համուտէն էր. համեստ արհեստաւոր մը որուն հետ հոս ծանօթացայ: Եղած էր համայնավար եւ նաեւ ... հրաշալի հակադաշնակցական: Եթէ համայնավար ըլլալը մնացած էր Պէյրութ. հակադաշնակցականի կրակը դեռ կը մնար անթեղուած եւ ատեն ատեն կ'առկայձէր մեր զրոյցներուն ընթացքին: Գրեթէ ամէն կիրակի կը հանդիպէինք Սրբ. Պետրոս Եկեղեցւոյ մէջ: Ընդհանրապէս ինձմէ առաջ հասած կ'ըլլար: Հասնելէս տասը-քսան վայրկեան ետք դուրս կ'ելլէր ու կը սպասէր որ միանայի իրեն: Այդպէս եղաւ նաեւ բարեկամի մը զակին մկրտութեան օրը. տարբերութեամբ մը՝ Պատարագէն ետք կրկին վերադարձանք Տաճար մկրտութեան արարողութեան ներկայ ըլլալու:

Հոկտեմբերեան կիրակի մըն էր: Ատենը հասաւ ու մանուկին հայրը աղջնակը յանձնեց կնքահօր: Մինչ այդ լուր մանկիկը սկսաւ ... ճշալ ու լալ: Հազիւ նշմարելի երկու գծիկներ կը կնճռոտէին յստակ ու լայն ձակատը մանկիկին.

*«Իւղ անոյշ հեղեալ ի վերայ քո՝ կնիք երկնաւոր պարգեւացն
անապականութեան»:*

Արցունքոտ. սեփ-սեւ աչքերը հօրը վրայ սեւեռած օգնութեան կը սպասէր.

«Կնիքս ... լուսաւորեսցէ զաշս քո. զի մի երբեք ննջեսցես ի մահ»:

Երկար թարթիչներէն արցունքի կայլակները՝ ջահերու լոյսին մէջէն շողարձակուող մարգարիտի հատիկներ. կ'իյնային փոքր. կարմրած այտերէն: Որքան կը պաղատէր աղջնակը

*«Կնիքս ... եղիցի քեզ պահպանութիւն բերանոյ եւ դուռն ամուր շրթանց
քոց»*

Թաթիկները հօր երկարած.

*«Կնիքս ... եղիցի քեզ պատճառ բարեգործութեան ամենայն առաքինի
գործոց եւ վարուց»*

Իսկ հայրը՝ անզօր կը ժպտէր: Հասած էր պահը երբ ոչ ոք ոչինչով կրնար օգնել աղջնակին որ պէտք էր մտներ աւազանին մէջ մաքրուելու համար մեղքերէն տակաւին առաջին իսկ բառը չարտասանած որպէսզի ըլլար «Տաճար Հոգւոյն Սրբոյ»: Եթէ կը հաւատանք մեր պապերու պատգամներուն. Եկեղեցիին. այդ պահէն ետք մանուկը. մանուկները կ'ընթանան զուհահեռ գիծերու վրայ՝ մին պարտադրուած ու ճշդուած հաւատքին կողմէ. միւսը

ծնողքին ու յետագային դաստիարակներուն հսկողութեամբ: Երկրորդը կուտայ գիտելիքներուն զինամթերքը՝ որպէսզի անհատը հասնի հոն ուր իր աստուածապարգեւ տաղանդը կը հասցնէ: Առաջինը՝ անհատը, անկախ նուաճումներէն, կը պահէ մարդ. բառախաղը գործածելով՝ մարդը կը մարթէ: Այդ կիրակի օր, աղջնակին աղաղակը թերեւս այնքան ալ ցաւի, վախի լացը չէր որքան ուրախութեան ճիշդ ազամական մեղքով դատապարտուած անհատին դէպի Տիրադէմ մարդուն այլակերպող սրբալոյս Միւռոնի հրաշքէն:

Անդրանիկը ինձմէ քիչ մը անդին կեցած կը դիտէր: Այլուրային լարումով կը փորձէր հետեւիլ արարողութեան: Հոն է՞ր այդ պահուն, կը մտածէ՞ր իր անցեալի մասին: Կը հաւատա՞ր տեսածին: Եթէ չէր հաւատար, ինչո՞ւ սակայն ժամավաճառ պիտի ըլլար ամէն կիրակի առաւօտ եթէ տեղ մը, շատ հեռու, խորը իր էութեանը մէջ կոմունիզմը վիժած չըլլար իր թափանցումին ու աղարտումին մէջ: Ո՞վ գիտէր այդ պահուն: Անդրանիկը:

Կիրակնօրեայ գրոյցներուն ինք կը սկսէր.

– Անցեալ օր իմացայ թէ Նախագահը արգիլէր է դաշնակներուն հայաստան մուտքը: Յոգեալսնին մէջ կը հարցնեն կոր եղեր թէ մէկը դաշնակ է թէ ոչ: Գաշնակներուն ետ կը ձամբեն կոր եղեր:

– Ես այդպէս բան չեմ լսած:

– Գալիֆորնիայէն իմացայ: Այդպէս գրեր է թերթը:

Շաբաթ մը ետք.

– Գատարանը դաշնակները մահուան պիտի դատապարտէ եղեր կառավարութեան դէմ յանցանք գործած ըլլալուն համար:

– Գատախազը մահապատիժ ուզեց բայց վճիռը տակաւին շտրուեցաւ: Տակաւին չէ փաստուած թէ յանցաւոր են:

– Ինչպէ՞ս թէ շփաստուեցաւ: Նախագահը յայտարարեց, չլսեցի՞ր:

– Լսեցի, բայց Նախագահը սխալած է:

– Ամմահա ըրիր հա: Նախագահը կը սխալի՞:

Այս կամ նման գրոյցներ կը կրկնուէին: Գիտէի թէ քաղցկեղէ կը տառապէր եւ օրերը հաշուուած էին: Ոչ մէկ ատեն յամեցաւ իր հիւանդութեան վրայ: Միայն մէկ անգամ ակնյայտ ուրախութեամբ մը աւետեց.

– Երէկ նորէն քննեցին լէարդս եւ բժիշկը յայտնեց թէ մաս-մաքուր էր, բան չէր մնացած:

Այդքան: Ինչպէ՞ս պիտի ուզէի որ ճիշդ ըլլար: Բաժնեցի իր ուրախութիւնը որքան որ կարելի էր թաքցնել կասկածս եւ վերսկսանք մեր հերթական գրոյց-վէճին: Բարեկամ մը օր մը ըսած էր.

– Ձենք գիտեր թէ ի՛նչ կ'ըսես իրեն: Ամէն անգամ հետոյ վիճելէ ետք տրամադրութիւնները բարձր կ'ըլլան. կը մոռնայ ինքզինք ու կը փորձէ հակաճառութիւնները պատրաստել՝ յաջորդ տեսակցութեան ընթացքին հակահարուած տալու համար: Այդպէս շատ չենք տեսներ զինք վերջերս:

Այդպէս էր թէ ոչ չեմ գիտեր: Ձէր կռահած սակայն բարեկամս թէ հին. պայքարող շարքային կուսակցականը կը փորձէր ինքզինք վերագտնել կեանքի մետասաներրորդ ժամուն: Գիտէի սակայն մէկ բան՝ պիտի ուզէր. կը փորձէր քակել հանելուկը՝ իր նոր բարեկամը դաշնակ է՞ր թէ ոչ: Ինքզինք երբեք չնուսաստացուց չվիրաւորելու համար. ուղղակիօրէն հարցնելով: Որքա՛ն շատ են այդ երանելի զգուելիները որոնք երբեմն ինքնամատոյց բժախնդրութեամբ կը լարծին բան մը հասկնալու տենչէն. բամբասանքի ոջիլէն քերուած: Անդրանիկը մարդ էր՝ արժեցուցած կրած անունը: Համայնավար էր եղած ու մնացած մարդ միշտ գիտնալով որ պէտք էր յարգել ընդդիմախօսը եթէ նոյնիսկ վստահ չէր ո՛վ էր կամ ի՛նչ էր խօսակիցը: Ձինք կը հետաքրքրէին գաղափարները միայն եւ երբ շատ նեղը մնար. առարկութիւնը կը վերածուէր փառաւոր հայիոյանքի մը որուն արուեստը քանի մը ժամանակակից քերթողական դիւան կ'արժէր:

Նոյն եկեղեցին կը յաճախէր նաեւ փրօֆ. Վազգէն Բարսեղեանը եւ երբեմն կը մասնակցէր մեր զրոյցներուն: Յաճախ ըսելիք մը կ'ունենար. իրագործելիք նոր ծրագիր մը. նկատառելի թելադրութիւն մը կամ թելադրութիւններ: Անոնցմէ մէկն էր Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային կազմակերպական. կառուցային վերանայումը: Միշտ կը խօսէր այդ մասին: Իր թելադրութիւնները. անտեղի չըլլալով մէկտեղ. համաձայն չէի կրնար ըլլալ հետը եւ յայտնեցի թէ ինչո՞ւ: Զառարկեց: Երկու շաբաթ ետք.

– Նախագահին դրկած նամակս հասեր է: Յուսամ որոշում մը կ'առնեն այդ ուղղութեամբ:

Ուրախ էր եւ ուրախութենէն բան չփոխուեցաւ երբ աւելցուցի.

– Յուսամ. բայց կը մաղթեմ առնուելիք որոշումները տարբեր կ'ըլլան ... ձեր թելադրածներէն:

Երկու կիրակի ետք.

– Թուրք բարեկամիս նամակ մը գրած եմ պիտի դրկեմ: Պիտի ուզէի որ կարդայիր:

Տուաւ. կարդացի ու փոփոխութիւն մը առաջարկեցի: Մտիկ ըրաւ. հարցական դիտեց. յայտնօրէն մտքին մէջ կը կշռէր փոփոխութիւնը բայց բան չըսաւ: Ատեն մը ետք թերթին մէջ լոյս տեսաւ նամակը: Կարդացի այն պարբերութիւնը ուր փոփոխութիւնը պէտք էր ըլլար: Զնջած էր առարկելի

նախադասութիւնը: Շատ շանցած. աշխարհի հետ հաշիւները փակեց ու մեկնեցաւ Էնդիի աշխարհը:

- Փրոֆէսէօրն ալ գնաց:

Անդրանիկն էր խօսողը՝ ինքն իրեն հետ թէ՞ ինծի. յայտնի չէր: Զայնին շեշտը շատ դիւրիս չեկաւ: Կրկին Պէյրուժ գացինք եւ հին պայքարներուն: Ցատկանշականօրէն այդ անգամ. իր հաստատումները աւելի հիմնաւորելու ու ցրուելու համար տարակուսանքս աւելցուց.

- Անշուշտ թէ ճիշդ են ըսածներս: Այդ օրերուն թափանցած էինք գրեթէ բոլոր կուսակցութիւններուն եւ կազմակերպութիւններուն մէջ եւ մեր ուզածը կ'ըլլար: Եթէ կ'ուզես. ճիշդ էր նաեւ մեր ջանքը՝ մեր մարդոց կամ մեզի ուղեկից անհատներուն մեր կազմակերպութիւններէն ներս թափանցումը:

Անուններ տուաւ: Պէտք է՞ յիշել այդ անունները հոս: Վստահ չեմ. բայց օր մը թերեւս. երբ անհարժեշտ ըլլայ լարախաղաց ստախօսի մը սորվեցնելը թէ ինչպէս կ'ըլլայ ... «խոստովանիլը»: Կարելի չէր չհարցնել երբ ինք արծարծեց երեւոյթը.

- Անդրանիկ. տեղ մը. կազմակերպութիւն մը կա՞ր ուր թափանցած չըլլայիք:

- Հա վալլահա. կար: Դաշնակները: Հոն մէկը շիրցանք դնել: Զեղաւ: Գոնէ մինչեւ հոս գալս վերջին կռիւները սկսելէն յետոյ:

Գրեթէ տասը օր ետք իմացայ թէ հիւանդանոց պիտի մտնէր եւ ... Եռագոյնը ուզած էր. հետը տանելու: Փափաքը ինծի հասցուց անուղղակի ձամբաներով հասկցնելու իր համոզումը՝ գաղափարական արեւելումէս: Փափաքը չզարմացուց թէեւ բայց այդ պարզ ու անմիջական մարդուն հանդէպ կեցուածքի շեշտակի փոփոխութիւն մը առաջ եկաւ: Եռագոյնը հասաւ իրեն: Ես չտուի: Տեսայ սակայն թէ ինչպէս այդ փոքր դրօշը ուրեց իր ցօղիկին վրայ ու ամուր մը բռնեց կարծէք մէկը պիտի փորձէր խլել: Այդպիսի խանդաղատանքով ու սիրով որեւէ աշակերտ չէր սեղմած իր շահած վկայականը: Անդրանիկը կ'ապաւինէր Եռագոյնի հզօրութեան. Նարեկացիէն առաջ. իր կեանքի վերջալոյսին կեանք հայցելով Եռագոյնէն:

Եռագոյնը սեղմելէ ետք Անդրանիկը աւելի ... լաւացաւ: Տրամադրութիւնները բարձր էին՝ փաստ որ մեր կիրակնօրեայ գրոյցներուն աւելի կրքոտ կը մասնակցէր ու հին կիրքով կը գովերգէր Նախագահը: Ես կը կասկածիմ թէ մեր Նախագահը արտերկրի մէջ ունենայ այնքա՛ն հաւատարիմ ու այնքա՛ն անսակարկ նուիրեալ մը որքան Անդրանիկը՝ Պուրճ Համուտի նախկին կօշկակարը որուն դիմագիծը ներկայիս այնքա՛ն թեթեւօլիկ

կերպով կ'աղարտուի հայրենի կարգ մը թերուս գրչակներու կողմէ: Անդրանիկը չկարդաց ու չսեց ելոյթը որուն կ'ակնարկուի հոս:

Շատ շանցած Անդրանիկը վէճերէն վազ անցաւ: Գտած էր նոր ու անբաժան ընկեր մը՝ երեք տարու Սաչերիկը որուն հետ կը խաղար. կը խօսէր: Մոռցած էր թէ նախագահը եւ թէ ... դաշնակները: Երկար շտեւեց: Դեմքը զգալիօրէն գունափոխուեցաւ եւ երկու օր ետք անկողին ինկաւ: Այցելեցինք իրեն: Սաչերիկը տեսաւ ու անոր հետ զբաղեցաւ: Հարցումներուս կարծ կը պատասխանէր՝ Սաչերիկին մէջ կը ջանար ինքզինք մոռնալ ինքզինք խաբել քանի մը վայրկեան կամ քանի մը ժամ կեանք կորզելու համար: Ցանկարծ.

– Մարզպետ խայօ քեզի բան մը ըսեմ մի նեղուիր: Ի՛նչ կ'ուզես ըսէ. Սաչերիկը վալլահի վրադ լէյմուն պիտ քամէ:

Իր ձեւն էր ... կօլ ընելու:

Բաժնուեցանք կրկին տեսնուելու խոստումով: Տեսնուեցայ ... հիւանդանոցին մէջ: Պառկած էր՝ նարեկը բարձին տակ: Անդրանիկին համար ամէն ինչ կատարեալ էր այլեւս ու պէտք էր մեկնիլ: Նշմարեց: Ճանչցաւ: Ոչինչ կարելի էր ըսել: Ամէն ինչ ըսուած էր ու կեանք մը իր լրումին կը հասնէր: Անդրանիկը երկարած էր կեանքի ու անդենականի սահմանագծին վրայ: Ցստակ էր անցեալը. երթալիք տեղը՝ անորոշ ճիշդ Սփիւռքի նման: Պայքարած էր Եռագոյնին դէմ ոչ այնքան անոր գաղափարական խորհուրդին որքան այդ գաղափարականը պաշտպանած կուսակցութեան. անհատներուն դէմ հաւանաբար այն գիտակցութենէն թէ անոնք՝ իր ընդդիմադիրները ճիշդ էին Եռագոյնի իրենց սիրոյն մէջ. իսկ իրեն պարտադրուած էր հակառակիլ ու պայքարիլ անոնց դէմ. որովհետեւ ոչ մէկ չա՛յ կը յանդգնի Եռագոյնով պայմանաւոր գաղափարականը հարցադրել: Պայքարած էր եւ հիմա վերջապէս խաղաղած վերահաս վերջնական անդորրէն առաջ: Ի՛րն էր նաեւ Եռագոյնը որ այնքան տաք խանդաղատանքով սեղմած էր ափին մէջ վաթսուն տարուան իր կարօտը առնելու. վաթսուն տարուան շարտասանուած սէրն ու գուրգուրանքը տալու եւ վաթսուն տարուան անտեսումի. քէնի մուրը սրբելու գորովալից հաշտութեան մը դատակնիքով: Հիմա հաշտ էր ու պատուով փակած գաղափարական կեանքի հաշիւը: Սփիւռքն էր այդ պահուն անշարժացած իր հոգեբով իրեն համար ի վերուստ ճշդուած ուղիին դիմաց: Վանգիստ պէտք էր ձգել Անդրանիկը իր երթին մէջ ինչպէս հանգիստ պէտք է ձգել Սփիւռքը իր յառաջընթացին մէջ եւ Հայրենիքէն ժամանող ու Հայրենիքի անունով զայն երկփեղկող հայրենի ու արտերկրի սահուկեցիները հեռու պէտք է մնան: Որովհետեւ Սփիւռքն է. Հայրենիքը իր հոգւոյն խորը. Հայրենիքին համար ինքզինքին հետ պայքարող ու անզիջող կռիւներու գրոհին մէջ

անիմանալիորեն տեսնելու գոյատևման իր հակասութիւնը եւ ի վերջոյ նաեւ հաշտուելու ինքզինքին հետ: Հակասութիւններով լեցուն բայց նաեւ տոկուն՝ Սփիւռքը որուն պէտք չէ դպչիլ մանաւանդ հայրենասիրութիւն սորվեցնելու համար:

Քանի մը օր ետք՝ կիրակի մը, Տաճար մտնելէ առաջ, Անդրանիկին երեխայ ընկերն էր խօսողը.

- Այսօր Անդրանիկ ամմօյին հետ պիտի երթանք:
- Այսօր Անդրանիկ ամմօն պիտի չգայ:
- Ինչո՞ւ Անդրանիկ ամմօն այսօր պիտի չպիտի գայ:
- Որովհետեւ Անդրանիկ ամմօն Աստուած Պապային քով գնաց:
- Ձէ: Անդրանիկ ամմօն մեռաւ:

Ուրկէ՞ էր իմացած: Կը հասկնա՞ր իմաստը: Թերեւս այդքան պարզ է՝ մահը՝ մանուկէ մը նոյնիսկ հասկնալի: Սփիւռքն էր՝ այնքա՞ն սրտատրոփ ապաստած անկախ Հայրենիքին, զայն ապրելով ամէն օր ու անբաժանելիորէն Հայրենիքին յենած միշտ դաւանելով

«Կնիքս - Հայրենիքն - եղիցի վահան ամրութեան, որով - Սփիւռքն - կարացէ զամենայն նետս մուխս շարին շիջուցանել»:

Սփիւռքը եւս՝ մանուկի մը նման անօգ ու թխրուն, մանուկի մը նման ապագայ խիզախումներու, խոյանքներու ու ժականութեամբ, խոստումներով ամրապնդուած ու հաստատաքայլ ընթացող

«Կնիքս ...ուղղեցէ զգնացս - Սփիւռքի - ի կեանսն յաւիտենից, զի մի սասանեցէ»

որ անհրաժեշտ է հասկնալի ըլլալ յստակ ու պարզ կերպով բոլոր անոնց համար որոնք կը կարծեն Հայրենիք սիրել ու մանաւանդ հայրենաբնակ պետական մարդոց որոնք այնքա՞ն մօտէն ձանչնալ կը կարծեն զայն:

ՄԱՐԶՊԵՏ ՄԱՐԿՈՍԵԱՆ

ՎԵՐՅՈՒՇ ՄԸ ԱՆՑԵԱԼԷՆ

Սփիւռքահայ շարաքաթերթ մը, մեզի կը յիշեցնէ թէ 1997ը ծննդեան վաթսումեակն է Եղիշէ Զարեմցի:

Մեծ քանաստեղծին մէկ քերթուածին հետ կապուած հաւաքական ապրումի մը վերյուշը՝ զիս ետ կը տանի Երուսաղէմի պարման օրերուս:

Ապրիլեան Եղեռնին յաջորդող սերունդին մանկութիւն չտեսած տղաք էինք մենք եւ մեր արիւնին մէջ կը կրէինք ժահրը եւ մեր նեարդներուն ցանցին վրայ՝ ցաւը մեծ ոգիւրին: Ցերեկին, մեր սիրտը կ'արիւնէր ու մեր միտքը կը տանջուէր մեր մեծերուն պատմած ջարդին նկարագրութիւններով եւ գիշերն ալ մեր ախտավարակ երեւակայութեան թելադրած մղձաւանջներուն յաճախանքով: Անհանգիստ, ըմբոստ հոգիներ էինք եւ մեր թշնամիին հանդէպ զգացած անգօր կատաղութիւնը՝ գրգռուելով Անդրանիկի, Աղբիւր Սերոբի եւ հայ ֆէտայիներու՝ թիւրքերու եւ ֆիւրտերու ընդհարումներու պատմութիւններէն՝ վրիժառութեան քարկ զգացումներ կը հրահրէր մեր մէջ:

կարդաց, բացատրեց իմաստը ու նոր բաներուն նշանակութիւնը:

Այս պահուն, փոխադրուած եմ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի դասարանս եւ կը վերապրիմ յուզումը որ համակեց մեզ: Այսօրուան պէս կը յիշեմ որ, այդ օր, բացառաբար երկու պատահարներ տեղի չունեցան: Դասարանին անառակները, կէսօրէ ետք, պարիսպին Դաւիթ մարգարէի դուռէն արաքական թաղի պողատու ծառերուն վրայ չյարձակեցան, եւ մեր ուսուցիչը, որ ամէն դասի անպայման բարոյախօսութիւն կ'ընէր իր սեղանին վրայ շաշոյ գծաճաշին ընկերակցութեամբ, այդ օր բառ չգտաւ ըսելիք. յուզումը կղպեր էր իր քերանը:

Եւ սակայն մեր հոգիները խոշոր փոփոխութիւն մը կրեցին: Զգացիմք հալիլը՝ գրկուած, դժբախտ տղու մեր դառնութեան ու անյուսութեան: Մեր դպրոցի սրահին նակտի պատէն կախուած էր Մայր Հայաստանի նկարը: Ո՞վ նկարած էր զայն, ո՞վ դրած էր հոն եւ ինչո՞ւ համար, չեմ գիտեր: Ամէն առտու, այդ նկարին առջեւ

Անուրախ, տափակ Երկուշաբթի օր մը, արտասանութեան պահին, մեր հայերէնի ուսուցիչը ներս մտաւ աղմկոտ դասարանէն: Մեղմօրէն շառագունած դէմքին վրայ ժպիտ մը կ'ուրուագծուէր եւ աչքերուն մէջէն ուրախութիւն կը ցափառէր:

«Ձեզի աղուոր նուէր մը բերած եմ, շատ գեղեցիկ ֆերթուած մը.» ըսաւ ան, շեշտով մը, որ տաճուց, ֆաղցրացուց իր սովորաբար չոր եւ կարծր ձայնը: Հանդիսաւոր լրջութեամբ, սեւ գրատախտակին վրայ, հատիկ հատիկ մարգարիտներու նման շարեց մարգարիտէ աւելի թանկագին բառերը, Եղիշէ Չարենցի՝ Գովֆ Հայաստանի ֆերթուածին, գոր գգացումով

կը հաւաքուէինք եւ «Հայր Մեր»ը կ'երգէինք: Աղօթքի պահուն սրտի նմանումով կը դիտէի աւերակներուն մէջ նստած «Մայր Հայաստան»ը եւ լուռ կը կրկնէի անոր ձօնուած ֆերթուածին առաջին տունը գոր գոց սորված էինք:

«Դուն նստեք եւ ցամբաներուն անկիւնը, Մագերդ ի վար իջեք կախուեր է ձիւնը, Մարմնիդ վրայ կը փոսանան մութխոցեր, Եւ աչուըներդ արիւնի լին են դարձեր»:

Մայր Հայաստանն ալ նկարին մէջէն տրտում տխուր, բարի, գթոտ աչքերով մեզի կը նայէր: Ի տես այդ նկարին, կը կարծէի, որ մեզի համար ամէն ինչ կորսուած էր եւ մեր հայրենիքը թշուառ անտէր, մեր թշնամեաց ոտնակոխ՝

կործանած աւերակոյտն էր:

Հոգիս լեցունեցաւ անպարոյր ուրախութեամբ մը, որովհետեւ բանաստեղծը կարօտով եւ սիրով լեցուն բառերով կը խօսէր՝ հէֆիաթանման անոյշ Հայաստանի մը մասին, անոր արնանման ծաղկներին եւ վարդերուն, մուգ երկինքին, լուսէ լինին, հնամեայ ֆաղաֆներուն, ներմակ գագաթ Արարատին եւ մեր հայրենիքի այն հողաշերտին մասին ուր ամէն առտու արեւը կը ցաթէր ու ինծի արիւնակից հայեր կ'ապրէին, կը ստեղծէին, կ'երգէին, կը նուագէին եւ կը պարէին: Ի՛նչ անկրելի ցաւ էր գիտնալ, որ մեր Սրբազան Լեռը, մեր չար բախտէն՝ դուրս մնացած էր մեր հայրենիքին սահմաններէն: Ան ալ մեզի պէս վտարանդի էր դարձեր:

Այդ օրէն սկսեալ իմ հոգիին մէջ անխախտ մնացած է սէրը հանդէպ հայրենիքիս. ինծի համար իմ նայիրեան երկիրը հրաշագեղ է, անոր վերածնունդը՝ հրաշք, ժողովուրդը՝ հրաշագործ, եւ սիրանքը՝ հրաշալի:

«Ես իմ անոյշով «ոչ միայն կը գտնէի Հայաստան «Մայր»ս (ըսի որ ուսուցիչս բարոյախօս էր եւ ֆերթուածին երրորդ տունին չորրորդ տողին «եար»ը փոխանակած էր մեր տարիքին աւելի պատշաճ «Մայր» բառով) այլեւ առաջին անգամ ըլլալով կ'ազդուէի, կը հմայուէի բիւրն բանաստեղծութեան գեղեցկութենէն:

Չարենցի «Գովֆ Հայաստանին» եւ Սիամանթոյի «Ափ մը Մոխիր Հայրենի Տունը», մեր ամենէն շատ սիրած եւ արտասանած ֆերթուածները եղան: Սէրս հայրենիքիս եւ սէրս գեղեցիկ ֆերթութեան, կը պարտիմ Չարենցին: Ան, հայ ստեղծագործ ոյժին ակունքէն եւ դարերու խորքէն եկած հանճարին ցանկանքն էր որ իր ցոլֆերով բախտորոշ շրջանի մը մէջ՝ լուսաւորեց մեր գրականութեան ուղին եւ վաղաժամօրէն շիջեցաւ:

Արդեօք Հայաստան եւ սփիւռք պիտի ընդառաջե՞ն հայ շարաթաթերթին կոչին եւ համագգային տարողութեամբ, միասնաբար եւ արժանավայել շուրջով պիտի նշե՞ն Նայիրեան հրաշունչ պօտին ծննդեան հարիւրամեակը:

ԿԱՐՊԻՍ ԵՍԱՅԵԱՆ

Լոնտոն 27.1.97

Հ Ն Չ Ե Ա Կ

LXXIV

Սակայն վախ մի՛ ունենար, երբոր վրճիռն անյեղլի
 Հեռացուցած զիս ըլլայ այս աշխարհէն. մաս մը դեռ
 կեանքէս մընայ պիտի հոս՝ տաղերուս մէջը անմեռ
 Զոր դուն պահես պիտի միշտ՝ իբր յուշածօն մը ինձի:

Եւ երբ կարդաս դուն զանոնք՝ պիտի գտնես հոն ինչ որ
 Տուած էի քեզ կեանքէս. հողը կրնայ առնել ետ
 Իր իրաւունքն՝ հողը լոկ: քու իրաւունքդ է յաւէտ
 Հաւագոյն մասն էութեանս՝ հոգիս ու միտքըս բոլոր:

Այսպէս, մարմինն երբ մեռնի՝ կորսնցուցած պիտ՝ ըլլաս
 Մըրուրը լոկ, ճճեաց կերն ու զոհր վատ դաշոյնին,
 Շատ չնչին բան, որպէսզի դեռ մըտածես իմ վըրաս:

Իրենց մէջի նիւթերո՛վն անօթները կը յիշուին.
 Պարունակեց անցաւոր կեանքըս սիրող իմ հոգիս
 Եւ այդ հոգին կը մընայ, զայն դուն ամբողջ հոս ունիս:

ՈՒԻԼԻԸՄ ՇԷՅՔՍԱԲԻՐ

Թրգմ. անգլերէնէ՝ ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

43

But be contented, when that fell arrest
 Without all bail shall carry me away,
 My life hath in this line some interest,
 Which for memorial still with thee shall stay.
 When thou reviewest this, thou dost review
 The very part was consecrate to thee;
 The earth can have but earth, which is his due,
 My spirit is thine, the better part of me:
 So then thou hast but lost the dregs of life,
 The prey of worms, my body being dead,
 The coward conquest of a wretch's knife,
 Too base of thee to be remembered.

The worth of that is that which it contains,
 And that is this, and this with thee remains.

[LXXIV]

43

5+5+5

Դուն անհոգ եղիր, երբ այդ շարաշուք ձերբակալումով
 Առանց որեւէ երաշխաւորման զիս առնեն տանին,
 Իմ կեանքն այս գիծով եւ այստեղ ունի շահագրգռութիւն,
 Քու մէջըդ, քեզ հետ, իբրեւ յիշատակ ան պիտի մընայ:

Այսպէս վերաքաղն երբոր կատարես, կրկին պիտ' տեսնես
 Ճիշտ այն մասը որ քեզ ունի կեդրոն, քեզ է նըւիրուած.
 «Հող էիր՝ անդրէն եւ ի հող դարձցիս», ա՛յդ է իր բաժին,
 Իմ հոգին սակայն, մասն իմ լաւագոյն, քեզ կը պատկանի:

Ուրեմըն կեանքին մըր՛ւրը միայն դուն կը կորսնցնես,
 Զոհը որդերուն, մարմինս արդարեւ մեռած լինելով,
 Իբրը վատոգի յաղթանակ՝ թշուառ մէկուն դանակին,
 Ցածոգի այնքան՝ անարժան քեզմէ յիշուելու անգամ:

Անոր արժանիքն այն էր մի միայն՝ ինչ կը պարփակէր.
 Ա՛յդ՝ այս էր միայն, եւ ա՛յս՝ կը մընայ քեզ հետ յաւիտեան:

Թրգմ. Շէն-Մահ

Ռիլիերմ Թէքըսպիր

25 Ապրիլ 1995

Երուսաղէմ



ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌՆԵՐԸ

Համաբարբառի պատմութիւնը կը սկսուի վաղնջական ժամանակներէն: Համաշխարհային գրականութեան մէջ նոր թուականութեան հէնց սկիզբէն հանդէս կու գայ բնագրերու բաղդատական ուսումնասիրութիւնը: Ամենէն առաջ նման ուսումնասիրութեան նիւթ կը դառնայ Աստուածաշունչը, մասնաւորաբար չորս Աւետարանները, որոնց բնագրերը կը բաղդատուին միմեանց հետ՝ անոնց միջեւ եղած նմանութիւնները ի յայտ բերելու նպատակով. աւելի ճիշդ, գտնելու Աւետարաններու միջեւ եղած տարբերութիւնները եւ դուրս ձգելու զանոնք, պահելով միայն նման նախադասութիւններն ու միտքերը: Այդպիսի աշխատանքները կ'անուանուին համաբարբառ, որ կը նշանակէ «համաձայն, միաձայն, միաբան, ներդաշնակ»:

Մատենագրութեան տուեալներու համաձայն՝ առաջին համաբարբառը կը վերագրուի Տատիանոս Ասորիին, որը Բ. դարու հեղինակ է: Այդ դարը քրիստոնէութեան պատմութեան մէջ այնպիսի ժամանակաշրջան մըն էր, երբ գործող պայքար կ'երթար քրիստոնէական եւ հեթանոսական կրօններու միջեւ: Քրիստոնէութեան հակառակորդները անողոք քննադատութեան կ'ենթարկէին քրիստոնէութեան հիմք հանդիսացող չորս Աւետարանները, որոնց մէջ հակասութիւններ կը տեսնէին Քրիստոսի անձի, կեանքի, վարդապետութեան վերաբերեալ: Եւ այդ պայքարը կը դրդէ, որպէս զի քրիստոնէութեան կողմնակիցները անդրադառնան Աւետարաններու միջեւ եղած հակասութիւններուն եւ վերացնեն զանոնք: Այդ գործին առաջինը ձեռնամուխ կ'ըլլայ

Տատիանոս Ասորիին: Ան չորս Աւետարանները կը համեմատէ իրարու հետ, կ'ընտրէ նման նախադասութիւնները եւ այդ չորսէն կը կազմէ մէկը, որը յունա-լատինական աղբիւրներու մէջ կ'անուանուի *diatessaron*, որ բառացի կը թարգմանուի «Աւետարան առ ի չորից»:

Հայ մատենագրութեան մէջ Ե. դարու ընթացքին արդէն կը հանդիպինք համաբարբառ բառին՝ գործածուած վերոյիշեալ իմաստով: Դ. դարու ասորական մատենագիր Եփրեմ Խուրի Ասորիին կատարեք է Տատիանոս Ասորու համաբարբառի մեկնութիւնը, որը Ե. դարու մէջ թարգմանուած է հայերէն ու վերնագրուած «Մեկնութիւն համաբարբառի, որ ըստ չորից աւետարանչաց» (1): Ի դէպ, պահպանուած է այդ աշխատութեան միայն հայերէն օրինակը:

Եփրեմ Խուրի Ասորիի կատարած համաբարբառի մեկնութեան մասին գաղափար կազմելու համար բերենք քանի մը օրինակներ. այսպէս՝

«Ձոր ինչ ասեմ ձեզ ի խաւարի, ասացէք զայն ի լուսոյ».
մեկնութիւնը՝ «Ձոր ինչ ծածուկ խօսիմ ընդ ձեզ, ի ձայն բարձր քարոզեսցիք»:

Կամ՝ «Երկուս, ասէ, ճնհողկ զանկի միոջ վաճառին».
մեկնութիւնը՝ «Երկուս եւ ոչ թէ մի: Յուցանել կամեցաւ գտկարութիւն ճնհողկին: Իսկ որ առաւելն են, մի մի վաճառին. եւ որ տկարն են, միանգամայն բազումք իրբեւ զբանջար վաճառին» (2): Եփրեմ Խուրին այս ձեւով կը մեկնէ ամբողջ համաբարբառը:

Հայագէտ-լեզուաբան Պօղոս Էսապալեանը (1910-1973թթ.) Տատիանոս

Ասորիի համարարքառի վերաբերեալ քննական հետազոտութիւն մըն է կատարած ու պարզած, որ Ե. դարու մէջ այդ համարարքառը թարգմանուած է եղբր հայերէն եւ լայն գործածութիւն է ունեցեր: Տատիանոսի համարարքառէն, Ագաթանգեղոսի, Եզնիկ Կողբացիի, Ղազար Փարպեցիի երկերէն քաղած առանձին հատուածներ համադրելով միմեանց հետ՝ ան ապացուցած է համարարքառի ազդեցութիւնը յիշեալ մատենագիրներու վրայ: Այդ բանը հաստատելու համար քրեմնի հետեւեալ օրինակները:

«Ես ոչ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս, այլ կատարել» (Համարարքառ): «Եկի կատարել զօրէնս եւ զմարգարէս» (Ագաթանգեղոս): Կամ՝ «Որ հայեսցի ի կին մարդ ի պատնառս ցանկութեան՝ անդէն իսկ շնացաւ ի սրտի իւրում» (Համարարքառ):

«Որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ, անդէն շնացաւ ի սրտի իւրում» (Եզնիկ Կողբացի):

«Որ հայի ի կին մարդ ի պատնառս ցանկութեան անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում» (Ղ. Փարպեցի):

Այս եւ քանի մը այլ հատուածներ համեմատելով Աւետարաններու եւ Տատիանոսի նոյն հատուածներու հետ՝ Պօղոս էսապալեանը այն հետեւութիւնն է ըրած, թէ մեր մատենագիրները օգտուած են Համարարքառէն եւ ոչ թէ Աստուածաշունչէն, որովհետեւ այդ հատուածները համարարքառին աւելի մօտ են, քան Աստուածաշունչին (3):

Եւսեբիոս Կեսարացիի նամակէ մը՝ գրուած ոմն Կարպիանոսի (4), կը տեղեկանանք, որ Գ. դարու մէջ համարարքառ է կազմեր քրիստոնեայ իմաստասէր Ամոն Աղէֆսանդրացին: Ան չորս Աւետարանները աղիւսակի ձեւով դրած է իրարու ղուով: Ատոր համար անոր համարարքառը կարելի է կոչել աղիւսակային համարարքառ:

Յաջորդ դարու մէջ համարարքառ է կազմած նոյն ինքը՝ Եւսեբիոս Կեսարացին: Անոր համարարքառը Ե. դարու առաջին կէսին թարգմանուեր է հայերէն: Եւսեբիոս Կեսարացին եւս կազմած է չորս Աւետարաններու համարարքառը: Ան իւրաքանչիւր Աւետարան քաժնած է հատուածներու եւ ապա որոշած է, թէ քանի՞ իրարու նման հատուածներ (զուգորդումներ) կան եւ քանի՞ Աւետարանի մէջ՝ չորսի, երեքի, երկուի: Այդ նմանութիւններու հիման վրայ Եւսեբիոսը ի յայտ է բերած 10 տեսակի խմբաւորումներ եւ ատոնք անուանած է կանոններ կամ աղիւսակներ (5): Այսպէս՝

Ա. կանոն՝ Մատթէոս-Մարկոս-Ղուկաս-Յովհաննէս (71 զուգորդում):

Բ. կանոն՝ Մատթէոս-Մարկոս-Ղուկաս (111 զուգորդում):

Գ. կանոն՝ Մատթէոս-Ղուկաս-Յովհաննէս (22 զուգորդում):

Դ. կանոն՝ Մատթէոս-Մարկոս-Յովհաննէս (26 զուգորդում):

Ե. կանոն՝ Մատթէոս-Ղուկաս (80 զուգորդում):

Զ. կանոն՝ Մատթէոս-Մարկոս (48 զուգորդում):

Է. կանոն՝ Մատթէոս-Յովհաննէս (13 զուգորդում):

Ը. կանոն՝ Ղուկաս-Մարկոս (13 զուգորդում):

Թ. կանոն՝ Ղուկաս-Յովհաննէս (21 զուգորդում):

Ժ. կանոն՝ զուգահեռ չունեցող հատուածներ. ա) Մատթէոս՝ (61 հատուած), բ) Մարկոս (19 հատուած), գ) Ղուկաս (73 հատուած), դ) Յովհաննէս (98 հատուած):

Եթէ Ամոն Աղէֆսանդրացին Աւետարաններու նման հատուածները կը նշէր բնագրերով, ապա Եւսեբիոս Կեսարացին կը նշանակէ տառերով: Ինչպէս, օրինակ՝

Ա. կանոն՝

Մատթեոս Մարկոս Ղուկաս Յովհաննէս
 Ը Բ Է Ժ
 ԺԱ Դ Ժ Զ

Նման համաբարբառներն ալ կարելի է կոչել աղիւսակածել կամ կանոնածել համաբարբառ:

ԺԳ դարէն սկսեալ հայկական ձեռագիրներու մէջ հանդէս կու գայ կանոնածել կամ աղիւսակածել համաբարբառի նոր տեսակ մը, ըստ որում Աւետարանները կը բաղդատուին մէկմէկու հետ: Այդ կանոնները չորսն են, այսինքն՝ իւրաքանչիւր Աւետարանի համար մէկը, եւ գետեղուած են անոր սկիզբը: Այդպիսի կանոններ կան Զօհրապեան հրատարակութեան մէկ հատորանի Աստուածաշունչի մէջ (6):

Գնալով կը կատարելագործուին համաբարբառ կազմելու սկզբունքները, եւ ի վերջոյ հանդէս կու գայ բառարանային սկզբունքով կազմուած համաբարբառը: Նման համաբարբառները եւրոպական գրականութեան մէջ անուանուած են Concordantia (concordantiae), Concordance, harmonia, simphonia.

Նոր տեսակի համաբարբառի հիմնադիր կը համարուի Փարիզի Դոմինիկեան վանական, Կարտինալ դե-Սանկտո Կառօ Հուգոնը (1206-1263 թթ.): Ան դոմինիկեան 500 վանականներու աջակցութեամբ 1263թ. աւարտած է Սուրբ Գիրքի լատիներէն քննարկի համաբարբառը՝ Concordantiae Sarcorum Bibliorum («Համաբարբառ Սուրբ Գրոց») (7): Հուգոնը Աստուածաշունչի իւրաքանչիւր գիրք կը բաժնէ գլուխներու, գլուխները՝ հատուածներու եւ ատոմք կը նշանակէ տառերով լուսանցքներուն վրայ:

Հայերը երկար ժամանակ օգտագործած են թարգմանական համաբարբառները, իսկ յետոյ ստեղծած են իրենց սեփական համաբարբառները: ԺԸ դարու

սկզբնաւորութիւնէն հանդէս կու գան հայկական ինքնուրոյն համաբարբառները՝ կազմուած այբբենական կարգով, այսինքն՝ բառարանային սկզբունքով: Արգրումեցի Անանիա Ալլավերդեանը (8) 1709թ. Շամախի քաղաքը կազմեր է համաբարբառ, որն ունի հետեւեալ վերնագիրը՝ «Ցանկ սրբոց չորից աւետարանչացն Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասու (եւ) Յովհաննու: Հաւաքեալ ի վերայ յայբբենի, գեմի եւ դայի մինչեւ վերջ քէի եւ օյի, բազում աշխատասիրութեամբ, վասն զի ոչ ունելով օրինակ իմն ցանկի, հագիւ կարացի այսֆանս հաւաքել ի սուրբ Աւետարանէ, սակս դիրաւ գտանելոյ գրանսն յԱւետարանոջ»: Ալլավերդեանը իւրաքանչիւր գլխարանի համար ընտրած է վկայութիւններ, որոնք բառակապակցութիւններ են կամ շատ համառօտ նախադասութիւններ:

ԺԸ դարու կէսէն սկսած հանդէս կու գան հայկական տպագիր համաբարբառները, որոնցմէ առաջինը հայ խոշոր քերական, տաղերգու Պաղտասար Դպիրի (1683-1768թթ.) համաբարբառն է: Այն ունի շատ ընդարձակ վերնագիր՝ «Անուամբն Աստուծոյ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Գրքոյն որ կոչի Ցանկ Գիրք Նոր Կտակարանին: Որ պարունակէ յինքեան գրանս ոմանս երեւելիս, եղեալ ըստ այբբենական կարգին հանդերձ համաբարբառով գլխոցն եւ համաձայն տընտմանց: Առ ի դիրապէս գտանել զոր ինչ եւ խնդրիցէ ոք բանս ի սուրբ Նոր Կտակարանին: Կ. Պոլիս, 1753: Ի փառս միշտ փառաւորեալ անանն վերեղելոյ գեր քան զգեր վեհագոյն միոյ գերագոյական աստուածութեան ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ամէն»: Ի հարկէ հայ մատենագրութեան մէջ այն կը յիշատակուի խիստ համառօտ՝ «Ցանկ Գիրք Նոր Կտակարանին» վերնագրով: Սակայն բուն վերնագրին մէջ

Դպիրը շատ համառօտակի կը ներկայացնէ համաքարքառի կառուցուածքն ու նպատակը, այն է՝ քառերը տրուած են այբբենական կարգով, գլուխներու համաքարքիւերու եւ տողերու նշումով, որպէս զի հետաքրքրուողը դիւրութեամբ կարենայ գտնել այն, ինչ որ պէտք կ'ըլլայ իրեն նոր Կտակարանին մէջ: Այդ համաքարքառի ծաւակն է 176 էջ:

Մեր երկրորդ տպագիր համաքարքառն է Ջմիւռնիայի նոր Կտակարանի համաքարքառը (9), որը 604 էջանոց աշխատանք է, իւրաքանչիւր էջը բաղկացած երկու սիւնակէ: Համաքարքառի վրայ կազմողի անունը թէեւ չի նշուած, սակայն Աստուածաշունչի աշխարհարար բնագրի համաքարքառի հեղինակ Վահան Սահակեանը այն կը վերագրէ Դիոնեսիոս Վարդապետին (10):

Մեր առաջին (մանաւանդ Ջմիւռնիայի) համաքարքառների դերը շատ մեծ է նոր, աւելի կատարելագործուած համաքարքառի կազմման համար, որպիսին եղաւ Թաղէոս Աստուածատուրեանի կազմած Աստուածաշունչի համաքարքառը (11): Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի միաբան, վարդապետ Թաղէոս Աստուածատուրեանը (1831-1906թթ.) 1860-1867թթ. ընթացքին կազմած է Հին եւ նոր Կտակարաններու համաքարքառը, որը կը հրատարակուի բաւական ուշ, 1895թ., Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց տպարանէն: Աստուածաբանութեան դասատու, քահանայ Թորոս Տէր-Իսահակեան Ջուղայեցիին համաքարքառին կցած իր «Տեսութիւն ի վերայ Համաքարքառի Ս. Գրոց» խօսքին մէջ կը գրէ համաքարքառի կազմութեան, պատմութեան, կիրառութեան եւ նշանակութեան մասին: Ան կը նշէ, որ համաքարքառը կազմելու ժամանակ Թաղէոս Աստուածատուրեանը օգտուած է Հուգոնի եւ Ջմիւռնիայի համաքարքառներու

կազմութեան սկզբունքներէն, միեւնոյն ատեն լրացնելով ու կատարելագործելով անոնք: Թորոս Տէր-Իսահակեանի կարծիքով՝ համաքարքառի նշանակութիւնը մեծ է ոչ միայն աստուածաբանական, այլ նաեւ լեզուաբանական առումով, լեզուական առնչութիւններու, քառերու իմաստներու եւ անոնց կիրառութիւններու ուսումնասիրութեան համար (12):

Թաղէոս Աստուածատուրեանի համաքարքառի համար հիմք է դարձեր Աստուածաշունչի 1860թ. Վենետիկեան հրատարակութիւնը: Համաքարքառի յառաջաբանի մէջ Աստուածատուրեանը կը նշէ համաքարքառի կազմման եօթը սկզբունք, այսպէս՝ Աստուած եւ Տէր, Յիսուս եւ Քրիստոս գոյգերու գլխաբառը առաջին բաղադրիչն է, անուններու գլխաբառը՝ եզակի ուղղականը, բայերունը՝ աներեւոյթը, պարբերութեան սկզբի եւ շաղկապը դուրս կը ձգուի, աւ երկհնչիւնի փոխարէն Օ կը գործածուի: Սակայն պէտք է շեշտել, որ աստուծոյ մասին լինար բոլոր սկզբունքները: Օրինակ, ոչինչ է ըսուած քառերու ընդգրկման, ընտրած վկայութիւններու ծաւակի մասին եւ այլն:

Ի տարբերութիւն նախորդ համաքարքառներու՝ Թաղէոս Աստուածատուրեանի համաքարքառը կազմուած է այբբենական կարգով. հոն տեղ են գտած Աստուածաշունչի մէջ գործածուած գոյականները, բայերը, ածականները եւ առանձին քառեր միւս խօսքի մասերէն: Այդ կը նշանակէ՝ հոն տեղ չեն գտեր դերանունները, շաղկապները, նախդիրները, մակբայներու մի մասը, եղանակաւորող քառերը, ձայնարկութիւնները, նոյնիսկ ասել բայը: Գլխաբառերու համար ընտրուած վկայութիւնները խիստ համառօտ են, առանց ստորագման: Օրինակ՝

ԱԴԱՄ (գլխաբառը կը տրուի գլխագիրներով).

ՄՆՆ. Բ 21 ... թմբրութիւն ի վերայ

Ադամայ

Ա. Կորն. ԺԵ 45. Մարդն առաջին Ադամ ի շունչ.

Լաւ կ'ըլլար, եթէ ատոնց համար համապատասխանաբար վերցուած ըլլային «Արկ Տէր Աստուած թմբրութիւն ի վերայ Ադամայ» եւ «Եղբւ մարդն առ աջին Ադամ ի շունչ կենդանի» նախադասութիւնները:

Պակասութիւններով հանդերձ մեծ է եղեր եւ է Թաղէս Աստուածատուրեանի կազմած համարաբառի գիտական ու գործնական նշանակութիւնը: Անկէ միշտ ալ օգտուած են եւ կ'օգտուին գրաբարագէտները: Բանասէրներ, լեզուաբաններ եւ այլ մասնագէտներ անոր հիման վրայ կը կատարեն գիտական զանազան ուսումնասիրութիւններ: Սակայն համարաբառի դերը մասնաւորապէս մեծ է եղեր հոգեւորականներու համար: Այդ մասին Վահան Սահակեանը իր կազմած համարաբառի յառաջաբանի մէջ 1963թ. կը գրէ. «Այս վերջինը (խօսքը Թաղէս Աստուածատուրեանի համարաբառի մասին է - Գ. Թ.) հսկայ, մեծադիր հատոր մըն է, հոյակապ, կոթողական աշխատասիրութիւն մը, որ ներկայիս ալ գործածութեան մէջ է Հայց. Եկեղեցւոյ Դպրեվանդներուն մէջ» (13):

Բայց եւ այնպէս յիշատակուած եւ չյիշատակուած կարգ մը թերութիւններու պատճառաւ Թ. Աստուածատուրեանի համարաբառը չի կրնար բաւարարել աշխարհականներու եւ հոգեւորականներու այսօրուան բոլոր պահանջները: Ֆրանսացի անուանի հայագէտ Անթուան Մէլլէն (1866-1936թթ.) այդ համարաբառի մասին գրած է. «1895թ. Երուսաղէմում հրատարակուած Աստուածաշունչի համարաբառը բաւականին արատաւոր է եւ թերի» (14):

1963թ. Պէյրութ ֆաղափի մէջ լոյս կը տեսնէ Վահան Սահակեանի կազմած

Աստուածաշունչի աշխարհաբար թարգմանութեան համարաբառը (15): Աշխարհաբար համարաբառի անհրաժեշտութիւնը կազմողը կը հիմնաւորէ վերջին հարիւր տարիներին արեւմտահայութեան կողմէ Աստուածաշունչի աշխարհաբար տեքստէն լայնօրէն օգտուելու հանգամանով: Ըստ նրան՝ համարաբառի նպատակը «Սուրբ-գրասէր մեր ազգին ծառայութիւն մատուցելն է» (16):

Վահան Սահակեանի համարաբառը իր կազմութեան սկզբունքներով նման է Թաղէս Աստուածատուրեանի համարաբառին: Այդ մասին ան կը գրէ. «Աստուածատուրեանի գրաբար համարաբառը հիմ եւ առաջնորդ եղաւ մեր աշխատասիրութեան» (17):

Աշխարհի շատ ժողովուրդներ, զգալով համարաբառի դերն ու նշանակութիւնը բանասիրութեան, լեզուաբանութեան, տեքստաբանութեան, գիտութեան պատմութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններ կատարելու համար, Աստուածաշունչից բացի, կազմած են նաեւ իրենց մեծ գրողներու, բանաստեղծներու, իմաստասէրներու ստեղծագործութիւններու համարաբառները: Այսպէս օրինակ, համարաբառի են վերածուած Շէյքսպիրի, Կէօթէի, Մոլիէրի, Սերուանթէսի, Պուշկինի եւ այլոց երկերը:

Նման համարաբառներ ունենալու խնդրով մտահոգուած են եղեր նաեւ հայ աշխարհական ու հոգեւոր մտաւորականներէն շատերը: Այս բնագաւառին մէջ եւս մասնաւորապէս մեծ է Մխիթարեաններու ծառայութիւնը: Սկսած ԺԼ դարէն մինչեւ մեր օրերը անոնք կազմած են Ե. դարու հայ մատենագիրներու, ինչպէս նաեւ Ոսկեբերանի, Պողոսի, Ս. Բարսեղի, Եւսեբիոս Կեսարացիի, Սեբեթիանոսի եւ այլոց գիրքերու ֆարտաբանները, իսկ Եզնիկ Կողբացիի, Եղիշէի, Գրիգոր Նարեկացիի եւ Բանի մը այլ հեղինակներու

երկերը վերածած են համարաբառներու, որոնք, ցաւօք սրտի, մնացած են անտիպ:

1950ական թուերին համարաբառի կազմման նոր փուլ մը կը սկսուի Հայաստանի գիտութիւններու կանառէն ներս: Կանառի մասնագէտներու խումբ մը՝ ակադեմիկոս Արարատ Ղարիբեանի ընդհանուր ղեկավարութեամբ, հիմք ունենալով նախորդ, մանաւանդ Թադէոս Աստուածատուրեանի համարաբառը, նախ կը կազմէ Ե-ժէ դարերու գրաբարագիր շուրջ քառասուն հեղինակներու երկերի քարտարանները, եւ ապա ատոնց հիման վրայ՝ անոնց համարաբառները: Բոլոր համարաբառները ըստ կազմութեան կարելի է խմբաւորել երկու տեսակի մէջ՝ բառա-ֆերականական եւ բնագրային (տեքստուալ): Առաջին տեսակին կը պատկանին Մովսէս Խորենացիի, Ներշէի, Ղազար Փարպեցիի երկերի համարաբառները: Եթէ առաջին տեսակի համարաբառներու մէջ այբբենական եւ ֆերականական որոշակի կարգով տեղ են գտեր հեղինակի գործածած բոլոր բառերն իրենց կիրառութիւններով, ապա բնագրային համարաբառներու մէջ իւրաքանչիւր բառի համար բերուած են նաեւ բնագրային ընդարձակ վկայութիւններ: Բնագրային առաջին համարաբառը լոյս տեսաւ 1972թ. (Եզնիկ Կողբացի, Նոյն աղանդոց, կազմող՝ Գ. Թօսունեան): Անոր յաջորդեցին Կորիւնի, Ագաթանգեղոսի, Փ. Բուզանդի, Ներշէի, Ղ. Փարպեցիի, Մ. Խորենացիի, Աեւոնդ Վարդապետի, Գր. Նարեկացիի, Յովհաննէս Դրասխանակերտցիի, Ասողիկի, Մխիթար Անեցիի, Մխիթար Այրիվանեցիի, Վարդան Պատմիչի, Ֆրիկի եւ ուրիշ շատ հեղինակներու համարաբառները, որոնք հրատարակուած են գլխաւոր (ռոտատոր) մեքենայով մոմաթերթերը բազմացնելու միջոցով: Ցաւօք սրտի, կազմուած բազմաթիւ համարաբառներ ալ ցարդ

մնացած են անտիպ, ինչպիսիք են՝ Ստ. Օրբէլեանի, Սմբատ Սպարապետի, Ուխտանէս Եպիսկոպոսի, Յովհան Օսնեցիի, Արիստակէս Լաստիվերդցիի, Մխիթար Հերացիի, Կիրակոս Գանձակեցիի, Վարդան Բարձրբերդցիի եւ շատ ուրիշ հեղինակներու երկերի համարաբառները:

Համարաբառները, առանձնապէս անոնց բնագրային տեսակները լայն հնարաւորութիւն կ'ընձեռեն ուսումնասիրելու ոչ միայն տուեալ հեղինակի լեզուն, այլ նաեւ բաղդատելու տարբեր հեղինակներու ու տարբեր ժամանակներու լեզուները միմեանց հետ եւ հանգամանօրէն բացայայտելու լեզուական առանձին շերտերը:

Համարաբառը հարիւրաւոր անգամ կը դիւրացնէ ու կը փութացնէ հետազոտողի աշխատանքը: Համարաբառները մեծ օժանդակութիւն կրնան ցոյց տալ բանասէրին, լեզուաբանին, պատմաբանին, իմաստասէրին եւ բոլոր անոնց, ովքեր կը հետաքրքրուին լեզուի, գրականութեան, մշակոյթի եւ ժողովուրդներու պատմութեան հարցերով:

Համարաբառի դերն ու նշանակութիւնը շատ բարձր են գնահատեր աշխարհի բազմաթիւ հայագէտներ, ինչպէս, օրինակ, Յակոբ Անասեանը, Էդմոնդ Շիւտցը, Զ. Բոլոնիեզի, Հ. Պ. Տէր-Պօղոսեանը, Վ. Շիլակաձէն, Գ. Թօսունեանը եւ ուրիշներ: Պատմաբան-հայագէտ Յ. Անասեանը հայկական համարաբառներու մասին գրած է հետեւեալը. «Հայագիտութիւնը մեր օրերում, եթէ ուզում է շարունակել իր զարգացման ընթացքը համաշխարհային մակարդակով, չի կարող անտեսել բանասիրական աշխարհում կիրառուող ժամանակակից մեթոդները, որոնց թւում՝ հետազոտութեան համարաբառային մեթոդը: Հայ բանասիրութիւնն ամէն ֆայլափոխում իր առջեւ ծառայած է

գտնում աղբիւրագիտական եւ քննադարանական խնդիրներ, որոնց արագ լուծմանը կարելի է հասնել միայն համարարանի օգնութեամբ» (18):

ԱՂԲԻԻՆՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք, հատոր 2, Վենետիկ, 1836.
2. Անդ, էջ 88-89.
3. Տե՛ս Պ. Էսապայեան, Տատիանոսի համարարանն եւ հայերէն Աւետարաններու առաջին բարգմանութիւնը, Վիեննա, 1937.
4. Ա. Վարդանեան, Մատենագրութիւնք Եւբադի, Վիեննա, 1930.
5. Այդ աղիւսակները կան Երեւանի Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 2374, 6200, 7735 ձեռագիրներու մէջ:
6. Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1805.
7. Տե՛ս Բրոկհաուզի եւ Եֆրոնի հանրագիտական բառարանը, Ս. Պետերբուրգ, 1900, հատոր 58, էջ 954 (ռուսերէն):

8. Տե՛ս Երեւանի Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 2099 ձեռագիրը:

9. Համարարան կամ նմանաձայն բառից նորոյ Կտակարանի այբբենական կարգաւ շարադասեալ, Զմիւռնիա, 1848.

10. Վահան Սահակեան, Համարարան Աստուածաշունչ մատեանի Հին եւ Նոր Կտակարանաց արդի աշխարհարարով, Պէյրուք, 1963, էջ Դ:

11. Թագէտոս Աստուածատուրեան, Համարարան Հին եւ Նոր Կտակարանաց, Երուսաղէմ, 1895.

12. Անդ, էջ Թ:

13. Վահան Սահակեան, Համարարան Աստուածաշունչ մատեանի, էջ Գ:

14. Տե՛ս Ա. Մէլլէ, դասական հայերէնի համեմատական քերականութեան ուրուագիծ, բարգմանիչ՝ Մարտիրոս Մինասեան, Ժնև, 1988 էջ 16.

15. Վահան Սահակեան, Համարարան Աստուածաշունչ մատեանի Հին եւ Նոր Կտակարանաց արդի աշխարհարարով, Պէյրուք, 1963.

16. Անդ, էջ Դ.

17. Անդ, էջ Դ

18 Տե՛ս «Էջմիածին» (ամսագիր), 1972, թիւ Բ, էջ 59:

ԳԼՈՐԳ ԹՕՍՈՒՆԵԱՆ

ԵՐԳԻՇԱՆՔ

ԹԷ ՈՐԲԱՆ ԽՐԹԻՆ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ԳՐԱԲԱՐԸ

Գրաբարը՝ Հայոց հին գրական լեզուն, թեև ընդհանուր առմամբ շատ հեռու չէ արդի հայերենից, սակայն շատերի համար անմատչելի է: Վերջին շրջանում անել է հետաքրքրությունը գրաբարի նկատմամբ. գանազան ուսումնական հաստատություններում այն դասաւանդում է որպէս հիմնական կամ օժանդակ առարկայ: Ստորեւ մենք ներկայացնում ենք հայ միջնադարեան ամենանշանաւոր հեղինակներից մէկի՝ խրթին գրաբար օգտագործող Գրիգոր Մագիստրոսի, մի փոքր երկի վերծանութիւնը՝ կատարուած Հրաչեայ Անառեանի կողմից:

Յիշեալ երկը, որը կարելի է երգիծական ժանրին դասել (այն Գրիգոր Մագիստրոսի կծու պարսաւանքն է ուղղուած իր հակառակորդներից մէկին) իր լակոնիկ, խրթին ոճով յատկանշական չէ մեր միջնադարեան գրականութեան համար. եւ ծածկագրի պէս մի բան է, որը չեն կարողացել վերծանել նաեւ գրաբարի գիտակներից շատերը: Բայց Անառեանին յաջողուել է վերծանել այն եւ հրապարակել «Հանդէս Ամսօրեայ»ում 1923թ.:

Ներկայացնում ենք հատուածներ այդ յօդուածից հիմնականում մէջ բերելով՝ նախաբանը, բուն բնագիրը, վերակազմեալ բնագիրը եւ աշխարհարար թարգմանութիւնը: Ձեռն ներկայացնում բառերի հեղինակային հանգամանալից բացատրութիւնները եւ վերծանութեան մանրամասները. քանի որ մեր նպատակն է պարզապէս պատկերացում տալ այն մասին, թէ որքան խրթին կարող է լինել գրաբարը:

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ «ՄՐԳՈՒՋ ՓԱՆԱՔ»Ի ԼՈՒՇՈՒՄԸ

ԺԱ դարու հեղինակ խրթնախօսն Մագիստրոս՝ չորս փոքր ոտանաւոր գրութիւն թողուցած է մեզի. որոնք իրենց առաջին բառերու համաձայն կը կոչուին 1. «Գամագտական». 2. «Մրգուզ փանաք». 3. «Գանգիւն բախիւն». 4. «Կէտ կարթիւ» (տպուած վերջին անգամ Ալեքսանդրապոլ, 1910 Կ. Կոստանեանի հրատարակութեամբ. «Գրիգոր Մագիստրոսի թղթերը» էջ 133-135 եւ 236-240):

Եզիպտական մեհենագիր գրութեանց նման անիմանալի բաներ էին ասոնք, երբ յանկարծ Նորայր Բիւզանդացին Շամպոլիոնի նման գտաւ հանելուկին բանալին եւ առաջին անգամ ինքն ձեռք գարկաւ լուծման գործին: Այս բանալին էր «Գամագտական»ի առաջին կէսին թարգմանութիւնը, զոր թողուցեր էր ինքն Մագիստրոսը, որով եւ կարելի եղաւ այդ անիմանալի գրուածքին առաջին կէսին գաղտնիքներուն թափանցել (տե՛ս «Բանբեր» 1900, էջ 119-140):

Նորայրի գործը շարունակեց Հ. Գ. Մէնելիշեան, որ հիմնուելով Մագիստրոսի կիսատ թարգմանութեան եւ հին ձեռագիրներու մէջ պահուած Գրթողական բառ-գրքերու վրայ՝ շատ յաջող կերպով լուծեց ամբողջ Գամագտականը (տե՛ս Գրիգորի Մագիստրոսի «Գամագտականի» «ամբողջական լուծում». երկասիրեց Հ. Գ. Մ. Վ.

Մենեիշեան, Վիեննա, 1912):

Այսպէս վերջացաւ «Գամագտական»ի գործը:

Քաջալերուելով Հ. Մենեիշեանի օրինակէն եւ հետեւելով մասամբ իր գծած ուղիին՝ կը ձեռնարկեմ ես ալ լուծելու Մագիստրոսի երկրորդ անիմանալի գրութիւնը «Մրգուզ Փանաֆ»ը:

Իբր բնագիր կը գործածեմ Կոստանեանի հրատարակածը (էջ 237), հանդերձ ձեռագրական տարբերութեամբ (էջ 279), իսկ իբր մեկնութեան միջոց ունիմ նոր Հայկազեան բառարանը (ՆՀԲ). Առձեռնը (ՍԲ). Մենեիշեանի գիրքը եւ Երեմիա վարդապետի «Բառգիրք հայոց»ի կրկին հրատարակութիւնները (Ա. տպ. Ալիկոռնա. 1968 թ. տպ. 1729):

ԲՆԱԳԻՐ

(Ըստ Կ. Կոստանեանի, էջ 237)

- 1.- Մրգուզ փանաֆ ծրդեալ ծեֆեալ անհոյծ ոգեալ յառեալ.
2. Իրագեկ խանտեալ մանձրեալ յարագինեալ իսկոյն յահրեալ.
3. Մանչուկ մանչոն ճահեեալ դամեկեալ ըմբահակեալ.
4. Դիւրադատ պատեմեալ անոահավար պարայածեալ:
5. Որջասոյգ եւ գրուանող ծեֆեալ նոծեալ ապագոնեալ.
6. Փինատ թեֆըտ փեացեալ ապա գինիւ բաց սսացեալ.
7. Հի՞կէն գոյս կոյր կոպանեալ թափառական կոկոզացեալ.
8. Ամայի բաղադրեալ առ վիրական ի գուր խոնջեալ:
9. Անխորասոյգ արժոք կարծեալ արտօրինեալ բարուրեալ.
10. Անդրուստ գրուակ բոսոր անիրապէս ըմբոշխորեալ.
11. Անճոռնի տիպ դիմառեալ ապաժաման լաւից եղեալ.
12. Ընկրկեալ թոպեալ թրմեալ խողեալ ի յայտ տրամակայեալ:
13. Բոսորագոյն հաշմեալ չույածական արտալածեալ.
14. Իւղագործ կիւտ կածմական յուզեալ խուզեալ եւ խողխողեալ.
15. Անհեթեթ վիթխարացեալ հրագիմացող գաղափարեալ
16. Մեզդետ մախիզ գոփեալ միտեալ յարդեալ յարդեալ առասանեալ:

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ԲՆԱԳԻՐ

- 1.- Մրգուզ փանաֆ ծրդեալ ծեֆեալ անհոյծ ոգեալ յառեալ.
2. Իրագեկ խանտեալ մանձրեալ յարագինեալ իսկոյն յահրեալ.
3. Մանչուկ մանչոն ճահեեալ դամեկեալ ըմբահակեալ.
4. Դիւրադատ պատեմեալ անոահավար պարայածեալ:
5. Որջասոյգ եւ գրուանող ծեֆեալ, նոծեալ, ապագոնեալ.
6. Փինատ փեֆդ փեացեալ ապագինիւ բացասացեալ
7. Հիկէն գոս կոյր կոպանեալ. թափառական կոկոզացեալ.
8. Ամայի բաղադրեալ առվիրական ի գուր խոնջեալ:
9. Անխորասոյգ արգոք կարծեալ արտօրինեալ բարուրեալ.
10. Անդրուստ գրուակ բոսոր անիրապէս ըմբոշխարեալ
11. Անճոռնի տիպ դիմառեալ ապաժաման լաւից եղեալ.
12. Ընկրկեալ թոպեալ թրմեալ խողեալ ի յայտ տրամակայեալ:

13. Բոսորագոյն հաշմեալ չույածական արտալածեալ.
14. Իւղագործ կիւղ կածնու չան յուզեալ. խուզեալ եւ խողխողեալ
15. Անհեքեք վիթխարացեալ հրաշխմացող գաղափարեալ
16. Մեղդետ մախիզ գոփեալ միտեալ յարդեալ առասանեալ:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Նայելով իմ հասարակ ըսածներուս՝ կը ցնդաբանէիր, թէ անոնք անպիտան, գծուծ ու աղտոտ բաներ են:
2. Երբ իրագեկ եղար, նախանձով վառեցար ու մրկեցար, ու զէնք առիր, շուտ մը դէմս յանդգնեցար:
3. (Իբրեւ) մանչուկ մը փոքր տղայ մը ստահակեցար ընդվզեցար եւ ըմբոստացար:
4. Դիւրին բան մը երեւեցաւ քեզի, բայց հիմա ճամբադ կորսնցուցած՝ ման կու գաս ասդին անդին:
5. Որչիդ մէջ պահուած՝ ծածուկ կը ցնդաբանէիր, հիմա (ընկճուեցար), պարտուեցար:
6. Խեղճ ու թշուառդ հպարտացեր էիր, հիմա յայտնապէս ու վճռաբար անզէն ու տկար կոչուեցար:
7. Ինչպէս կոյր կը դեգերիս թափառական, դու որ մեծամտեր էիր:
8. Ի զուր իրար խառնեցիր (գրուածքէս բան մը հասկնալու համար), ի զուր եւ ի զուր յոգնեցար:
9. Պարզ (կամ դիւրահասկանալի) խօսք մը համարեցիր, բայց չափէ դուրս դատապարտուեցար:
10. Նախատական ամօթալի խօսքը պարապ տեղը (կերար):
11. Դէմքդ անճոռնի կերպարանք մը առաւ (քիթդ-բերանդ թթուեցուցիր), լաւ բանի չհասար:
12. Ետ քաշուեցար, ծեծ ուտելով՝ թմրած մնացիր եւ յայտնի կերպով հասկցար (ըմբռնեցիր):
13. Ամօթահար ջարդուեցար, աստանդական հալածուեցար:
14. Թանաք-գրիչդ փնտրեցիր, որոնեցիր եւ խուզարկեցիր:
15. Շատ մեծ, խոշոր, հրաշալի գիտուն կարծեր էիր քեզ:
16. Բանտարկուած անտեղեակ, նեղը մնացած, խոնարհեցար կարգի եկար ու մարդ դարձար:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՅՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Հնագոյն ֆաղափակրթութեան օջախ Հայկական լեռնաշխարհում ստեղծուած նիւթական մշակոյթի համակարգում կարեւոր տեղ է զբաղեցնում մետաղագործութիւնը: Մարդու մշակած, կերպաւորած մետաղէ իրերի, առարկաների ամենահին նմուշները, պղնձէ կերտուածքների ոչ մեծ հաւաքածոն գտնուել են Հայաստանի հարաւում, Տիգրիս գետի վերին հոսանքում, Զայոնու Թեփեսի հնավայրում: Այդ գիւղատեղիում կատարուած հնագիտական պեղումների միջոցին յայտնաբերուել են արտակարգ հետաքրքիր նիւթեր՝ օֆսիդացած պղնձէ հանքաքարի (մալափոս) բեկորներ, ուլունքներ, ձողիկ-ճորոցներ եւ ոչ մեծ ֆառանիստ ծակիչի բեկոր: Այդ առարկաները կերտուել են առանց ձուլելու, առանց ձուլադրոշմի, այլ կոելու, կոփելու սառը եղանակով: (1) Հնագիտական տուեակները հաւաստում են, որ յաջորդ երեք հազար տարիների ընթացքում Հին աշխարհում, այդ շարքում եւ Հայկական լեռնաշխարհում տեխնիկական, տեխնոլոգիական փոփոխութիւններ տեղի չեն ունցել: Պատմական այդ տեւական ժամանակաշրջանում շարունակում են կենցաղավարել տեխնիկական պարզունակ եղանակով կերտուած պղնձէ հասարակ, անշուք գարդերը: Հայկական լեռնաշխարհի հին մետաղագործները մ.թ.ա. V-IV հազարամեակներից սկսած իրացնում են մետաղը մշակելու տեխնիկական բարդ եղանակներ եւ ստանում առաւել բարդ կառուցուածք ունեցող արտադրանք: Այս տեխնիկական առաջընթացի վկայութիւններ են էջմիածին ֆաղափին մերձակայ Թեղուտ (2) անուկով յայտնի հնավայրի եւ Նախիջեւանի Մոխրարուրի (3) (Քուլթափայ) գտածոները: Այս յուշարձաններից յայտնի

դարձած ոչ մեծ ֆանակ ներկայացնող պղնձէ առարկաները ցոյց են տալիս, որ պերճանքի առարկաներին զուգընթաց երեւան են եկել աշխատանքային՝ ծակող, դանակ յիշեցնող գործիքներ, որոնք ստեղծուել են սառը եւ տաք եղանակներով՝ դարիեակներով (ձուլադրոշմներով, կաղապարներով): Պերճանքի առարկաներ եւ աշխատանքային գործիքներ պատրաստելու այդ եղանակն ըստ երեւոյթին շարունակում է մինչեւ մ.թ.ա. IV հազարամեակի կէսերը: Մետաղագործութեան վարպետները մ.թ.ա. IV հազարամեակի կէսերից սկսած իրացնում են տեխնիկական նոր եղանակ՝ դարիեակ-ձուլադրոշմների մէջ տաք եղանակով ձուլումը: Այդ նորարարութիւնը հնարաւորութիւն էր ընձեւում աւելի փչ աշխատանք եւ ժամանակ վատնելով ստանալ, կերպաւորել առաւել զանգուածեղ եւ ժամանակակից գործիքներ ու գէմքեր: Այդ նորարարութիւնը շատ մեծ, հանճարեղ տեխնիկական յայտնագործութիւն էր, որը զարգացման մի նոր աստիճանի բարձրացրեց հնագոյն մետաղագործութիւնը: Գիտութիւնը տակաւին դժուարանում է արձանագրել, թէ երբ եւ որտեղ է իրագործուել այդ արտակարգ կարեւոր յայտնագործութիւնը: Ցաւօք, մենք երբեք չենք իմանայ այն հանճարեղ վարպետին, որն առաջինը կիրառեց դարիեակ-ձուլադրոշմը (կաղապարը) որպէս միջոց, եղանակ պատրաստի մետաղէ կերտուածք ստանալու համար:

Հայկական լեռնաշխարհում դարիեակ ձուլադրոշմի կիրառութեան սկիզբը համընկնում է վաղ քրոնզի փուլի հետ: Այդ ժամանակի արգասիք են

արտադրութեան գործիքների առաջին գիտերը (Շէնգաւիթ, Գառնի, Արեւիկ, Նախիջեւան, Մոխրաբլուր (Քիւլթափայ), Բարա-Դերվիշ եւ այլն): Հնագոյնը սեպածե կոթառով կացնի ձուլադրոշմն է, որը յայտնաբերուել է Երեւանից 20 կմ հեռաւորութեան վրայ՝ Գառնի հնավայրում (է. Խանգաղեան): Հնագոյն բրոնզաձուլութեան այդ ինքնատիպ նմուշը՝ հրակայուն թրծած կաւից կերտուած դարիհակ-ձուլադրոշմը, գտնուել է կլոր յատակագիծ ունեցող կացարանում (մ.թ.ա. III հազ.), վաղ բրոնզեդարեան ուղեկցող հնագիտական նիւթերի հետ մէկտեղ: (4) Ձուլադրոշմի տապակի երկարութիւնը 17, լայնութիւնը 7 սմ. է: Եզրերին ունի երկու միջանկեալ փորուածքներ՝ միւս կէսին ամրացնելու համար: (5) Այդ ամրացումը, հպումը նրա համար էր, որ հեղուկ մետաղը ձուլելիս ձուլադրոշմ-դարիհակի փեղկերն իրար չկպչէին, որովհետեւ եթէ փեղկերը հպուած չլինէին, կերտուածքը կը դառնար անհաւասար եւ կը ստացուէր խոտան: Կոթառի հատուածում կայ յատուկ յարմարանք, որտեղ դրուում էր դիւրին ջարդուող ֆարից կամ թրծած կաւից ձող, որի շնորհիւ ձուլելուց յետոյ ստացուում էր բոլորածե միջուկ՝ կախակոթառ բացուածք փայտէ կոթը կացնին (տապարին) ամրացնելու համար: Ըստ ուսումնասիրողների՝ այդ դարիհակի մէջ արուած 11սմ. երկարութիւն ունեցող գիպսէ դրոշմուածքը դառնում էր նրբակերտ սեպածե կացին (տապար): (6) Թրծած հրակայուն կաւից կերտուած, յար եւ նման դրոշմուածքով վաղ բրոնզեդարեան դարիհակ է գտնուել Երեւան ֆաղափից շուրջ 50կմ. հեռաւորութեան վրայ գտնուող Արեւիկ հնավայրում: Պահպանուած մասից կարելի է կռահել, որ այդ օրինակ դարիհակներում ձուլում էին կլորաւուն կոթառի վերին մասով ու սեպածե իրանով կացիններ (տապարներ): (7) Դարիհակի երկու փեղկերի

հպումից փորի մասը (հատուածը) ազատ էր մնում, որտեղից էլ լցւում էր հեղուկ մետաղը, այսինքն՝ բրոնզը (պղնձի եւ անագի խառնուրդը), իսկ այդ անցփից ցնդում, դուրս էին գալիս գազերը: Դանդաղ սառչելով ու գազերը ցնդելով՝ ձուլուող բրոնզէ իրը դառնում էր պինդ, ամուր, առանց ճաքերի եւ գազերից առաջացած խոռոչների: Այդ գործընթացն ապահովում էր մետաղի համասեռ նստուածքը, աւելացնում կերտուող առարկայի ամրութիւնը (Նկ. Ա.): Գառնի եւ Արեւիկ բնակավայրերից յայտնաբերուած կաղապարով ստեղծուած կացինը (տապարը) նման է Նախիջեւանի Մոխրաբլուր (Քիւլթափայ) գտնուած նմուշին (Նկ. Բ.): Այսօրինակ դարիհակ-կաղապարներում, ըստ ուսումնասիրողի, ձուլում էին կացիններ առանց կոթառի համար նախատեսուող բացուածքի. կացինն ուղղակի կապւում, ամրացւում էր կոթառին: Կացնի տարբերակող այդ յատկանիշը ուսումնասիրողին թելադրել է յանգելու այն հետեւութեանը, որ Նախիջեւանի Մոխրաբլուր հնավայրից յայտնի նմուշը կացնի (տապարի) տափակ տիպից կոթառավորի անցման առաւել վաղ ժամանակահատուածի արգասիք է, քան Գառնիից, Արեւիկից յայտնաբերուածները (8): Բացառիկ հետաքրքիր դարիհակ է գտնուել այժմեան Երեւանի բաղկացուցիչ մաս կազմող, երբեմնի առանձին, հնագոյն բնակավայր Շէնգաւիթի (Նկ. Գ.) վերին հնագիտական շերտում (պեղել է հնագէտ Ս. Սարգսբեանը): Հայաստանի հիմնաւորց բրոնզաձուլական գործի բարձր զարգացման գործընթացը առարկայօրէն հաւաստող այդ նմուշը մեզ է հասել տարաբախտաբար անասելի վատ պահպանուած վիճակում: Հայաստանի վաղ բրոնզեդարեան ժամանակահատուածի կառուցողական աւանդներին առանձնապատուկ կլոր յատակագիծ ունեցող մ.թ.ա. III

հազարամեակի կացարանի յատակին յայտնաբերուել են սպիտակ երանգ ունեցող ֆարից՝ կրաֆարից, այդ դարիեակի փեղկերից մէկի բեկորները միայն: (9) Սակայն այդ փոքր բեկորը հնարաւորութիւն է տալիս վերականգնելու այդօրինակ դարիեակներում ձուլուած կացինտապարների ձեւը: Հ. Մարտիրոսեանը գտնում է, որ այդ կաղապարներում ձուլուել են Կումայրիի (Գիւմրի) շրջակայ տարածքում գտնուած բրոնզէ կացնի նման սեպածե սայրով, կտր կոթառով կացիններ: (10) Սեպածե կացնի այս տիպը, գտածոներից դատելով, լայն տարածում է ունեցել Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարեան մշակոյթում:

Ձուլադրոշմների առաւել ուշ ժամանակահատուածի է վերագրում Կումայրիից աւելի քան 10 կմ. հեռաւորութեան վրայ գտնուող մ.թ.ա. III հազարամեակի Հառին անունով յայտնի նշանաւոր հնավայրում, հանգուցեալ վաստակաշատ հնագէտ Տ. Ռաչատուրեանի կողմից յայտնաբերուած դարիեակի նմուշը: Այդ լաւ պահպանուած, ոչ մեծ չափերի ձուլադրոշմի փեղկից դատելով՝ այն ծառայել է մանգաղածե բրոնզէ գործիք ձուլելու համար (Նկ. Գ.): Տ. Ռաչատուրեանը ենթադրում է, որ այդպիսի կաղապարներում ձուլուած աշխատանքային գործիքը ծառայել է կաշի վերամշակելու համար (11): Հայկական լեռնաշխարհում վերը յիշուած դարիեակներից բացի գտնուել են նաեւ մի քանի իւրօրինակ դարիեակներ, որոնց մէջ պատրաստուել են պղնձէ եւ բրոնզէ ձուլակտորներ:

Այդ կաղապարները որպէս կանոն ունեցել են վերին մասում քացուածքով տաշտածե կառուցուածք: Վերջիններիս ձուլակտորները ըստ երեւոյթին ծառայել են հեռաւոր հանձնագուրկ տեղեր փոխադրելու եւ այլ ապրանքներով փոխանակելու համար: Մէկ փեղկով,

տաշտածե այդպիսի կաղապարներ են գտնուել մ.թ.ա. երրորդ հազարամեակի բնակավայրերում, մասնաւորապէս Շիրակում՝ Կումայրիի (Գիւմրի) մօտ, Կառնուտ հնավայրում, Նախիջեւանի Մոխրարլուր (Քիւլթափայ) (12) յուշարձանի երկրորդ հնագիտական շերտում (Նկ. Ե.) եւ Բաթա Դերվիշ բնակատեղիում (13) (Նկ. Զ.): Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. երրորդ հազարամեակի վերջին փուլում սկսուած է միջին բրոնզի մշակոյթը: Մշակոյթի այդ հերթագայութիւնը, այդ արմատական փոփոխութիւնը, որակական բռնիչքը իր արտացոլումն է գտնում հնագոյն հասարակութեան նիւթական եւ հոգեւոր մշակոյթի բոլոր ոլորտներում: Մասնաւորապէս էական տեղաշարժեր են տեղի ունենում մետաղագործութեան բնագաւառում, որոնք ամենից աւելի արտայայտուած են մետաղէ արտադրանքի ձեւերի, տեսականիի ոլորտում: Վաղ բրոնզեդարի կացիններից, դաշոյններից, նիզակներից փոխարինելու են գալիս ասիմետրիկ՝ ոչ հաւասարաթիւ սակրերը, իւրատեսակ բռնակով դաշոյններն ու առաջաւորասիական սուսերները: Երեւան են գալիս խողովակակոթառ նիզակները, աշխատանքային գործիքների, մետաղէ իրերի, առարկաների նոր տեսակներ, պղնձէ-բրոնզէ ամաններ, տեսականի, որը վաղ բրոնզի դարաշրջանում հանդիսանում էր քացառապէս կաւագործութեան արտադրանք: Հայկական լեռնաշխարհի համար բոլորովին նոր երեւոյթ էին թանկարժէք ֆաբրով ընդելուզուած ոսկէ, արծաթէ, պղնձէ մեծարուեստ կերտուածքները, որոնք կերպաւորում, պատրաստում են դրուագելու, փորագրելու, ընդելուզելու տեխնիկական հնարքներով: (14) Հայկական լեռնաշխարհում մետաղն արդէն կիրաւուած է ոչ միայն տնտեսական պահանջներին բաւարարութիւն տուող ոլորտում, այլեւ դառնում

է գէնֆի, մանր, ոչ շֆեղ պերճանֆի առարկաներ պատրաստելու միջոց, դառնում հարստութեան, իշխանութեան խորհրդանիշ, եւ որ, շատ կարեւոր է, սկսում է հանդէս գալ որպէս սոցիալական եւ գոյֆային շերտաւորման հիմնական ցուցանիշներից մէկը, որը միջին բրոնզի ժանակաշրջանում դրսեւորուում է առանձին սրութեամբ:

Հայաստանի միջին բրոնզի դարաշրջանի բազմաթիւ յուշարձանների բազմամեայ պեղումները տակաւին երեւան չեն բերել եւ ոչ մի դարիճակ-ձուլադրոշմի (կաղապարի) նմուշ: Եւ այդ իսկ պատճառով էլ միջին բրոնզի ժամանակշրջանի մետաղարտադրութեան, առտնին իրերի ու առարկաների, գեղարուեստական մետաղագործութեան մասին մեր իմացութիւնները կառուցուում են միայն մեզ հասած պատրաստի արտադրանֆի տուեալների, պեղումների միջոցին յայտնաբերուած նիւթերի հիման վրայ: Միջին փուլին յաջորդող ուշ բրոնզի դարաշրջանում կատարեալ ծաղկում, որակական թռիչք է ապրում մետաղագործութիւնը Հայաստանում: Այդ ժամանակահատուածի պղնձէ-բրոնզէ իրերը բացառիկ կարեւոր տեղ են զբաղեցնում մետաղագործութեան տուեալ տարածաշրջանի մշակոյթի պատմութեան մէջ: Այդ բացառիկութիւնն ամենից աւելի արտայայտուում է նրանում, որ աներեւակայի չափերով շատանում, մեծանում է մետաղէ կերտուածֆների տեսականին: Այժմ արդէն պղնձէ-բրոնզէ գտածոների ֆանակը, նիւթեր, որոնք յայտնաբերուում են այդ ժամանակաշրջանի դամբարաններում (գերեզմաններում) հաշուում են տասնեակ զարդերով, գէնֆերով եւ գործիֆներով:

Հայաստանի տեղական, ինֆնատիպ մետաղագործութեան արտակարգ վերելքը, բուն ծաղկումն են ցուցադրում այնպիսի շֆեղաշուֆ նիւթերով հարուստ ու

ֆառահեղ յուշարձանների պեղումների միջոցին յայտնագործուած հաւաքածոները, ինչպիսիֆ են Մեծամօրը, Լճաշէնը, Արթիկը, Հոռումը, Շիրակաւանը, Լոռէքերդը, Բերդը եւլն: Այս դարաշրջանում է, որ Հայաստանում առաջին անգամ սկսում են կերտել բրոնզէ արձանիկներ՝ արուեստի կատարեալ ստեղծագործութիւններ: Հայաստանի ուշ բրոնզի բազմաթիւ յուշարձաններում հանդիպում ենֆ իրենց գեղարուեստական բարձր ճաշակով եւ ինֆնատիպ տեխնիկական հնարֆների կիրառութեամբ կեանֆի կոչուած մետաղի ֆանդակագործութեան՝ մետաղապլաստիկայի ապշանֆ, գեղագիտական մեծ հանոյֆ պատճառող նմուշների: Առարկայական հաւաստիութեան առումով յիշենֆ գէթ Արթիկ հնավայրի դամբարանադաշտի թաղումներից մէկում գտնուած խարսխածե պատուանդանի վրայ հաստատուած ֆարայծի սֆանչելի բրոնզէ արձանիկը (15) (Նկ.է.): Այդօրինակ բարդ յօրինուածֆներ ձուլելու համար երկֆեղկ դարիճակ-ձուլադրոշմները, որոնց մասին վերը յիշատակեցինֆ, արդէն պիտանի չէին, դրանց մէջ անհնար էր ձուլել Արթիկից յայտնի հրաշագեղ այդ արձանիկը: Հին մետաղագործ վարպետներն այդ բանը ֆաջ գիտակցել են եւ դրա համար էլ գտել են ինֆնատիպ եւ բաւականին պարզ եղանակ, լուծում տալով տեխնիկական այդ դժուարին, բարդ խնդրին: Նախապէս արել են իրենց կամեցած ֆանդակի մոմէ կաղապարը՝ մանրակերտը, այնուհետեւ այն ձեֆել կաւի ջրիկ, նուրբ, բարակ շերտով: Եւ երբ կաւի առաջին շերտը չորացել է, ձեֆելը կրկնել են մինչեւ կաղապարի պատերի ստուարանալը: Այնուհետեւ թրծել են կաւէ կաղապարը, որի հետեւանֆով հալուել, հոսել է ամբողջ մոմը: Այս տաղանդաւոր տեխնիկական հնարֆով ստացել են իրենց ցանկացած դարիճակը եւ նրա մէջ լցրել հեղուկ

մետաղը՝ բրոնզը: Այդ դարիեակների միակ թերին այն էր, որ ձուլումսովը հանելու համար անհրաժեշտ է եղել ջարդել կաղապարը: Ձի յաջողուել ստանալ ինքնատիպ իրերի, առարկաների ընդօրինակութիւններ, քանի որ կաղապարը կարող էր օգտագործուել միայն մէկ անգամ: Մոմէ ֆիգուրները հնարաւորութիւն էին տալիս կերտելու ձուլման արուեստի անկրկնելի գլուխգործոցներ: Մէկ անգամ օգտագործելի դարիեակների հետ մէկտեղ ուշ բրոնզի դարում շարունակուում էր երկփեղկ դարիեակ-ձուլադրոշմներով աւանդական դարձած ձուլումը: Այդպիսի կաղապարների առանձին փեղկեր են գտնուել Հայաստանի բրոնզադարեան բազմաթիւ յուշարձաններում: Այս ժամանակահատուածում ստեղծուած նմուշներից հարկ է յիշատակել Նրեւան քաղաքի ծայրամասում, Հրազդան գետի ափին, բարձունքին հաստատուած Թէլշեքախնի (Կարմիր բլուր) մինչ Վանի թագաւորութեան շրջանի հնագիտական շերտում յայտնաբերուած սակր ձուլելու անդրկովկասեան տիպի բազալտ դարիեակը (16) (Նկ. Ը.): Այս կաղապարներում ձուլում էին սեպով, բութակով սակրի այն տեսակը, որի պատրաստի նմուշները Հայաստանում կենցաղավարում էին մ.թ.ա. XV-XIV դ.դ. Հպանցիկ յիշատակենք նաեւ, որ Թէլշեքախնիում գտնուել են եւս երկու քարէ դարիեակներ, որոնք ծառայել են բրոնզէ ձողեր ձուլելու համար (17) (Նկ. Ը.): Դրանցից հետագայում արւում էին տարբեր նպատակների համար անհրաժեշտ մետաղէ առարկաներ:

Արտակարգ հետաքրքիր է Աշխարբէկ Քալանթարի հրատարակած դարիեակը, որ գտնուել է Կումայրիի (Գիւմրի) մսի կոմբինատի շինարարութեան միջոցին այդ տարածում: Լաւ պահպանուած այդ քարէ ձուլադրոշմը ձեւով կրկնում է անդրկովկասեան մ.թ.ա. XII-XI դդ.

սակրերի ձեւը (18) (Նկ. Թ.): Հայաստանի ուշ բրոնզեդարեան դարաշրջանի բրոնզէ գէնքերի շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում շրջանակաձեւ դաստակով սրերը: Մինչեւ վերջերս անյայտ էր, տակաւին ոչ մի տեղեկութիւն չունէինք, որ իւրայատուկ դաստակով այդ զինատեսակը պատրաստուել է տեղում, Հայաստանում: Վերջերս, պատմական Հայաստանի Կապան գաւառում (Հայաստանի Հանրապետութեան Կապանի շրջան) յայտնաբերուել է հենց այդպիսի շրջանակաձեւ դաստակ ձուլելու քարէ դարիեակ: (19) (Նկ. Ժ):

Այդ ինքնատիպ նմուշը պատրաստուել է տեղական բազալտ քարից: Դարիեակը թէեւ ամբողջական չէ (պահպանուել է միայն դաստակ ձուլելու մասը), սակայն թելադրում է յանգելու այն հետեւութեանը, որ այդ կաղապարներում պատրաստուել են երկար շեղով միաձոյլ սրեր (Նկ. 10):

Հայաստանը, ինչպէս եւ ամբողջ Հին Մերձաւոր Արեւելքը մ.թ.ա. II հազարամեակի վերջին քառորդում թեւակոխում է երկաթի դարաշրջանը: Այդ ժամանակափուլի հնագիտական շերտերում երբեմն կարելի է հանդիպել երկաթէ իրերի, առարկաների վատ պահպանուած առանձին բեկորների: Սակայն երկաթ ստանալու տեխնոլոգիական բարդութեան հետ կապուած՝ այն տակաւին լայն կիրառութիւն չի գտնում, եւ այդ պատճառով շարունակում է գերիշխել պղնձի եւ բրոնզի արտադրանքը: Բրոնզաձուլական գործի վարպետները էլ աւելի են խորամուխ լինում այդ բարդ արհեստի գաղտնիքների մէջ եւ հասնում կատարելութեան բարձունքներին: Այդ է վկայում երկաթի վաղ իւրացման դարաշրջանի մեծ թուով յուշարձանների պեղումներով ի յայտ եկած պատրաստի արտադրանքի, գտածոների հսկայական քանակը: Այդ շրջափուլի բրոնզաձուլական գործը վաւերացում է

դարիհակ-ձուլադրոշմների մի ամբողջ շարքով, կաղապարներ, որոնց մէջ ձուլուել են աշխատանքի գործիհներ, գէնֆ, գարդեր:

Հայաստանում եւ ամբողջ Մերձաւոր Արեւելքում մ.թ.ա. II-ի հազարամեակների նախաշեմին արտակարգ լայն տարածում են գտնում տափակ կացիները, որոնք կիրառութիւն ունէին տնտեսութեան ամենատարբեր նիւղերում (20): Այդպիսի գործիհներ ձուլելու համար մի դարիհակ է գտնուել Մեծամօրի պեղումների միջոցին: Յայտնաբերուած այդ երկփեղղ դարիհակից պահպանուել է մի մասը միայն: Այն իրենից ներկայացնում է կաղապարի քարէ մի փեղղը: Պահպանուած մասի երկարութիւնը շուրջ 13սմ է, լայնքը՝ 7,5սմ: Թիկունքին տեղ ունի՝ փոքր, կլոր ձող ձուլելու համար (21) (Նկ. ԺԱ.): Միւս բաւականին լաւ պահպանուած տափակ կացին ձուլելու կաղապարը գտնուել է Մուխաննաթ Թափայ հնավայրում. երկարութիւնը 19, լայնութիւնը՝ 9սմ է (22): Մեծամօրում յայտնաբերուածից այն տարբերում է կատարման նրբագեղութեամբ (Նկ. ԺԲ): Ամենատարբեր իրեր, առարկաներ, գէնֆեր ձուլելու դարիհակներ են գտնուել Դուին մայրաքաղաքի ակերակներում, հնագոյն շերտերում (վեց նմուշ), մետաղամշակման արհեստանոցը պեղելու միջոցին (23): Այստեղ գտնուած հարթ կացնի կաղապարի բեկորը (երկարութիւնը 9սմ) աւագաքարից է (Նկ. ԺԳ): Այդ արհեստանոցում յայտնաբերուած երկու քարէ կաղապարները ծառայել են բրոնզէ նետասլաֆներ ձուլելու համար (Նկ. ԺԴ.): Հարկ է նշել, որ նետասլաֆներ ձուլելու այդ դարիհակները (կաղապարները) առայժմ եզակի նմուշներ են Հայաստանում: Մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում Դուինում ի յայտ եկած բազմատեսակ գարդեր ձուլելու ձուլադրոշմները (Նկ. ԺԵ): Այդ դարիհակների առանձնայատկութիւնն այն է, որ



փեղղերից մէկը հեղուկ մետաղ լցնելու տեղ ունի: Համադրելի նիւթերը ցոյց են տալիս, որ այդպիսի փեղղը միջանկեալ է. ձուլելիս այդ փեղղի վերից եւ վարից ամրացուել են եւս երկու փեղղեր եւ այդ եղանակով ստացուել է եռափեղղ դարիհակ: Երկփեղղանիի համեմատ այդ կաղապարը (դարիհակը) ունէր որոշակի առաւելութիւն: Միջանկեալ փեղղը գործադրելով, հին մետաղագործ վարպետները շահել են ոչ միայն ժամանակի մէջ, այլեւ հասել նիւթի խնայողութեան: Այսպիսի կաղապարներում կարող էին ձուլել պերճանքի առարկաներ ոչ միայն պղնձից կամ բրոնզից, այլեւ անագից, կապարից, ծարիրից, ոսկուց եւ արծաթից: Այդ իրողութիւնը հաստատում է բազմաթիւ հնագիտական նիւթերով: Հայաստանի վաղ երկաթի դամբարաններում յաճախ ենք հանդիպում դարիհակների մէջ այդ մետաղներից կերտուած պերճանքի առարկաների:

Քննութեան առնելով Հայկական լեռնաշխարհի հնագոյն դարիհակների երկարամեայ պատկանելի պատմութիւնը տեսնում ենք, որ հազարամեակների ընթացքում Հայաստանի տաղանդաւոր ձուլող վարպետները, բազմաշնորհ մետաղագործները մշտապէս գտնուել են իրենց բարդ, մեծ հմտութիւն պահանջող արհեստի կատարելագործման անընդհատ որոնումների ոլորտում: Հնագոյն մետաղագործութեան ողջ պատմութեան ընթացքում երբեւէ ետին տեղում չեն գտնուել Հին աշխարհի, Մերձաւոր Արեւելքի բրոնզ ձուլողներից, իսկ պատմական առանձին շրջափուլերում՝ ուշ բրոնզի եւ վաղ երկաթի դարաշրջաններում հասել են կատարելութեան բարձունքներին, դրանով իրենց մեծ նպաստը բերել Հին Արեւելքի հնագոյն քաղաքակրթութեանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.


1. Բրեդվուդ, Հիսթորիանային Ասիայի վաղնջական Գիւղը, Ձիգակո, 1983, էջ 37 (անգլ.):
2. Թորոսեան Ռ. Թեղուտի վաղ երկրագործական քնակավայրը, Ե. 1976, էջ 60
3. Արիբուլան Օ., Հնագոյն մետաղագործութեան հարցի շուրջը, (ռուս) ՆՈՒՀ (Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ) Մ. 1965, էջ 67
- 4 Խանգաղեան Է. Հայկական Լեռնաշխարհի մ.թ.ա. III հազ. մշակոյթը, Ե. 1967, էջ 47
- 5 Նոյն տեղում, էջ 6
- 6 Նոյն տեղում, էջ 7
- 7 Խանգաղեան Է. Հայկական լեռնաշխարհի եւ Առաջաւոր Ասիայի վաղ բրոնզեդարեան մշակոյթի շուրջը. Բ. 1978, էջ 15
- 8 Արիբուլան Օ. Նախիջեանի տարածքի էնեոլիթը եւ բրոնզը, Բ. 1982, էջ 85 (ռուս.):
- 9 Պիտտրովսկի Բ. Հայաստանի պղնձեդարի քնակավայրերը, Ս. Հնագիտութիւն, 1949, էջ 172 (ռուս)
- 10 Մարտիրոսեան Հ. Հայաստանը բրոնզի եւ վաղ երկաթի դարաշրջանում, Ե. 1964, էջ 25-26 (ռուս)
- 11 Խաչատրեան Տ. Շիրակի հնագոյն մշակոյթը, Ե. 1975 էջ 58 (ռուս)
- 12 Արիբուլան Օ. Հնագոյն մետաղագործութեան հարցի շուրջը, Աշխատութիւններ հնագիտական արշաւախմբի, 1968, էջ 68 (ռուս.)
- 13 Մահմուդով Յ, Մունչան Ռ, Նարիմանով Ի. Կովկասի հնագոյն մետաղագործութեան մասին, ԽԱ 1968, քիւ 4, 18-20 (ռուս.)
- 14 Գեորգեան Ա. Հայկական լեռնաշխարհի մետաղագործութեան պատմութիւնից, Ե. 1980 էջ 74:
- 15 Խաչատրեան Տ. նոյն աշխ. էջ 218
- 16 Մարտիրոսեան Հ. նոյն աշխ. էջ 185
- 17 Նոյն աշխ. էջ 186 (Ռուս.)
- 18 Նոյն աշխ. էջ 123 (Ռուս):
- 19 Կարախանեան Գ., Ազիզբեկեան Հ. Հնագոյն դարինակ Սիւնիքից, Լ Հ Գ 1981 քիւ 1 էջ 75
- 20 Կուֆտին Բ. Ուրարտական կոլումբարի վՊԹԼ, Թ 1944 էջ 32:
- 21 Խանգաղեան Է. Մեծամօր, Ե. 1973 էջ 53
- 22 Բայրուրդեան Ե. Աշխատանքային գործիքներ Հին Հայաստանում, 1938, էջ 209
- 23 Քուշնարեւա, Դուրինի հնագոյն յուշարձանները, Ե. 1977 էջ 31

ԱՐԱՄ ԳԷՈՐԳԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՆԱՆԵԱՆ





ԺԱ


Ը




ԺԳ




Ժ





ԺԶ




ԺԷ




ԺԸ




ԺԵ




Ժ




Գ




ԺԳ




Բ



Դ



Ա



Է



Ս . ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՀՍԾՈՑ ՎԱՆՔԸ ԻՆՉՈ՞Ւ ՊԱՐՏՔ ՈՒՆԻ .

Մինչև ցարդ մեր խօսածներէն ուշիմ ընթերցողը կարող է հասկանալ Ս . Արուսաղէմի պարտուց անխուսափելի պատճառները, բայց մեք կաշխատիմք աւելի պարզել, որպէս զի նենգամիտներու զրպարտութեամբ գայթակղած մտքերը բժշկուին, և որպէս զի Ազգը հասկանայ, որ պաշտօնն ու պարտաւորութիւնները անթերի կատարել, օրական և պատահական ծախսերու հասնիլ, թէև աղքատութեամբ, բայց վերջապէս ապրիլ, զրկուիլ

սովորական հասոյթներէ . բացառիկ օգնութիւն մի ալ չը գտնեւ և միևնոյն ժամանակ պարտք չանել, — անկարելի էր :

Յայտնեցինք արդէն, որ Ս. Արուսաղէմի աղագային հաստատութեանց պահպանող ոյժը և եկամուտը ժողովուրդն ու նորա լուսմայն է : Այդ ժողովուրդն որչափ պակսեցնէ իւր այցելութիւնն ու տուրքը, նուէրքն ու ընծայաբերութիւնքը, այնքան ալ կը պակսի Ս. Արուսաղէմի ոյժն ու արդիւնքը, ինչպէս որ եղաւ այս վերջին տարիներս : Իսկ դարերով հաստատութիւն գտած մի այնպիսի ազգային մեծ տուն, մի այնպիսի հռչակաւոր տեղ ու կառավարութիւն, որ անակնկալ պատահական ծախսերու ալ ենթակայ է՝ օտար ազգաց հետ ունեցած յարաբերութեանց պատճառաւ, մի այնպիսի պաշտօնական մարմին չէր կարող անհրաժեշտ ծախուց առջև կասիլ : Աերբնապէս ինքզինք որչափ ալ ճնշէր, զըկէր ու սեղմէր, ինչպէս որ արաւ, սակայն դուրսէն չէր կարող իւր դիրքը նուազեցնել, օտարին առջև չէր կարող ստորանալ և Ազգայնութեան պատիւը զոհել : Քիչ թէ շատ բարձր դիրք և պաշտօնական վիճակ ունեցող մի անձն կարող է զայս իւր անձին վերայ չափել, և հասկանալ, չմոռնալով, որ իւր պատիւը մասնաւոր է, իսկ Ս. Արուսաղէմինը — ընդհանուր :

Ուրեմն ի՞նչ կարող էր անել Միաբանութիւնը ,
երբ ,

ա) Օրէ օր ամէն բան կը թանկանար .

բ) Ազգի հին ու նոր պահանջներով զՄիաբանութիւնը կը թախանձէր .

գ) Ըստ պահանջից ժամանակին նորանոր ծախսերու դռներ բանալու կը ստիպէր .

դ) Հեռի քաղաքներու մէջ . Ս. Աթոռոյ կալուածները կը բռնաբարուէին .

ե) Մի կողմէն օտար հարստահարութիւնք կը նեղէին , բայց և միւս կողմէն պէտք եղած բարոյական և նիւթական օգնութիւններ չէին հասներ .

զ) Հնաւանդ սովորական նուիրակութիւնը շատոնց դադրած էր և տեղը նոր բան մի չէր դրուած .

է) Պանձանակաց դրամները շատ տեղերէ կանոնաւոր չէին հասներ , շատ տեղերէ ալ բնաւ չէին գար .

ը) Հնդախտները — թէ ի գաւառս և թէ յԱշրուսաղէմ — միմեանց կը յաջորդէին . նոյնպէս մարախը , սովը և գաւառաց հարստահարութիւնքը իրարու ետեւէ կը հասնէին և շունչ առնել չէին տար .

ր) Պատերազմները , միմեանց կը յաջորդէին , Պուլղարաց ապստամբութենէն մինչև ռուս — թուրքական պատերազմին վերջը գրեթէ բնաւ հասոյթ չէր գար վանքը .

Ճ) Վրայ կը հասնէր թղթադրամոց, ընթացիկ փողերու և արժէթղթերու անկումն ու կտրօններուն անվճար մնալը մինչև ցայսօր: Այս վերջին հարուածը ոչ միայն վանքին և ուրիշ բարեգործական հաստատութեանց և ուսումնարաններու գոյութեան մահառիթ եղաւ, այլև բոլոր տաճկահայոց վերջին ծայր աղքատութեան պատճառ դարձաւ:

Վերջապէս թողունք ուրիշ մանր ու խոշոր պատճառները, ահա այս ամեն բնական և պատահական, անակնկալ և անդիմադրելի պատճառներով երկար ժամանակ ժողովուրդ չէր գար ըստ բաւականին, տուրքերն ու նուէրները կը նուազէր, Ալեկընցեաց մէջ տեղտեղ Ս. Արուսաղէմի համար պնակաց և գանձանակաց շրջաբերութիւնը անհեռատես մարդկան ձեռքով կը խափանուէր, և կալուածներն ալ իրենց սովորական օգուտը չէին բերեր, և Ս. Արուսաղէմ ամեն կողմէն կը զրկուէր իւր հասոյթներէն: Քանի որ Ս. Արուսաղէմ այս դրութեան մէջ կը մնար, կարելի էր պարտք չանել. հա՛րկ էր յուսաբեկիլ. ի՞նչ անել պէտք էր ..

Երողութիւնք ժամանակակից ու շատ պարզ են, ամենուն ծանօթ են. թող ամեն մարդ այս պատճառներուն վերայ խորին ուշադրութիւն դարձնէ, եթէ կարող է խղճի մտօք արդարութեամբ ասել թէ, — Միաբանո-Նի-նը կարող էր այդ ամեն զրկանե-

Ներքը կրէլ, անխափան պաշտօնը կապարել և պարտա-
 շանել և չը յո-սահապիլ:— Սակայն այդպէս վճռել
 համարձակող կորովամիտ և հանճարեղ անձն թող
 բարեհաճի նաև դորա եղանակն ու միջոցն ալ ցոյց
 տալ. բայց նախապէս գիտնալ պէտք է, որ կարե-
 լի հնարք և միջոց մնացած չէ, զոր Միաբանու-
 թիւնը փորձած չը լինի. բայց անյաջող պարագայից
 պատճառաւ իւր բոլոր հնարքներն ի դերև ելած
 են, որով ուրիշ բան չէր մնար անել, բայց միայն
 ապագայ յաջողութեան յուսով՝ կամայ ակամայ,
 ի հարկէ ստիպեալ— պարտք անել: Այս էր վեր-
 ջին և հնարաւոր միջոցը, և այսպէս ալ արաւ, սպա-
 սելով մինչև որ Աստուծոյ այցելութիւնն հասնի,
 ժողովուրդն իւր տառապանքներէն ազատի, այն
 ատեն մարդ զգալով իւր պարտականութիւնը կը
 հատուցանէ իւր կարողութեան չափով իւր բաժի-
 նը և առանց դժուարութեան պարտքն ալ կը վճա-
 րուի, եկամուտն ալ կարգի կը դրուի: Այսպէս
 միշտ Ազգին արդարասիրութեան և ջերմեռան-
 դութեան վրայ վստահելով դիմեց այս վերջին
 փորձին:

Իայց զժբաղդաբար ձախորդութիւնք ու պա-
 տահարք յուսացուածին չափ շուտով չը վիրջացան,
 այլ երթալով շատցան ու ծանրցան. ընդ նմին ծանրը-
 ցաւ և Ս. Արուսաղէմի պարտքը, և քանի որ փութով

օգնութեան չը հասնինք՝ կասկած չը կայ որ օր յաւուր աւելի կը ծանրանայ :

Շատերը կասկած և կարծիք կը յայտնեն, որ անհոգութիւն, սխալմունք և անզգուշութիւն պատահած լինելու է այս գործին մէջ, որ պարտքն այսքան ստուարացեր է. սակայն եթէ նկատողութեան առնուն վերոյգրեալ պատճառները. եթէ Ս. Աթոռոյ գործոց մեծութիւնն ու բազմակողմանիութիւնը խորհին. եթէ հաշուեն որ 1861 թուականէն սկսած է պարտքը, և եթէ Միաբանութեան գործունէութիւնն ու արդիւնքը անկողմնակալ արդարութեամբ դատեն, այն ատեն կը հաւատամք, որ ամեն կասկած ու տարակոյս կը փարատին, և Միաբանութիւնը կարեկցութեան, զովութեան և վարձատրութեան արժանի կը դատուի: Մանաւանդ եթէ նկատողութեան առնուի Միաբանութեան անձնագոհութիւնը, անշահասիրութիւնն ու ուշիւութիւնը, որով հնարեցաւ վարկը բարձրացնել և ծանր տոկոսները պակսեցնել տալով պարտուց մեծաքայլ յառաջանալուն առջև թումբ դնել. այն ատեն զարմանօք, ակնածութեամբ և շիորհակալու զգացմամբ պիտինային նոցա վերայ. բայց նոքա զայս պահանջող չեն :

Այս պարտքը որչափ ալ մեծ երևի, սակայն կը գտնուին Ազգին մէջ պատուական հարուստան-

ձինք, որ մէկ մէկ մաս նուիրելով՝ զոր օրինակ 50,000 - ական ըուբլի, վեց կամ եօթն անձնաւորութիւն կարող են առանց իրենց գործող վնաս բերելու վճարել, և փոխարէն մեծամեծ արդիւնաւոր և մշտաւտել յիշատակներ տեսնել կանգնած իրենց երախտաւոր անուան. և ազգօգուտ ձեռնարկութիւններու պատճառ դառնալ, ասանկ դիւցազնական առաքինութիւն մը մինչև անդամ միայն մի անձնաւորութիւն ալ կարող է անել, որպիսիք, փառք Աստուծոյ, պակաս չեն մեր Ազգին մէջ, բայց պէտք է շարժուած լինին առաքինութեամբ և մեծագործութեամբ, կը յուսամք և կաղօթեմք, որ Տէրը ինքնին առաջնորդէ և յարուցանէ մեզ ասանկ անմահ յիշատակաց արժանի բարերարներ:

Իսոյց ասանկ անորոշ ակնկալութեամբ սպասել չէր կարելի, ուստի Միաբանութիւնը և Ազգային վարչութիւնը չը համարձակելով մասնաւորաց վերայ ծանրանալ, յարմար սեպեցին Ազգին ընդհանրութեանը դիմել, որ եթէ առանց բացառութեան Ազգին ամեն անհատը իւր կարողութեան համեմատ մասնակցի, դարձեալ խիստ դիւրութեամբ և շուտով կարելի է վճարել: Սակայն հասարակութիւնը տակաւին չէ հասկացած գործին ստիպողական կարևորութիւնը, թէ ասդին անդին քաջբշելով ժամանակը կերկարի, թէ առհասարակ ամենքը չեն

մանակցիր, և թէ իբրև մի հասարակ հանգանակութիւն նկատելով՝ թեթև կերպով կը մասնակցին. բայց նկատելու է, որ միւս կողմէն տարին կը գլորի և տոկոսը կը բարդուի:

Իսկ եթէ ապագային նորէն սլարտք կը կասկածիք, ինչպէս որ հնարաւոր է, (զի ո՛վ գիտէ թէ ապագայն ինչե՛ր կը ծնածի և ինչո՞վ կարելի է զայն երաշխաւորել), մեք այդ կասկածը փարատելու համար կը կրկնեմք. — Աթէ ամեն շայ, այր, կին, տղա և աղջիկ, անձ-գլուխ՝ անխափան՝ ամեն տարի ըստ կարողութեան 10—20—40—50 կոպէկ վճարեն և ամբողջ անկորուստ անդ հասցնեն, ապահով թող լինին, որ ոչ միայն սլարտք չը լինիր, այլ նաև Միաբանութիւնը շատ ազգօգուտ ձեռնարկութիւններ ալ կանէ. Այս խնդիրը մեք յաճախ կը կրկնեմք, զի ուսումնասիրելու արժանի է և Ազգին ուշադրութիւնը հրաւիրել կուզեմք զխանարով՝ որ ամեն հաստատ եկամուտներէ աւելի ապահով է ժողովրդեան սէլն ու համակրութիւնը. ամեն հաստատուն կարծուած բան կրնայ փճանալ՝ բայց Ազգը միշտ կայ:

Մ Ա Ղ Ա Ք Ի Ա Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Օ Ր Մ Ա Ն Ե Ա Ն

Դ Ի Տ Ո Ղ Ա Գ Ի Ր



ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՈՒԱԾ
ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԻՆ
ԶՆՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ



ԵՐՈՒՍԱՂԷՄ
ՏՊԱՐԱՆ ԱՌԱՔ. ԱԹՈՒՌՑ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ
1915

Գ Ի Տ Ո Ղ Ա Պ Ի Ր

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՈՒԱԾ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԻՆ ՋՆՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա.

Երուսաղէմի խնդիրը տասն եւ աւելի տարիներէ իվեր պաշտօնական սեղաններու վրայ կը ծեծուի, հանրութեան ալ միտքը կը յոգնեցնէ . բայց եթէ խնդիրին անունը ընդհանուր առմամբ միշտ Երուսաղէմ կը կոչուի, բուն խնդիրը նոյնը մնացած չէ, այլ սարուէ տարի կամ միջոցէ միջոց նոր կերպարաններ առած է :

Առաջ Ղեւնդ վարդապետ Մաքսուտեանի անձնական խնդիրն էր, եւ իւր հաշուական զեղծումները կը խօսուէին, որոնք այժմ մտադրութենէ վրիպած են : Օր մըն ալ Պատրիարք ամբաստանելու եւ դատապարտելու կերպարանը առաւ, եւ Աթոռոյ պարտութիւն հռչակուելով Տեղապահ մը նշանակուեցաւ, բայց պաշտօնանկ Պատրիարքն ալ Աթոռի վրայ պահուեցաւ : Պատրիարքը վախճանեցաւ եւ իսկական Տեղապահին խնդիրը զօրացաւ : Նորանոր կնճիպներ ծագեցան, Կոստանդնուպոլսոյ պատուիրակութիւններ իրարու յաջորդեցին, բայց բան մը չըրին, կամ թէ յաջող բան մը չըրին : Կեդրոնին նշանակած Տեղապահը, իբր իսկապէս Տեղապահ եւ կանոնական պահանջներուն համապատասխանող մը չկրցաւ գործել, եւ աւելի ձեռնթափ մնաց, քան թէ գործի վրայ զանուեցաւ :

Պատրիարքական ընտրութիւն փութացընելու միտքը ծագեցաւ, բայց ընտրելեաց ցանկը մերժուեցաւ, եւ նորէն Երուսաղէմ եւ Կոստանդնուպոլսոյ իրարու հանդէպ զրանուեցան : Նոր Կանոնագիրի մը միջոցը մէջտեղ նետուեցաւ, եւ գործին ներքինը չը թափանցելով Մրաղիր պատրաստուեցաւ, եւ

Ընդհանուր ժողովը՝ ակնկալեալ լուծումը գտած ըլլալ կարծեց, եւ անոր փարեցաւ : Այդ վերջին կերպարանը կը տիրէր, երբ յանձնուեցաւ ինձի պաշտօն մը, որ անոր հետ աննշուրթիւն ունի :

Բ.

Պաղանիք մը չէր նոր Կանոնագիրին հանդէպ ունեցած կարծիքս . հիւանդութիւնս ալ զիս արգիլած էր Ընդհանուր ժողովի գործունէութեան մասնակցելէ, եւ հետու մնացած էի : Նոր վարչութիւնը մտածեց գործը իր վրան տանել, Ազգային ժողովոյ կազմած Կանոնագիրը ուսումնասիրութեան վիճակի մտցնելով . Երեսօխոսանութիւնը համակերպեցաւ, իսկ հետեւանքը իմ պատուիրակութիւնս եղաւ : Այդ ընտրութեան նշանակութիւնը ինքնին յայտնի էր, թէ ինչ էր նոր ուղղութիւնը՝ ուստի մեկնութիւններ աւելցրնելու պէտք չեմ զգար :

Այսօր նոյնիսկ ընդհանուր մտայնութիւնը, թէ պաշտօնական եւ թէ անպաշտօն շրջանակներու մէջ, համամիտ է ընդունիլ, թէ առանց բաւական հետազոտութեան կազմուած է այդ Մրաղիրը . թէ հապճեպով քուէարկուած է անոր հաստատութիւնը . թէ շատ թերութիւններ ունի իւր մէջ . եւ թէ նպատակայարմար չէ : Նոյնիսկ Կանոնագիրը գործադրուելու է ըսողներ, միւս կողմէն թերի եւ անյարմար ըլլալը կ'ընդունին . բայց միտնդամայն կ'ըսեն, թէ օրէնք մը եղած է Ազգային Երեսօխոսանական ժողովին 1913 զեկտեմբեր 7 ի նիստին մէջ քուէարկուած, եւ կը յարեն, թէ օրէնք մը անպատճառ պէտք է գործադրուի :

Գ


Բայց նոյնիսկ Լ'նդհանուր Ժողովը՝ Օրէնք պաշտօնական սնունքը իւր որոշմանց մէջ գործածած չէ, այլ լսկ Կանոնագիր բաւը դրած էր. որ կը ցուցնէ թէ քուէարկուածը պարզապէս կանոն մըն է, եւ ոչ օրէնք: Արդ Օրէնք եւ Կանոն հիմնապէս կը տարբերին սահմանադրական լեզուով, միեւնոյն իմաստով որով օտար լեզուաց մէջ կը տարբերին Loi եւ Règlement բառերը: Ազգային շըրջանակին մէջ Օրէնք է միայն 1860' ին ծրագրուած եւ 1863' ին Կառավարութենէ վաւերացուած Սահմանադրութիւնը, զի օրէնք ըլլալու պայմաններուն բարձրագոյնը՝ Կառավարութենէ ընդունուած եւ հաստատուած ըլլալն է: Իսկ ինչ որ ազգային շրջանակին մէջ կը ծրագրուի եւ կ'ընդունուի եւ կը հաստատուի, պարզ կանոն է, եւ օրէնքի սնունդն եւ ոյժը եւ բնութիւնը չկրնար անոր վերագրուիլ:

Հետեւաբար օրինական եւ արամբարանական չէ 1913 զեկտեմբեր 7' ին քուէարկուած Կանոնագիրին վերագրել այնպիսի ոյժ մը, որ 1863' ին հաստատուած Սահմանադրութեան սեփական է. եւ Ազգային Իշխանութիւնն ալ չկրնար անշուշտ օրինական սկզբունքներու հակառակ բան մը յայտարարել, եւ ոչ ալ յաւակնիլ եւ իրեն անարխալականութիւն վերագրել. ոչ ալ կ'ենթադրուի որ Հումայեցի Բանաւորին փոստին կրթնի թէ, Այսպէս կամիմ, այսպէս կը հրամայեմ (Sic volo, sic jubeo), Ըստ այսմ Դիտողագիրս լիովին կ'արդարանայ, երբոր զիտողութիւններ առջեւ կը դնէ կանոնի մը, եւ ոչ օրէնքի մը հանդէպ:

Գ

Բայց սրովհետեւ զիտողութիւններ կըրնային շատ ընդարձակուիլ, եւ ընդարձակուելով զանազան կէտեր շօշափել, եւ զանազան կէտերուն տարբեր գոյններ արուել, այս պատճառաւ լաւագոյն կը սեպնէք որոշ կէտերու վերածել ըսելիքնիս, ըստ կարի ամփոփ եւ ըստ կարի յստակ բացատրու-

թիւններով: Այս է պատճառը, որ մտադիր ենք Կանոնագիրը նկատի առնել, նախ իւր սկզբունքներուն եւ երկրորդ իւր արդիւնքներուն մէջ, եւ պատճառաբանութեամբ եւ հետազօտութեամբ ապացուցանել, թէ ոչ միայն եկեղեցական, այլ եւ ազգային տեսակէտէն նոր Կանոնագիրը օրինական պահանջներու համաձայն չէ, եւ թէ իւր դիտած նպատակին ալ յարմար չէ:



Ե

Իբրեւ մեր զիտողութեանց նախադուռ, պէտք է նախ մտադրութիւն հրաւիրենք սակէտին վրայ, թէ Երուսաղէմի Վանք կամ Երուսաղէմի Միաբանութիւն բացատրութիւնները, որոնք սովորաբար կը գործածուին, Երուսաղէմը ներկայացնող ճիշդ բացատրութիւնները չեն: Երուսաղէմ վանքէ աւելի բան մըն է, վասն զի Պատրիարքութիւն է, Առաքելական Սուրբ Աթոս է, եւ քան զԿոստանդնուպոլսոյ Պատրիարքութիւն նախապատիւ եւ նախաթոս է: Սահմանադրութիւնն ալ Ա. զլուխի Գ. հաստուածը՝ Պատրիարք Մեթոյ Երուսաղէմի կը մտկադրէ, եւ ոչ վանք կամ Միաբանութիւն Երուսաղէմի: Այս տեսութեան հետեւնեքն է, որ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութիւնը եւ զայն կազմող տարրերը, ինչպէս են՝ Պատրիարք, Երեսփոխանութիւն, Վարչութիւն եւ Խորհուրդներ, չեն կրնար Երուսաղէմը նկատել իբր մի պարզ վանք կամ առաջնորդարան, բացարձակ կերպով իրենց ստորագասակ. այլ իբր մի զերազայն Աթոս, որ պետական պահանջից եւ ազգային պարագայից բերմամբ պարտաւոր է իրենց հետ սերտ յարաբերութիւն պահել, եւ իրենք ալ պարտաւոր են անոր արժանապատուութիւնն ու իրաւասութիւնը յարգել, եւ համերաշխ գործակցութեամբ օրէնքով ու սովորութեամբ կազմուած գետնի մը վրայ գործել, եւ ոչ թէ՛ առանց իրիք նկատողութեան ազիկամի քայլեր առնել եւ ձեւեր գործածել, որոնք յետին վանքի մը վրայ ալ գործածուած չեն, եւ ոչ իսկ փորձուած են:

Նոյն Կանոնագիրը յանկարծական ուստուժով մը 1888' ի Կանոնագիրով նուիրագործուած՝ Կանոնագիր Միաբանական Աւստին Առաքելական Արքայ Սրբոց Յակոբեանց ի Սուրբ Երուսաղէմ՝ վերտառութեանը, Կանոնագիր Երուսաղէմի Սուրբ Յակոբեանց Վանուց՝ չոր բացատրութեան կը վերածէ, եւ Առաքելական եւ Պատրիարքական Աթոռին յիշատակութիւնը ջնջելով կը վերցնէ. բայց պէտք չէ կործնել թէ նովին իսկ Երուսաղէմի Աթոռին պատիւն եւ իրաւասութիւնը ջրնջուած կըլլայ:

9

Երուսաղէմի այդ բացառիկ եւ բարձր դիրքին հետեւանքն է, որ Սահմանադրութիւնը զատած է զայն ընդհանուր վանորէից շարքէն, եւ անոր յատուկ գլուխ մը նուիրած է, եւ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան Երուսաղէմի հետ յարաբերութիւնները, կամ Երուսաղէմի գործերուն միջամտութիւնը ճշդելով որոշած է: Այս միջամտութիւններն են.

1. — Երուսաղէմի Պատրիարքը ընտրել Միաբանութենէն կազմուած եօթնանուն եւ փակեալ ցանկի վրայ (Սահ. Յօդ. 21): Որչափ ալ Սահմանադրութեան բացատրութիւնը՝ թէ Միաբանից Ընդհանուր ժողովը ցուցակ մը կը պահաստէ՝ Կոստանդնուպոլսոյ Համագումար ժողովոյն քրած կերպիւր, կրնայ եօթնէն աւելի անուններ պարունակող ընտրելեաց ցանկի վրայ մեկնուիլ, սակայն 1880 ՝ ի Կանոնագիրին 29՝ ըզ յօդուածով եւ 1888 ՝ ի Կանոնագիրին 26՝ ըզ յօդուածով տրուած պաշտօնական մեկնութիւնը, թէ առաջին ցուցակ մը կը պահաստէ ի եօրնեքին ընտրելեաց, մթութիւնը փարատած եւ ընկալեալ գրութեան ոյժ առած է:

2. — Երուսաղէմի Միաբանութենէն եւ իր մէջէն ընտրուած տեղապահ ճանչնալ եւ հաստատել (Սահ. Յօդ. 20):

3. — Երուսաղէմի Պատրիարքին Երուսաղէմի Կանոնագիրին ղէմ գործողութեան առթին, ամբաստանեալ Պատրիարքին դատաստանը տեսնել (Սահ. Յօդ. 18-19):

Ասանցմէ զուրս, հաշիւները տեսնելու

կամ նախահաշիւ կամ լրացեալ հաշիւ քննելու յիշատակութիւնն իսկ չկայ. եւ ոչ իսկ ակնարկուած է թէ պարտաւոր ըլլայ համակերպիլ վանորէից համար ցուցուած ընդհանուր կանոններուն (Սահ. Յօդ. 48):

Սոյն տեսութիւնը կը հաստատուի նաեւ տեսնելով, որ Երուսաղէմի գլուխին մէջ յիշուած կէտեր, յստակ կերպով վանորէից գլուխին մէջ ալ կը կրկնուին. ուսկից կը հետեւի թէ Երուսաղէմի եւ վանորէից գլուխներ իրենց մէջ ամբողջական են եւ զիրար լրացնող չեն:

Հաշիւներ տեսնելու եւ քննելու իրաւունքը, որ այժմ սովորութեամբ ընդունուած է Երուսաղէմի համար ալ, հետեւանք է անշուշտ այն ելեւմտական յարաբերութեանց, զորս Երուսաղէմի Աթոռն ունեցեր է միշտ բովանդակ Ազգին հետ. ինչպէս նաեւ հետեւանք է այն ստիպողական պարագայից, որոնց առջեւ Երուսաղէմի Աթոռը պարտաւոր եղած է զիմել Ազգային նպատից եւ հանգանակութեանց, կանխաւ ընդունուած եւ այժմ խափանուած նուիրակութեանց տեղ: Նոր Կանոնագիրը առաւուելին իրաւունք սւնէր ընկալեալ գրութեամբ զծուած չըջանակին մէջ մնալ, եւ ոչ չըջանակը պատուելով, սահմանադրութեամբ եւ սովորութեամբ հաստատուած գրութիւնը ալլայելի և խանգարել:

Է

Երուսաղէմի Պատրիարքութեան՝ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան հանդէպ ունեցած բացառիկ եւ բարձր դիրքին սկզբունքը՝ աւելի ևս կը հաստատուի, երբ զիտեսնք որ Երուսաղէմի Պատրիարքութեան յարաբերութիւնները ուղղակի Ազգային ժողովին, այսինքն Երեսփոխանութեան հետ կապուած են, եւ ոչ թէ Կրօնական եւ Գաղափարական ժողովներուն հետ: Այդ յարաբերութիւններ վճարար ճշդուած են, եւ են պատրիարքի ընտրութիւն, պատրիարքի դատաստան, ևս տեղապահի հաստատութիւն, եւ իբր յաւելուած՝ ելեւմտացոյցի եւ հաշուեցոյցի վաւերացում: Մինչեւ իսկ Ընդհանուր ժողովոյ բացառիկ գումարումներու

հարկ տեսնուած է Երուսաղէմի պատրիարքի ընտրութեան համար (Սահ. Յօդ. 6)։ Այդ ամէն կէտերը օրինաւորապէս կը բղիթին Սահմանադրութեան տառէն, Կանոնադիրի յայտնի բացատրութիւններէն (1880 Կանոն. Յօդ. 25, 29, 44. և 1888 Կան. Յօդ. 18, 25, 41), և տիրող ընթացքէն, իբր զի Երուսաղէմի Աթոռոյն և Պատրիարքական Դիւանին հաստատուն ձեւն է, իւր պաշտօնական զիրերը ուղղել Կոստանդնուպոլսոյ Պատրիարքին, իբր Նախագահի Ազգային Ժողովոյ, և ոչ իբր Նախագահի Ազգային Վարչութեան։ Եթէ երբեք Ազգային Ժողովոյն երկամեայ գումարմանց ժամանակէն դուրս, կամ թէ Ազգային Ժողովոյ նիստերուն անդիմադրելի պատճառով խափանուելու միջոցին, Կոստանդնուպոլսոյ Վարչական Խառն Ժողովը պէտք տեսած է Ազգային Ժողովին գործողութեանց ինքն փոխանակել, ասիկա երբեք ընկալելալ օրինական ձեւը չալալեր։ Սահմանադրութեան մէջ անդամ մը միայն Կրօնական և Քաղաքական Ժողովները յիշուած են եռանուն ցանկի պատրաստութեան համար (Սահ. Յօդ. 23), բայց այս կէտն ալ Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ համաձայնութեամբ՝ կանոնադիրները բացատրած են մեկնողական փաստով, և զանց ըրած են վարչական Ժողովներուն գործակցութիւնը (1880 Կան. Յօդ. 26 և 1888 Կան. Յօդ. 29), որով իսպառ վերցած է Կոստանդնուպոլսոյ Վարչութեան հետ պաշտօնական ուղղակի յարաբերութիւնը Երուսաղէմի Աթոռին հետ։ Ի բաց առեալ այն աւիթները, երբ միջադէպերու և ընթացիկ գործերու համար երկու Աթոռներ իրարու հաղորդելիքներ ունենան, ինչպէս երկու առաջնորդներ ալ կուրենան։

Ը

Եթէ նոր Կանոնադիրը կ'ուզէր ընդհանուր վանորէից համար զծուած սկզբունքներուն հետեւիլ և անոնք Երուսաղէմի Աթոռին ալ պատշաճեցնել, որչափ ալ այդ միտքը սահմանադրութեամբ չէր արդարանար, գոնէ պարտաւոր էր հետեւիլ այն գլուխին մէջ

զրուած հիմնական սկզբունքներուն, և այն ատեն պիտի չհամարձակէր յայտնապէս հրաշակուած սկզբունքի մը դէմ մեղանչել։ Արդ Վանորէից գլուխը շատ յստակ և շատ կրուակ կերպով կը հռչակէ, թէ իւրաքանչիւր վանքի մասնաւոր մասակարարութիւնը իր միաբանեցումը կը վերաբերի (Սահ. Յօդ. 48. ա.)։ Մինչ նոր Կանոնադիրը այդ սկզբունքին բոլորովին հակոտնեայ ընթացքով մը՝ Երուսաղէմի պատրիարքական Աթոռին մասակարարութիւնը Աթոռին և Միաբանութեան ձեռքէն կը կապուէ, և օտար և վանքին չպատկանող անձերու, և նոյն իսկ աշխարհականներու յոնձնել կը մտածէ։ Եթէ հակասահմանադրական գործի օրինակ մը փնտռէինք, ասկէ աւելի ցայտունը պիտի չգտնէինք, որով սահմանադրական իրաւունքները կը կապուին, և հակասահմանադրական կացութիւն մը կը ստեղծուի։ Նոր Կանոնադիրը ծրագրողներ ու պաշտպանողներ պէտք չէ ցաւին երբոր իրենց արարքին յայտնի հակասութիւնը կը ցուցուի, և երբ Սահմանադրութեան անունով ըրածներուն հակասահմանադրականութիւնը մէջանալ կը գրուի։ Պէտք էր ևս զիտէին որ Վանորէից Խորհուրդին տրուած իրաւունքը՝ միայն մասակարարութեանց վրայ ընդհանուր տեսչութիւն է. (Սահ. Յօդ. 48. ա.)։ Իսկ ընդհանուր տեսչութիւն ըսելով իմացուած է միայն վանքի կանոնաց գործադրութեանը հսկել, վերատեսչութիւնը ընել, եկամուտներն ու հասոյքները սուղել, ծախքերը ֆնել և կանոնաւորել (Սահ. Յօդ. 48)։ Բայց ոչ երբեք վանքը իւր իրաւունքներէն կապակ, ինքզինքը մասակարարելէ զրկել, մասակարարութիւնը ուղղակի կեդրոնին վերապահել, մէկ խօսքով, հակող մարմինը գործող ընել, և քննողի դերէն հանելով քննելի ըլլալու դերին ենթարկել։ Արդէն բացատրեցինք, թէ սահմանադրական սկզբունքով Երուսաղէմի Պատրիարքութիւնը ընդհանուր վանորէից կանոններէն դուրս է. նոյն իսկ Վարչական Ժողովներու ենթարկուած չէ. զի ուղղակի Ազգային գերագոյն Ընդհանուր Ժողովին հետ յարաբերութեան զրուած է։ Այդ տեսութիւնները լուսաւոր կերպով կը բարձրացնեն Երուսաղէմի զիրքը, և կը հաւասար

տեն թէ Կոստանդնուպոլիս իշխան չէ Երուսաղէմի Աթոռին համար ըստ հաճոյս կարգադրութիւն ընել: Բայց եթէ անոնց ներքեւն ալ ինար, երբէք չէր արդարանար նոր Կանոնագիրին զրութիւնը, քանի որ Սահմանագրութեան համաձայն չէ:

Թ

Մեղի անծանօթ չէ որ անգամ մը, ՚ին ժամանակներու մէջ, Կոստանդնուպոլիս ձեւն կրէցութիւն ունեցեր է Երուսաղէմի Պատրիարքութեան միջամտելու, երբ Ազգին մէջ սահմանադրութիւն եւ կարգադրութիւն չէր կազմակերպուած. բայց զոնէ ինքն իր զէմ հակասական չգանուելու համար, Երուսաղէմի Պատրիարքութիւնը ուզողակի Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան կցուեցաւ: Այդ միացման թուական ընդունուած է 1702 յուլիս 13' ի հրովարտակը, եւ տւեալ է մինչեւ 1715 սեպտեմբեր 10: Աւետիք Եւզակիացի Պատրիարքն եղած է միացման հեղինակը, Յովհաննէս Կոլոտ Պատրիարքն եղած էր զայն վերջացողը: Որչափ ալ այդ միացման զործք սպորինի եւ փաստկար, սակայն պատրուակեալ ձեւ մը ունէր, զի կրնար ընական սեպուելի որ երբ Կոստանդնուպոլիս նստող պատրիարքը միանգամայն Երուսաղէմի պատրիարք էր, կարենար իւր կողմէն անուանուած զործակայնեքով մատակարարել Երուսաղէմի Պատրիարքութիւնը: Մահաւանդ որ այն ատեն պարագաներն ալ կը նպաստէին բունական ձեւով զործ յաջողցրնելու: Կոստանդնուպոլսոյ Պատրիարքներն ալ նոյն կերպով կը նստէին, եւ բունական գործերէն մէկն ալ Երուսաղէմի վրայ եղած օտնձգութիւնն եղաւ: Այսպէս սկսաւ պապականեքու ժամանակը, ինչպէս սովորութիւն եղաւ կոչել Կոստանդնուպոլսէն զրկուած գործակայնեքուն խումբը, որոնք պապա, նազրը, վեֆիլ, դապղիմալ, անուանեքով ուրոջ մարմին մը կը կազմէին: Եթէ պատմութիւնը քաղել եւ այս միջամտութիւնէն յետոյ կկամ ազետալի հետեւանքները նկարագրել ուզէինք, երկայն եւ ցաւալի հատուածներ պէտք էր յառաջ բերէինք Երուսաղէմի պատմարան Հաննա վարդապետէն: Հետաքրքիրները կը յղենք մտադրութեամբ կարգալ այն զլուխը որ մակագրուած է՝ «Յաղագս անցիցն անցելոց ի վերայ Սբոյ Երուսաղէմի Աթոռոյն Քրիստոսի»: Անոր մէջ սրտածմլիկ մանրամասնութիւններ կը պարունակուին, բոլորն ալ օտար եւ վարձկան մատակարարներուն երեսն յառաջ եկած: Այդ վշտալից տեսարաններն էին որ սաստիկ ազդեցին երջանկայիշտտակ Կոլոտ Պատրիարքին վրայ, որ անոնց ակննատես եղաւ Երուսաղէմ զանուած ատեն. ուստի ամէն ջանք ըրաւ Կոստանդնուպոլսոյ միջամտութիւնը վերջացնել, եւ Պատրիարքական Աթոռ քարձրանալուն յաջորդ օրը՝ միացման եւ միջամտութեան դադարումը հռչակեց: Այդ պատմական յիշատակութիւնը առաջ կը բերենք իրրեւ որոշ եւ վճռական ցուցմունք. զի ՚ին պատմութիւններ ամէնէն զօրուոր փաստեր են նոր ձեռնարկները դատելու:

Ժ

Այդ պատմական փաստին օրինական ոյժ մըն ալ աւելցաւ հայրապետական եւ ժողովական վճռով: Այդ միջոցին պահ մը Մայրաթոռը պարսպ մնաց, Աստուածատուր Համատանցի Կաթողիկոսին մահուամբ: Երբ քաղաքական տաղանազը եւ անհարկն չլիովը կը տիրէ Էջմիածին՝ յաջորդի ընտրութիւնը խափանելու չափ, Կոլոտ Պատրիարք զլուխ կանգնեցաւ ընտրութիւնը Կոստանդնուպոլսոյ մէջ կատարելու. Կարապետ Ուլինցի ընտրուեցաւ, եւ 1726 փետրուար 27' ին օծուեցաւ Գումբափուի Մայր եկեղեցին, եւ ընդհանուր համաձայնութեամբ եւ ինդութեամբ սղջուուեցաւ նոր Կաթողիկոսը:

Սաղիմական խնդիրներն ալ լուծելու եւ հիմնական կարգադրութեամբ ապագայն ապահովելու համար, Կաթողիկոս եւ Պատրիարք, եպիսկոպոսունք եւ մեծամեծք, Երուսաղէմ եւ Կոստանդնուպոլիս համաձայնեցան երեք կանոններ կազմել խորհրդակցութեամբ, ե հռչակել հանդիսութեամբ 1726 օգոստոս 21' ին, Օրթոքէօյի ինդրակատար Ս. Աստուածածին եկեղեցւոյն նաւակատեսցաթիւ: Կարապետ Կաթողիկոսն ինքն ան-

ձամբ կարգաց երեք կանոնները, որոց առաջինը պատրիարքութեան ընտրելիին, եւ երրորդը Աթոսները այլ եւս չի միացուելուն կը պատկանին: Իսկ երկրորդը հետեւեալն է. «Երէ յայսմնէս ոք յանդգնեալ համարձակիցի զաւստիական ոք պապա եւ նազար անուամբ, եւ կամ այլ ինչ անուանակոչութեամբ ի Սուրբ քաղաքն Երուսաղեմ վերակացու եւ գլխաւոր գործակալ առնել, եւ նորա զայլեւայլ նախապահս ցոյց տալ, յորմէ պատճառի վնասն Սբոյն Յակոբայ, այնպիսին քէ կարգաւոր իցէ եւ քէ աւստիական, նզովեալ եղիցի»: Խնդրի նիւթ հնար չէ ընել հայրապետական իշխանութեամբ եւ ժողովական համաձայնութեամբ եւ նզովքի կաշկանդամբ հաստատուած կանոնի մը ոյժը. եւ զարմանալի է թէ ինչպէս յայտնի վճիռ մը մտադրութենէ վրիպեցնելով, եւ այլ ինչ անուանակոչութիւնն ալ նզովուած լինելը չը մտարերելով, կրցան պապա, նազար, վեֆիլ, դապղիմալ կոչումները, ներկայացուցիչ, կալուածապետ, մասակարար, համարակալ կոչումներու փոխարեկ, եւ միւսնոյն արգիւշեալ եւ նզովեալ կարգադրութիւնը վերանորոգել: Երրորդ կանոնին մէջ գտնուող բացատրութիւնն ալ, որ որոշեալ լիցի ի Բիւսոնեական սուրբ հաւատոյս՝ ամենածանր պատիժի ներքեւ կը պահանջէ, բացարձակ լինել ինքնին իշխանութեան Սբոյն Արոսոյն Երուսաղեմը, քաջքնութի տեղի չթողուր, եւ ամէն վարանում եւ կտակած կը փարատէ այդ վճիռին իսկական իմաստին վրայ, եւ կը դատապարտէ նոր կանոնագիրին կողմէ հնարուած ձեւը:

ԺԱ.

Միւսնոյն սկզբունքը տիրած, եւ վերոյիշեալ կանոններուն ոյժն անյեղի պահուած է միշտ, եւ նոր նուիրագործութիւն ստացած է նեւսեմ - դուսեմ կոչուած ինչորիս տաթիւ: Յովհաննէս Զմիւռնացի Պատրիարք կը վախճանի 1860 զեկտեմբեր 23'ին, սակայն իւր յաջորդը Եսայի Թալաւցի հաղիւ կ'ընտրուէր 1864 օգոստոս 14'ին: Այդ երկարամասնակեայ պարապութեան պատճառն եղաւ ընտ-

րելիին Միաբանութեան ներսէն կամ զուրսէն ըլլալուն խնդիրը: Դուրսէն ընտրելի տանկու խնդիրը զօրացու Կոստանդնուպոլսոյ աւանգանուոյն մի մասին մէջ, եկեղեցականաց ու մանց համամտութեամբ: Ներսէն ըլլալուն պաշտպան կանգնեցու Միաբանութիւնը՝ ազգայիններու հետ: Արդ այս խնդրին պատճառ տուողը նոյն իսկ վերոյիշեալ օրինադրութեանց առաջին յօդուածն էր: Երեք ու կէս տարի առեւց այդ խնդիրը, եւ միշտ Կաթողիկոս Կաթողիկոսի նզովքներուն փաստն էր, որ կը յեղյեղուէր. եւ վերջապէս այդ օրինական փաստն էր որ կը զօրանար, եւ նոր Պատրիարքը ներսէն կ'ընտրուէր: Խնդրին տանն Մայրաթոսոյ հեղինակութիւնն ալ կը փնտռուէր, եւ Մատթէոս Ա. Կաթողիկոս առանձին կոնդակով Կարապետ Կաթողիկոսի նզովքը կը նորոգէր: Ազգային Ընդհանուր ժողովն ալ վերջիվերջոյ մտազիւր կը հնազանդէր Կարապետի նզովքներուն եւ Մատթէոսի կրկնումներուն: Այդ միւսնոյն օրինադրութեան առաջին եւ երկրորդ յօդուածները տարբեր կերպով չեն կրնար կշռուիլ, եւ այն յարգանքը զոր 1864'ի Ընդհանուր ժողովը ընծայեց այդ օրինադրութեան առաջին յօդուածին, պէտք էր որ 1913'ի Ընդհանուր ժողովն ալ ընծայէր երկրորդ յօդուածին. եւ եթէ զանց ըրաւ կամ չմտարերեց, ոչ իւր գործը օրինական կը գտանայ, եւ ոչ նոր կանոնագիրը կ'արդարանայ:

ԺԲ.

Սոյն սկզբունքը անգամ մըն ալ յայտնուեցաւ վերջին հայրապետական Կոնդակով: Երրորդ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքարանը իւրովի կանոնագիր մը կազմելու խորհուրդը յղացաւ, Երուսաղէմի Միաբանութիւնը օրինական եւ սահմանադրական սկզբունքներու հիմնուելով, 1913 մարտ 4'ի նիստին մէջ պարագանները գննած եւ պաշտօնական դիտողութիւն ուղղած էր Կոստանդնուպոլիս, յառաջ բերելով մանաւանդ երկու կէտեր, որք են՝ Աթոսին պարապութիւնը, եւ տիրող Կանոնագիրին 85'րդ յօդուածը: Երրորդ դիտողութիւնը անսկսա թողուեցաւ, Աթոսոյն

Տնօրէն ժողովը հարկ տեսաւ սեպտեմբեր 5'ի հեռագիրով Միարանութեան յայտնած դիտողութիւնները կրկնել . բայց Ընդհանուր ժողովը սեպտեմբեր 6'ի նիստին մէջ, ի տեղեկութիւն միայն կարգաց զայն եւ նկատողութեան իսկ արժանի չսեպեց: Տնօրէն ժողովը ասիպուեցաւ Միարանութեան դիտողութիւնները անգամ մըն ալ յիշեցնել հոկտեմբեր 2'ի հեռագիրով: Կեդրոնը կը նախատեսէ որ դիւրին պիտի չըլլայ իւրով իւր որոշումը քակեցնել Միարանութեան դիտողութեանց դէմ, ե ոչ ալ պատճառարանեալ բացատրութիւններով զայն պաշտպանել, ուստի դեկտեմբեր 19'ի պաշտօնագիրով Մայրաթոռին կը դիմէ, եւ բացարձակ արտօնութիւն կը խնդրէ իւր կամքին հակառակով Միարանութիւնն ու միաբանները պատասխանատուութեան ու պատժոյ ենթարկել: Կեդրոնը կը սպասէր Մայրաթոռոյ իշխանութեամբ զօրանալ . բայց այս անգամ ալ իւր ակնկալութիւնը չարդարացաւ: Մայրաթոռոյ Հայրապետը կը պատասխանէ կոտանդնուպոսոյ Կեդրոնին պաշտօնագիրին, եւ պատասխանը վաւերացնելու համար ուղղած երկրորդումին, 1914 փետրուար 14'ի կենդակով, որ Աբաբաս պաշտօնակաւն ամսագիրի 1914 տարւոյ 198-200 էջերուն մէջ ալ հրատարակուած է: Վեհափառ Կաթողիկոսը սոյն կենդակով ոչ միայն կը մտէ եւ կը զրնայ ինչպէս իշխանութիւնը կամ արտօնութիւնը, այլ եւ բացարձակ կերպով կը հաստատէ եւ կ'իւրացնէ եւ կը վաւերացնէ երուսաղէմի Միարանութեանն առաջարկուած դիտողութիւնները . ե հայրապետական բարձր իշխանութեամբ կը հռչակէ, թէ « Մեք ոչ համարիմք նպասակայրմար եւ օգտակար նախան գրեցուրիւնն պատրիարքի զիննական փափոխութիւնն մուծանել ի գործող կանոնադրութիւն վանուցն »: Բնագիրին մէջ ընդգծուած են, նախ քան գրեցուրիւնն պատրիարքի բառերը: Ասով Ամենայն Հայոց Կաթողիկոսը անգամ մըն ալ կը կրկնէ եւ կը հաստատէ Կարապետի նշովքները ու Մասթէոսի կրկնումները, ե ամուր պահուած սկզբունքը, եւ կը վաւերացնէ Աթոռոյ պարագութեանն քաղուած դիտողութիւնը: Միեւնոյն ատեն կը յիշէ 1888 տարւոյ Կանոնագիրին 85'րդ յօդուածին հռչակած որոշումն ալ, եւ կը

հրամայէ թէ առանց երուսաղէմի Պատրիարքին եւ Միարանութեան համաձայնութեան հնար չէ երուսաղէմի Պատրիարքութեան պատկանող Կանոնագիրը փոփոխել: Արդ երբոր Կեդրոնը Կաթողիկոսին կը դիմէր, նուզին իսկ ճանչցած կ'ըլլար կաթողիկոսական Մայրաթոռոյ իշխանութիւնը եւ կատարեալ ձեռնհասութիւնը, աւուուազն անոր ձայնը՝ իր բարձր եւ վերջնական իրաւարարի ձայն մը ընդունած կ'ըլլար . ըստ այսմ պէտք էր խնդիրը փակել, կամ ճարտար կերպով մը մէջէն ելլէր . սակայն ոչ մէկն ըրաւ ե ոչ միւսը, եւ մինչեւ իսկ ներշնչեալ հրապարագիրներու գրիչով, Մայրաթոռ այդ մասին իրաւունքէ եւ իրաւասութենէ զուրկ ցուցնել աշխատեցաւ, հակառակ իւր նախաձեռնարկ խոստովանութեան:

ԺԳ

Միարանութեան առաջարկած եւ Կաթողիկոսին հաստատած երկու դիտողութիւններէն առաջինը՝ ընդհանուր եւ տիեզերական օրէնագրական սկզբունքէ, ամէն եկեղեցիներէ եւ հասաստութիւններէ ընդունուած եւ զործադրուած, թէ ի պարսպութեան Աբոռոյ մի՛ ինչ փափոխեցի, կամ նորակերպեցի . ուրեմն Կաթողիկոսը շատ զօրաւոր հիման վրայ հաստատած է իւր բարձր որոշումը, զոր Մայրաթոռը Ռուսական Կայսերութեան առաջարկներուն դէմ ալ զործածեց: Հայրապետը ցարգ եւս հասաստուն կը մնայ իւր որոշման վրայ, ինչպէս կը յիշուի 1914 յուլիս 8 թուականի նամակին մէջ, թէ Նոր Կանոնագիր վանուցը ըստ սրբաւան Կանոնակն ունի մնալ անգործադիր ցրեցուրիւն նոր պատրիարքի: Ընդհանուր սկզբունքէ թէ աթոռները իրենց զահակայնութեն մէջ անձնաւորուած կը ճանչցուին, եւ առանց անոնց կացութիւնը այլայլել ներեալ չէ, եւ աթոռին տւանդապահները կամ ի պատուութեան վարողները՝ չեն կրնար որեւէ փոփոխութեան յաւակնիլ կամ համակերպիլ: Աւելորդ չըլլայ անգամ մըն ալ յիշել, որ երուսաղէմի Առաքելական Պատրիարքութիւնը նախապատիւ եւ նախամեծար է քան

Կոստանդնուպոլսոյ Պատրիարքական Աթոռը իսկ Կեղրոնական Երեսփոխանութիւնն ու Վարչութիւնը վերջիվերջոյ Կոստանդնուպոլսոյ Աթոռով կ'անձնաւորուին եւ անոր նախագահութեամբ եւ անոր ձեռքով կը դործեն, եւ չեն կրնար ոտնակոխ ընել եկեղեցական դերագահութեանց եւ իրաւասութեանց սահմանները: Երբոր Միաբանութիւնը գինքն անբաւական կը գտնէ փոփոխութեանց հաւանիլ, եւ կը յայտարարէ թէ Աթոռոյ պարտաւթեան ատեն ոչինչ կրնայ նորակերպուիլ, եւ այդ մասին ուժգին կերպով իւր տեսակէտին վրայ կը պնդէ, կատարկապէս իւր պարտականութեան եւ օրինականութեան շրջանակին մէջ մնացած կ'ըլլայ:

ԺԳ

Ազգային Սահմանադրութիւնը Սուրբ Երուսաղեմի Վանուց Կանոնադիրին յիշատակութիւնն ունի (Սահ. Յօդ. 17), բայց ուրիշ բացատրութիւն չունի, թէ ո՞րն է այդ կանոնադիրը, եւ ուսկի՞ց բղխած, եւ ուսկի՞ց հաստատուած: Այդ լուծութիւնն իսկ բաւական է ցուցնել, թէ յիշուած Կանոնադիրը Երեսփոխանութիւնէ նոր կազմուելիք կանոնադիր մը չէ, այլ Սուրբ Երուսաղէմի սեփական, անկէ բղխած, եւ կանուխէն գոյութիւն ունեցած բան մըն է, որ իւր կազմութեամբ եւ սկզբունքներով չին է, այլ խրմբազրութեամբ կրնայ նորէն պատրաստուիլ, եւ Ազգային Ընդհանուր Ժողովին ներկայացուիլ: Բայց անոր մէջ Կեղրոնական Իշխանութիւնը նախաձեռնարկ հեղինակութեան դեր չունենար: Այդ սկզբունքը, որ ուղիղ է օրէնըստական մեկնութեամբ, կը բղխի սահմանադրական յօդուածներէն, եւ յայտնապէս վկայուած է արքայ Կանոնադիրէն, զոր նոյնինքն Ազգային Ժողովը 1880 հոկտեմբեր 10'ին, եւ 1888 մարտ 18'ին տեսած, քննած, եւ հաստատած է, եւ ընդունած է իբր արքայ Կանոնադիր, կամ կաթողիկոսական Կնդակին բառով, իբր գործող կանոնադրուիլ: Այս կանոնադիրներուն 100'րդ եւ 85'րդ յօդուածներուն համեմատ, Կանոնադիրի վերաբնութիւնը Միաբանական Ընդհանուր Ժո-

ղովով կը կատարուի, եւ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ կը մասուցուի ի վաւերացումն:

Եթէ ուրիշ որեւէ փաստ ալ չըլլար, եւ եթէ ցարդ բացատրուած փաստերուն որեւէ օրինական ոյժ գլացուէր, սոյն այս յօդուածը բաւական էր նոր Կանոնադիրին օրինական պահանջներուն համաձայն չըլլալն ակնհիւս հաստատել, եւ անոր ի նպաստ յառաջ բերուած ամէն փաստ կամ պատճառարանութիւն անհիմն եւ անպօր ցուցնել: Այս յօդուածով Ընդհանուր Ժողովն ալ ընդունած կ'ըլլայ, թէ Սահմանադրութեան կողմէն՝ Կանոնադիրի կազմութեան կամ հեղինակութեան մասին պահուած լուծութիւնը, պիտի մեկնուի եւ իմացուի, ինչպէս մինք ալ բացատրեցինք, այսինքն թէ Կանոնադիրը Երուսաղէմի սեփական եւ Երուսաղէմէ բղխած եւ Երուսաղէմի մէջ գոյութիւն ունեցած կարգադրութիւն մըն էր եւ է, սրուն մէջ եթէ փոփոխութեան մտածանել հարկ ըլլայ, Երուսաղէմն է որ կը պատրաստէ եւ կը կազմէ, իսկ Կոստանդնուպոլիս կ'ընդունի եւ կը վաւերացնէ:

ԺԵ

Կ'ընդունինք թէ ընդունելու եւ վաւերացնելու իշխանութիւնը կ'ենթադրէ զիստութիւն ընելու եւ լարեփոխութիւն առաջարկելու իրաւունքն ալ: Բայց այդ ենթադրութիւնը ոչ երբէք կրնայ տարածուիլ մինչև այն կէտը, որ Երուսաղէմը չլսելով եւ անոր հետ չբանակցելով կանոններ շինուին եւ հաստատուին եւ գործադրութեան բանադատուին, մինչև իսկ անոր Աթոռին պարտաւթեան ատեն, իբր թէ Երուսաղէմի Աթոռին գոյութիւնն ալ վերջացած ըլլար:

Ընդհակառակն ինչ որ ցարդ բացատրուեցաւ լուսաւոր կերպով կ'ապացուցանէ, թէ այդպիսի տարօրինակ ընթացք մը՝ կը խախտէ եկեղեցական զատակարգութիւնը, հակառակ է Ազգային Սահմանադրութեան հոգւոյն եւ տառին, մերժուած է պատմական փաստով, հերքուած է հայրապետական նըզովքով, զատապարտուած է կաթողիկոսա-

կան կոնգրակով, անտեղի ցուցուած է եկեղեցական օրէնքով, եւ նոյնինքն Ազգային Երեսփոխանական Ժողովին նախընթաց գործերով եւ յայտնի որոշումներով՝ օրինական պահանջներու անհամաձայն հռչակուած է: Կը կարծենք թէ աւելի երկարելու պէտք չմնար ապացուցանելու մեր յայտարարութեան առաջին կէտին ճշմարտութիւնը, թէ նոր Կանոնագիրը օրինական պահանջներու համաձայն չէ: Բայց նոյնչափ յայտնի պիտի տեսնուի երկրորդն ալ, թէ նոր Կանոնագիրը իւր զիտած նպատակին յարմար չէ:

ԺԶ

Երրոր Առաքելական Սուրբ Աթոռոյ մը, Սուրբ Տեղեաց պահապան Միաբանութեան մը, ազգային դարաւոր իրաւանց պաշտպան մարմինի մը, քրիստոնէական հոգւոյն եւ եւանգելիան սատարող հաստատութեան մը, ազգային Ուղղափառ Եկեղեցւոյն պայծառութեան սահմանուած կազմակերպութեան մը վրայ կը խորհուի, բնական էր որ հոգ տարուէր այնպիսի կարգադրութիւններու, որոնք նկատի ունենային կրօնաւորական կարգապահութիւնը, եկեղեցական պաշտօնավարութիւնը, բարոյական հոգին, զարգացման պահանջները, ազգային ուղղութիւնը, մէկ խոսքով՝ ընդհանուր բարեկարգութիւնն ու պայծառութիւնը: Նոր Կանոնագիրը ստոնց ամէնը զանց կ'ընէ, եւ հազիւ թէ երկու բառով անցողակի ակնարկ մը կը տեսնուի իւր 19'րդ յօդուածին մէջ: Նոր Կանոնագիրը ոչ Ազգ կը մտածէ եւ ոչ Եկեղեցի, ոչ հոգեւորականը եւ ոչ բարոյականը, այլ լոկ դրամականը, եւ միայն դրամականը, եւ այն ալ ոչ թէ Երուսաղէմը անտեսադիտական եւ խնայողական տեսակէտէն ամուր հիման վրայ կանգադելու համար, այլ պարզապէս Աթոռն ու Միաբանութիւնը իրեն բնիկներէն օտարացնելու, եւ վարձկաններու ձեռք անցնելու եւ ծախքը շատցնելու համար: Այդպէս հիմնական եւ նախնական կերպով, կամ ինչպէս կ'ըսեն՝ ի նախընթացէ, նոր Կանոնագիրը բազմացուած նպատակէն կը հեռա-

նայ, եւ իւր զիտած կամ զիտել տուած կամ զիտել ենթադրուած նպատակին անհամաձայն կը զանուի:

Կանոնագիրին ամբողջ յօդուածներէն բաւական թիւ մը կրկնուած են 1880'ի եւ 1888'ի կանոնադրութեան յօդուածներուն, որոնք ոչ նոր գիւտի մը արժանիքը կը ներկայեն, եւ ոչ ապահովութեան առաւելութիւն կը բերեն. եւ անոնց վրայ անդրադառնալ աւելորդ է. ուստի անտեսադիտական եւ դժբախտական տեսակէտէն միայն կ'ուզենք նկատի առնուլ նոր Կանոնագիրը, որպէսզի մօտէն շօշափել տանք իւր նպատակին յարմար չըլլալը:

ԺԷ

Նոր Կանոնագիրին կազմած նոր ձեւը հետեւեայն է.

1. — Պատրիարքը, Միաբանութիւնը եւ միաբանները զրկել եւ կապուել ամէն անտեսական ձեռնհասութենէ եւ գործունէութենէ եւ մասնակցութենէ:

2. — Այդ մասին ամէն ձեռնհասութիւն վերապահել Երուսաղէմայ հակալոսի յսուկ մարմին ըլլալու սահմանուած եւ հինգ անգամէ բազկացած Խնամակալութեան մը, Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովոյ վերին հակողութեան ներքեւ: Բայց աւելորդ չըլլայ զիտել տալ, թէ Խնամակալութեան կազմութեան համար յօդուած չկայ. եւ այդ կարգադրութիւնը, որ հիմնական ըլլալու սահմանուած է, ծանօթութեան մէջ նետուած է. մինչ յայտնի է թէ ծանօթութիւններ պաշտօնական արժէք չունին բնաւ: Ըստայսմ նոր կարգադրութիւնը իւր հիմէն խախտուած կ'ըլլայ. զի ըստ ենթադրութեան՝ այս Խնամակալութիւնը պիտի ըլլայ, որ Կոստանդնուպոլիս նստելով Երուսաղէմը անտեսապէս պիտի կառավարէ:

3. — Խնամակալութենէն եւ Խառն Ժողովէն զատ, Ազգային Երեսփոխանութիւնն ալ ուղղակի պիտի հսկէ Միաբանութեան թէ անտեսական եւ թէ վարչական գործառնութեանց վրայ. եւ առ այս ներկայացուցիչ մը պիտի ունենայ իրմէ ընտրուած եւ Երուսաղէմ նստող, ամէն գործի խառնուող, ամէն

ժողովներու, ընդհանուր ըլլան թէ մասնաւոր, ներկայ եղող եւ վճռական ձայն ունեցող. մինչ էջմիածնի Կայսերական Պրակուրօրն անգամ նիստերու ներկայ ըլլալու իրաւունք չունի:

4. — Խնամակալութենէ ընտրուած եւ վարչութիւնէն հաստատուած անտեսական մարմին մը պիտի կազմուի Երուսաղէմի մէջ, իրենց նիւղին յատուկ ձեռնհասութեամբ օժտուած հմուտ անձերէ բաղկացած, որով հեռացուած կ'ըլլան միաբանները, քանի որ անոնց ենթադրեալ անհմտութեան վրայ հիմնուած է նոր Կանոնագիրին բոլոր կազմածը:

5. — Տնտեսական մարմինին մէջ կը մտնեն. կալուածապետ, մատակարար, համարակալ, գանձապահ, եւ ասոնց տրամադրութեան տակ անհրաժեշտ պաշտօնեաներ. թիւը անորոշ եւ ըստ կամաց անձանց թողուած:

6. — Յիշուած չենք գտնել որ Խնամակալութեան անդամներ վճարուած ըլլան, բայց ըսուած է թէ ներկայացուցիչը, եւ չորս անտեսական վարիչները, եւ անոնց ենթարկեալ պաշտօնեաները Վանքի ելեւմտացոյցին մէջ նշանակեալ թոշակներով վճարուած պաշտօնեաներ պիտի ըլլան: Ներկայացուցիչին ենթարկեալ յատուկ պաշտօնեայ մը թէ եւ յիշուած չէ, բայց ամսօրեայ տեղեկագիրներ եւ շարունակ թղթակցութիւններ՝ գոնէ քարտուղարի մը տեղ պիտի բանան, որով Երուսաղէմի մատուկը պիտի բեռնաւորուի առնուազն տասը պաշտօնեաներու թոշակներով, եւ ուղեւորութեան եւ բնակութեան եւ սննդեան ծախքերով:

ԺԸ

Նոր Կանոնագիրին անտեսական գործողութիւններուն ալ ընդարձակ բաժին մը նուիրուած է բազմաթիւ յօդուածներով, զորս կ'ուզէինք վերլուծել, այլ կը վախճանք ձանձրոյթ պատճառել. սակայն ինչ ինչ կէտեր ալ բոլորովին լուել անհար է, զի Կանոնագիրին որչափ գործնական եւ նպատակայարմար ըլլալը այդ մանրամասնութիւններէն պէտք է եզրակացուի: Տնտեսական Մարմինը ամենայն ինչ է Վանքին

մէջ. իրեն կը պատկանին կալուածներ, եկամուտներ, նուիրատուութիւններ, բոլոր գոյքեր, հարկաւ եկեղեցւոյ սպասներն եւ անօթներն ալ, եւ Վանքին բոլոր հարստութիւնը: Ինքն պիտի հոգայ սնունդ, զգեստեղէն, վառելիք, լուսավառութիւն, թոշակներ, եւ ամբողջ ելեւմուտք եւ զարգացում: Տնտեսական մարմինը ուսումնականին ալ պիտի խոսնուի, Պատրիարքն այլեւս զարդ մըն է. վասնզի որեւէ ժողովական նիստ օրինաւոր պիտի չըլլայ, եթէ ներկայացուցիչը ներկայ չըլլայ: Եւ որովհետեւ միակ անձնաւորութիւն է, անոր հիւանդութեան կամ բացակայութեան կամ կամայականութեան պարագաներուն՝ պէտք պիտի ըլլայ նիստերը դադարեցնել: Տնտեսական Մարմինը իւր ձեռքը պիտի աւնէ վարժարանը, թանգարանը եւ տպարանը, վասնզի ինքը պիտի որոշէ ծախքերը: Ելեւմտացոյցը նախընթաց երկրորդ վեցամսեային սկիզբը պիտի կազմուի, կրօնական մասն իսկ անտեսականին պիտի յանձնուի. ելեւմտացոյցը պիտի երթայ Խնամակալութեան, անկէ Խոսն ժողովոյ, անկէ Ընդհանուր ժողովոյ. մինչեւ դեկտեմբեր 15 ամէն բան պիտի աւարտի որ յունուար 1'ին գործադրուի: Շատ մը մասնաւորութիւններ ալ կան գանձմանց եւ վճարմանց ձեւերուն, բացառիկ ծախքերուն եւ ելեւմտացոյցի գործադրութեան վրայ. վերջապէս մուտքի եւ ելքի, սովորական եւ արտակարգ զուխներու ցուցակ մը կը փակէ այդ մանրամասնութիւնները: Քաղաքացւոց մասին ալ կը հրամայուի ձրի բնակութիւնները եւ ծախքերը հետզհետէ սեղմել մինչեւ ջնջուին:

Միայն ազգային սեփականութեանց եւ իրաւանց մասին խօսք չկայ, եւ որովհետեւ ամէն միջոցներ անտեսական մարմինին կը փոխանցուին, եւ Աթոռ ու Միաբանութիւն ամէն ձեռնհասութենէ կապտուած, իբրեւ զարդ կամ իբրեւ օտար կը մնան, հետեւանքը պիտի ըլլայ որ ազգային ամէնէն կենսական շահեր պիտի յանձնուին այնպիսի անձերու. որոնք ոչ գործը զիտեն, ոչ տեղեկութիւն ունին, ոչ ձեռնհասութիւն կը վայելն, եւ ոչ խնդիրին բնութիւնը կը ճանչնան: Ահա ա՛յս է ազգային շահերն ու պատիւը, Հայ

Եկեղեցին եւ Սուրբ Երուսաղէմը պաշտպանելու համար մտածուած մեծ ծրագիրը :

ԺԹ

Կանոնագիրը վերլուծելէն ետքը, անոնց մասին ինչինչ զիտողութիւններ ընել ուղելով, նախ պէտք է հետեւցնենք թէ, Կանոնագիրը ծրագրողներ եւ հապճեպ հաստատողներ այնպէս կարծած պիտի ըլլան, թէ Երուսաղէմի մէջ ոչ տոմար կայ եւ ոչ պաշտօնեայ, եւ թէ հաշուակալութեան ամենատարրական կէտերն ալ անձանօթ մնացած են Ս. Աթոռին մէջ : Մէկ խօսքով ծրագիր շինողներ անգիտակ եղած կամ անգիտակ ձեւացած են, կամ այնպէս պէտք է համարուին : Սակայն իրենց եւ հանրութեան ապահովութեան համար կը յայտարարենք, թէ Երուսաղէմ տնտեսական ամէն պաշտօնեաներն ալ ունի, կայուածապետ, շինուածապետ, վարձընկալ, մատակարար, հանգերձապետ, հաշուակալ, գանձապահ, եւ կրեւմտից տեսուչ, եւ մասնաւոր տեսուչներ վանքի մէջ՝ վարժարանի, տպարանի, մոմատան եւ մառանի, եւ վանքէ դուրս՝ Բեթղհնէմ, Յոպպէ, Ռամէ, Լաւողիկէ, Վերիտոն, Դամասկոս եւ Կոստանդնուպոլիս, որ է Պատրիարքական Փոխանորդը : Կան եւս գործակալներ եւ հոգաբարձութիւններ ուր ուրք որ սաղիմապատկան կայուածներ կը գտնուին :

Ասոնց ամէնքը ամէն ամսու վերջ հաշիւնին կը ներկայեն առանձինն տետրով, որ Հաշուակալութեան Դիւանին մէջ օրհաշիւի եւ մայր տոմարի կ'անցնին. եւ 1880՝ էն ասդին կրկնատումար ոճով մայր հաշիւներ կը գտնուին Դիւանին մէջ, ինչամով պահուած եւ պէտք եղած տեղեկութիւնները պարունակող : Հետեւաբար բոլորովին անհարկի եւ աւելորդ աշխատանքներ են ասոնց ամէնը նորէն հաստատելու մարմանով մէջտեղ ելլալը, եւ բաց դուռերը բոնազրօսելու նման աւելորդ ճիգերը : Տնտեսական գործողութիւնները կը կատարուին ընդհանրապէս պահանջուած ձեւերով, մէկը կը հաշուէ, երկրորդը կը քննէ, երրորդը կը հրամայէ, չորրորդը կը

վճարէ : Ասոնց ամէնուն վրայ կայ Պատրիարք մը, որ իւր զիրքովը եւ փորձառութեամբ եւ ձեռնհասութեամբ եւ եկեղեցական ազգեցութեամբ՝ շատ աւելի կրնայ հսկել եւ ներգործել, քան Կոստանդնուպոլիսէն զրկուած աշխարհական ներկայացուցիչը : Պատրիարքի անձին ազդելիք վստահութեան համար ալ կ'ուզենք յիշել տալ, որ Պատրիարքն ալ ուղղակի նոյն այն Ազգային ժողովէն ընտրուած է, որ ներկայացուցիչին ընտրողը պիտի ըլլայ : Հետեւաբար նոր Կանոնագիրին ծրագրած զգուշաւորութեան ձեւերը նորութիւններ չեն ներկայեր, եւ նորութիւններ ալ պիտի չարտագրեն :

Ի

Նոր Կանոնագիրին միակ նորութիւնը պաշտօնները եւ պաշտօնավարութիւնները միաբաններուն ձեռքէն առնելով աշխարհականներու ձեռք յանձնելն է : Բայց ի՞նչ վստահութիւն կրնայ ըլլալ օտարներու ուղղամտութեան վրայ, երբ կ'ուզուի միաբաններուն ընթացքը իր անուղիղ նշաւակել : Ի՞նչ վստահութիւն կրնան ներշնչել աշխարհականները, երբ եկեղեցականները կը դատափետուին : Կոստանդնուպոլսոյ պատրիարքարանին առջեւ շարունակ կ'ելլեն, եւ հանրային կարծիքին առջեւ կը վխտան՝ աշխարհական պաշտօնեաներու եւ խորհուրդներու եւ հոգաբարձութիւններու վրայ յայտնուած կասկածները, կրկնուած մեղադրանքները եւ հաստատուած զեղծումները : Չմոռնանք զանազան ընկերութեանց վրայ պատմուած արարքները : Արդ ո՞ր հոգին, ո՞ր զգացումը, ո՞ր սկզբունքը կրնայ առաւելութիւն տալ աշխարհականին՝ եկեղեցականէն աւելի, կամ օտարին՝ միաբանէն աւելի : Մարդկային իմաստութիւնէ զատ, աւետարանական իմաստութիւնն ալ կը վկայէ, թէ վարձկան պաշտօնեայն բնական բերմամբ զեղծումի միտեալ է, եւ հաւատարմութենէ զուրկ է բնիկին համեմատութեամբ : Մեր պարագային մէջ ալ, որչափ ալ միաբանները հոգեով պաղած, եռանդէ մարած, եւ վանքէն ձանձրացած ենթագրութիւն, վերջապէս ունակական եւ դաստիար

բակական կապ մը ունին Աթոռին եւ Վանքին հետ . անոր շուրջը համակրութիւն մը տածած են սկիզբէն , կեանքերնին անոր հետ միացուցած են , ակնկալութիւննին անկէ կը սպասեն , սպագանին անոր վրայ կը հիմնեն , եւ հնար չէ որ համակրութիւն մը չզգան Աթոռին եւ Վանքին վրայ , եւ անոր օգուտը չմտածեն , եւ փութաճանութիւն մը եւ հոգածութիւն մը չզննեն : Նոյնիսկ երբ իրենց անձնական օգուտը կը հոգան , Վանքի զարգացումը , բարի համբաւը , յաջող վիճակը , Աթոռի պայծառութիւնը , միեւնոյն ժամանակ միարաններու համար ալ անհատապէս նպատատուր կէտեր են : Իսկ աշխարհականը որ ոչ կոչումի եւ ոչ սպագոյի զգացումով պիտի դործէ , այլ ուրիշ գործ չգանալուն համար յանձնառու պիտի ըլլայ ընտանեկան շրջանակը թողուլ , կամ թէ այն ալ հետեւը կապելով Երուսաղէմ գալ , ուրիշ նպատակ պիտի չունենայ , բայց եթէ քանի մը տարի մնալով պաշտօնէն օգտուելի , մինչեւ որ լաւագոյն գործ մը գտնայ , կամ օգտուածէն բաւականանալով տեղը դառնայ : Երուսաղէմ , Սուրբ Տեղիք , Եկեղեցի , Ազգ , Աթոռ , Միարանութիւն , այնպիսեոյն համար աննշանակ կէտեր են՝ անձնական շահին բաղդատութեամբ : Հետեւաբար ոչ մի փաստ եւ ոչ մի վստահութիւն չներշնչեր նոր կանոնագիրի նոր ծրագիրը :

ԻԱ.

Կարեւոր է եւս փնտռել թէ ինչպիսի անձեր պիտի կարենան կոչուել այդ տասն եւ թերեւս աւելի պաշտօններու : Յայտնի է թէ գործը յաջող , դիրքը լաւ , կարողութիւնը շատ , յաջողութիւնը մեծ՝ անձեր յանձն պիտի չառնեն իրենց տեղը թողուլ , եւ Երուսաղէմի Վանքին մէջ , չըսեմք աննշանակ , գոնէ սովորական կարգէ պաշտօններ ստանձնել . ոչ միայն պաշտօնին բնութիւնը հրապոյր մը չներկայեր , այլ տեղն ու կենցաղն ու մթնոլորտն ալ գրգիռ չեն զարթուցաներ : Հետեւաբար այնպիսի միջակութիւններ պիտի յառաջ անցնին , որ ոչ մէկ հանգամանքով , ոչ զգացումով եւ ոչ կարողութիւնով , չեն գերազանցեր զանուած միարանները :

Հոգեւորական զգացումն եւ հոգեւորական ունակութիւնն իսկ պիտի պակսին այնպիսիներուն , եթէ հետեւինք այն անուններուն , որ յիշուեցան երբ ընտրելիներու խօսքեր կը դառնային , որոնք կրօնական սկզբունքէ եւ զգացումէ իսկ զուրկ էին , երբ կրօնական Հաստատութեան մը պայծառութեան կը սահմանուէին :

Արդէն առաջին քայլն ալ բաւական է իբր նմոյշ ծառայել : Ընդհանուր ժողովը ներկայացուցիչ մը ընտրելու համար երկարատեն ասդին անդին զուխ զարնելէ ետքը , լոկ կէս քուէի առաւելութեամբ ձեռքը դըրաւ տեսական Բանասէրի մը վրայ , մինչ անոր պաշտօնը պիտի ըլլար կրօնական եւ վարչական , մատակարարական եւ հաշուական բազմակողմանի ասպարէզը , յուսալով թերեւս որ բանաստեղծական թախչներ կարենան աննշանակ կարծուած մտաւիտի մը հրաշալի յարութիւն պարգեւել : Բայց անոր իսկ աչքին հրապոյր չընծայեց լաւ ամսաթուակը , չուզեց իսկ գործին ուսումնասիրութեան ձեռնարկել , եւ նախընտրեց չուսով հեռանալ . այնչափ տարաշնորհ երեւցաւ իրեն արուած պաշտօնը : Եթէ ներկայացուցիչին գործը այսպէս , ինչ պիտի կարենանք ըսել միւս պաշտօնականներու ընտրութեան համար , բայց եթէ ունենալ պաշտօն չգտած , անգարծ մնացած , փորձի մէջ ձախողած , անպէտ տնձերու խուճը մը , որոնք յանձնառու պիտի ըլլան , գոնէ ժամանակ մը , Երուսաղէմի տարաշխարհիկ պաշտօնավարութիւնները կատարել : Ահա ասանք են որոնց նոր կանոնագիրը կ'ուզէ յանձնել , ոչ միայն հաշուակալութեան կամ մատակարարութեան պաշտօններ , այլ Վանքին զարգացման , Աթոռի պայծառութեան , գանձուց պահպանութեան , եւ ուսումնական յառաջգիտութեան բարձր եւ փափուկ գործերը : Անգամ մըն ալ կը կրկնենք , թէ ծրագրուած կանոնները երբեք նպատակին յարմար չեն :

ԻԲ

Օգտակար կը սեպենք եւս զննել թէ այդ անպտուղ ձեռնարկը քանի՞ պիտի նստի

Երուսաղէմի վրայ : Ներկայացուցիչին համար 50 օսմաննեան ոսկի ամսաթոշակ խօսուելէ սկսաւ , եւ վերջապէս Վարչութիւնը 30 օսմաննեան ոսկիի գոհացուց ընտրեալը : Այդ համեմատութեամբ զոնէ 10' ախան ոսկի պիտի յատկացուի միւս չորսերուն , որք են կալուածապետ , հաշուակալ , մատակարար եւ գանձապահ , եւ զոնէ 10' ախան ոսկի անոնց օգնականներուն , եւ ա՛նա ամսական 160 ոսկեոյ ծախք մը Կանոնագիրին զօրութեամբ , որ կը գումարուի տարեկան 1920 ոսկի օսմաննեան : Աւելցնելով ուղեւորութեան , բնակութեան եւ անդեան եւ ուրիշ պարագաներու համար առ նուազն 280 ոսկի , ա՛նա ունեցանք տարեկան 2200 լիրա օսմաննեան գումարի ուելորդ ծախք մը վանական սընտուկին վրայ ծանրաբեռնուած , երբ նոր Կանոնագիրին նպատակն էր խնայողութիւն եւ չարիաւորութիւն : Թերեւս յուսացուէր այդչափ ծախքով մեծագոյն զեղծումներուն առջեւն ալ առնել : Ես ձեռնարկած եմ , եւ մասամբ Կեդրոնին ալ հաղորդած եմ , երուսաղէմի ելեւմտական կացութեան վրայ ընդարձակ ուսուցմասիրութիւն մը , որպէսզի անցելոյն հետազօտութեամբ միաքերը լուսաւորուին եւ ապագայն ծրագրուի : Ես համոզում գոյացուցի , եւ տեղեկագիրը կարգացողներն ալ համոզում պիտի գոյացնեն , թէ Վանքին կամ Միաբանութեան վրայ սովորաբար մեղադրուած զեղծումները , ամէնէն սաստիկ ենթադրութեան մէջ , Կանոնագիրով բարդուելիք ծախքին մէկ տասներորդին չեն հասնիր :

Արդ բոլորովին յետսամիտ դրութիւն մը եղած պիտի ըլլար , մէկը շահելու համար տասը կորսնցնել . բայց այդ մէկը շահելու ենթադրութիւնն ալ կեղակարծ է . զի խօսուած զեղծումները պիտի չջնջուին , եւ միաբաններու մէկ զեղծումին տեղ վարձկան օտարներ՝ երկուք եւ երեք եւ աւելին ալ ընելու հաւանականութիւնը կ'ընծայեն : Թո՛ղ վկայեն աշխարհական պաշտօնէից զեղծումներու մասին՝ ազգային շրջանակի մէջ լսուածները եւ գրուածները : Այժմ միաբան պաշտօնեաներ տարեկան 10 կամ 15 ոսկեոյ տարեթոշակով նոյն պաշտօնները կը վարեն . միանգամայն հոգեւորական ծառայութիւն-

ները կը կատարեն , Վանքն ու եկեղեցիները չէն կը պահեն , ուխտաւորները կը մխիթարեն : Կանոնագիրը կ'երեւակայէ միաբաններն ալ առատապէս գոհացնել . բայց երբ ասոնք տեսնեն աշխարհականներուն լիաթոշակ վարձատրուիլը , իրենք ալ անշուշտ իրենց համար աւելի վարձքեր պիտի պահանջեն , եւ ինսամակալութիւն եւ Վարչութիւն պիտի ստիպուին օրինաւոր ճանջնալ անոնց պահանջները , եւ նոր բեռեր բարդել Վանքին վրայ : Ահա՛ թէ ուր կը տանի նոր Կանոնագիրին անգործնական եւ անխորհուրդ գրութիւնը : Ուրիշ բան՝ եթէ նոր Կանոնագիրը նոր ոսկեհանք մը կամ ոսկեոյ նոր գոնձատուն մը պիտի դնէ իւր պաշտօնեաններուն տրամադրութեան ներքեւ :

Փակագիծով մը աւելցնենք թէ Ղեւոնդ վարդապետի վերագրուած մեծ զեղծումները հետեւանք են ընդարձակագոյն շրջանակի մէջ կատարուած վաճառմանց եւ զնմանց եւ շինութեանց , որ տեղի պիտի չունենային եթէ Կեդրոնը ժամանակին զանց ըրած չըլլար ելեւմտացոյց հաստատել եւ լրացնալ հաշուեցոյց վաւերացնել :

ԻԳ

Մեր ղիտողութիւնները դեռ կրնայինք ընդարձակել , բայց կ'ուզենք ամփոփել : Ընդհանուր կերպով ամէն մատակարարութեանց մէջ երկու բաժիններ կ'որոշուին . գործողութիւն եւ հսկողութիւն . պաշտօնէութեան մի մասը կը գործէ , եւ միւսը կը քննէ եւ կը հսկէ : Սահմանադրութիւն եւ հին Կանոնագիր այս հիմնական դրութեան վրայ կը քայլին . Երուսաղէմ կը գործէր , Կոստանդնուպոլիս կը հրակէր : Երբոր այդ ներդաշնակ կացութիւնը կը խանգարուի , եւ այն որ պիտի հսկէր՝ գործող կը դառնայ , ո՛վ պիտի հսկէ գործող Կոստանդնուպոլիսին վրայ : Պէտք էր որ նոր Կանոնագիրը նոր Կեդրոն մըն ալ ստեղծէր , նոր գործողին վրայ հսկելու . զի ցորչափ Կոստանդնուպոլիս է , որ իւր ինսամակալութեամբ եւ իւր անուանած պաշտօնեաններով կը գործէ , Կոստանդնուպոլիս ինքն մասնակից եւ գործակից եւ հաւատարմապէս պատասխանատու կը նկատուի եղած մատակարարութեան . հսկող

լինելը կը վերջանայ, եւ գործող կը դառնայ : Այս դիտողութեան վրայ ուրիշ մըն ալ աւելցնենք : Երուսաղէմի անտեսական գործերը սերտ առնչութիւն ունին հոգեւորական պարագաներու հետ : Հասոյթներու մի մասը ուխտաւորական արդիւնքներ են, եւ ուխտաւորը իւր նուէրը յանձնած ասէն, օրհնութիւն եւ աղօթք եւ հոգեւորական մխիթարութիւն կ'ակնկալէ : Եթէ ամէն զանձուհիներ աշխարհական պաշտօնութեան պիտի անցնին, արդեօք հոգեւոր մխիթարութիւններն ալ անոնք պիտի բաշխեն :

Դիտողութիւն մի եւս : Երուսաղէմի արդիւնքներուն պտղաբերութիւնները ցրուած են . եկեղեցիներ, սրբավայրեր, տեսչութիւններ բաւական թիւ մը կը կազմեն, եւ իւրաքանչիւրը արդիւնքներու զանձուհի մէջ զեր ունի : Արդեօք ասոնց իւրաքանչիւրին մէջ ալ մէկ աշխարհական պաշտօնայ պիտի գրուի : Այդ աթիին տասն պաշտօնեաներու թիւը անբաւական է, և մինչեւ քսան և աւելի բարձրացնելու է վճարեալ աշխարհականներու թիւը, որ է ըսել եւսքանզեւս ծանրաբեռնել այն սնտուկը, որուն խնայողութեան համար կը կազմուի այդ նոր Կանոնագիրը : Իսկ եթէ նոր Կանոնագիրի նոր պաշտօնեաները Երուսաղէմի Դիւանին մէջ նստելով տոմար եւ արձանագրութիւն կազմելու սահմանուած են, ուրեմն գործնականապէս անմասն պիտի մնան մատակարարական գործերէ : Պէտք է զխանայ թէ այսօր ալ Աթոռին մէջ տոմարական եւ գրադրական գործերը աշխարհական պաշտօնեաներու յանձնուած են, եւ Երուսաղէմի հաշուակալութեան եւ քարտուղարութեան համար աշխարհական պաշտօնեաներ կը գործածէ Աթոռը իւր ձեռքին տակ, բայց ոչ իր զլիւտուն վրայ :

ԻԳ.

Նոր Կանոնագիրին արամագրութեանց՝ նպատակին անհամապատասխան ըլլալուն մասին դիտողութիւնները, մինչեւ հիմայ պահեցինք արտաքին շրջանակին մէջ . բայց այն ներքին մաս մըն ալ ունի, զոր պէտք չէ մոռացութեան տալ : Նոր Կանոնագիրը ծրագրողներ Երուսաղէմի Պատրիարքութիւն լսած

ատենին, իրրեւ տիպար իրենց աչքին առջեւ ունեցած են Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութիւնը, որ պարզապէս պաշտօնատուն մըն է, ուր առտուն պաշտօնեաները կը մըտնեն եւ երեկոյին կը մեկնին . ոչ կենակցութիւն ունին եւ ոչ միաբանութիւն, եւ իւրաքանչիւրը՝ եկեղեցական ըլլայ թէ աշխարհական, ինքնիրեն անկախ կեանք կը վարէ : Ծրագրողներ չեն մտածած եւս թէ Երուսաղէմի Պատրիարքութիւնը վանք եւ վանական կեանք ունի, եւ միաբան եւ միաբանութիւն կը պարունակէ : Այդ վերջին կացութեան զազաւիարը չկրնար քաղուիլ պաշտօնատունէ մը, այլ մերձաւորապէս ընտանեկան տունէ մը : Տուներու մէջ իշխանութիւնը հայրական է եւ ոչ պաշտօնական, յարաբերութիւնները բնական են եւ ոչ ձեւակերպական, կանոնները զգացումէ կուգան, եւ ոչ արհեստական ծրագիրէ : Հօր եւ զաւկի, եղբոր եւ եղբոր յարաբերութիւններն են, որ վանքի մը մէջ կը տիրեն : Բարոյական կապ մը, բարոյական կեանք մը, բարոյական պահանջ մը, բարոյական նպատակ մը իրարու կը միացնէ վանական միաբանութիւնը : Այդ կացութիւնը պահելու համար ալ պէտք է որ գործողներ համակերպ ըլլան, վարիչներ միատարր ըլլան, աշխատողներ միատեսակ ըլլան, ներքնապէս եւ արտաքնապէս միաբան ըլլան . մէկ խօսքով, պէտք է զուտ եկեղեցական հաստատութիւն մը իրօք եկեղեցական ըլլայ, եւ իր բնութիւնը չկորսնցնէ, որ գոյութիւնը չվասնուի :

Այս սկզբունքը հնաւանդ եւ հաստատուն է ամէն եկեղեցիներու եւ հաստատութիւններու մէջ, ընդունուած է ամէն դարերու և երկիրներու մէջ, պահուած է ամէն ազգութիւններէ եւ զաւանուութիւններէ : Աշխարհականներով վանականութիւն կազմելու, աշխարհականներով վանքեր կառավարելու ծրագիրը, զեւ աշխարհի մէջ նախքնթաց մը չունի : Մեզի էր պահուած արդեօք այդ երեւակոյական դրութիւնը գործնականին մէջ փորձելու իմաստութիւնը : Եղան պետութիւններ որոնք վանական միաբանութեանց դրութիւնը չսիրեցին, բայց ուղղակի վանականութիւնը չնջեցին, եւ ոչ թէ վանքերը վանք պահելով աշխարհականներու յանձնեցին :

ԻԵ

Չգիտցող չկայ որ Երուսաղէմի Սուրբ Տեղեաց մէջ՝ երեք ազգութիւններ ճանչցուած են իբր իրաւունքի եւ իրաւասութեան տէր, եւ հաւասարապէս արտօնեալ եւ ծանուցեալ կացութիւն կը վայելին: Երեք ազգութիւններն ալ անձնաւորուած են իրենց Պատրիարքներով, որք բարձր եւ պատկառելի եւ լիազօր զիրք կը վայելին, եւ այսպէս ճանչցուած են իրարու յարաբերութեանց մէջ եւ կառավարութեան եւ հանրութեան առջեւ: Անոնց ձեռքովն է որ գործեր կը կատարուին, անոնց յայտարարութեամբ է որ խնդիրներ կը լուծուին, անոնց ստորագրութեամբ է որ ամենայն ինչ կը վաւերանայ, անոնց անուսով է որ ստացութիւններ կը պաշտպանուին եւ կը շահագործուին: Այս զիրքին հետեւանքն է որ երեք Պատրիարքներ փոխադարձաբար կը մեծարուին, եւ հանրութեան առջեւ հեղինակութիւն կը կազմեն: Եթէ այդ զիրքը խախտի, ոչ միայն հաւասարութիւնը կը վերջանայ, այլ եւ իրաւունքներ կը վերտանգուին: Ինչպէ՞ս կարենայ այնուհետեւ Հայ Պատրիարքը զիմադրել այն մրցումներուն, որ միւս Պատրիարքներէ կը զրգուին: Երբ Կանոնադիրը ծրագրողներ, եւ ոչ իսկ միաբերենէն անցուցած են այդ պարագաները, ապաթէ ոչ պիտի խղճա՞նք ինչո՞ւ այս ստորնացնել Երուսաղէմի Պատրիարքը, որ ենթարկուած ըլլայ օտար աշխարհականի մը քմահաճոյքին կամ անհատական կամքին, որ իրեն դէմ բողոքներ կարենան ըլլալ նոյն աշխարհականին, որն որ իրաւունք ունենայ արգելիչ միջոցներ ձեռք առնել իրեն դէմ: Պատրիարք մը որուն ոչ մի գործը ոյժ չունենայ՝ եթէ այդ աշխարհականը չուզէ համակերպիլ. որ վերջապէս իւր Միաբանութեան մէջ անդամ մը ընդունելու իրաւունք չունենայ, եւ մինչեւ իսկ ձեռնադրութիւն մը ընելու իրաւասութեանէն կապտուած ըլլայ:

Ոչ մի դաւառական առաջնորդ այդչափ ստորնութեանց ենթարկուած է կեղծոյնի կողմէ, եւ ինչ որ Երուսաղէմի Առաքելական Աթոռին Գահակալին կը զլացուի, զլա-

ցուած չէ Լիմի կամ Կոստեյի, Գլակոյ կամ Կեսարիոյ վանանայերուն, որոնք միաբան կ'ընդունին, ձեռնադրութիւն կը կատարեն, վանքերնին կը կառավարեն եւ ինչքերնին կը մտասկարարեն: Ի՞նչ պիտի ըսեն միւս Պատրիարքներ, ի՞նչ պիտի մտածեն ուրիշ վանքեր, ի՞նչ պիտի կարծեն պետական շրջանակներ, եթէ այդչափ ստորնացած գիտնան Երուսաղէմի Հայոց Պատրիարքը: Այլեւս յայտնի է թէ՛ նոր Կանոնադիրը՝ միայն եկեղեցական եւ սահմանադրական պահանջից դէմ չմեղանչեր, այլ ուղղակի Հայութեան պատիւին եւ Հայութեան օգուտին դէմ կը մեղանչէ:

ԻԶ

Կրնանք ուրեմն ամենայն իրաւամբ եզրակացնել, թէ՛ նոր Կանոնադիրը իւր նորագիւտ դրութեամբ եւ նորակերտ ծրագիրով, ոչ միայն համաձայն չէ ընկալեալ եւ տիրող օրինական պահանջներուն, ոչ միայն համապատասխան չէ այն անտեսական նպատակին, որուն կը կարծէ հետեւիլ, այլեւ բարոյապէս կը կործանէ Երուսաղէմի Աթոռը, կը քանդէ Սուրբ Յակոբեանց Միաբանութիւնը, կը վտանգէ Սուրբ Տեղեաց իրաւունքները, կ'եղծանէ ազգային եկեղեցական զիրքը քրիստոնէութեան մէջ, կը ջնջէ միջազգային շրջանակին մէջ Հայուն պարմանք եղող կացութիւնը: Պատմութիւնը աւելնէիս է. նա կը վկայէ թէ՛ Երուսաղէմ ապեր է Հայուն համար, Երուսաղէմի Միաբանութիւնը արգիւնքներ ունեցեր է անյիշատակ ժամանակներէ հետէ, կրեր է նեղութիւն եւ անձկութիւն, վիշտ եւ ցաւ, տագնապ եւ ստառապանք, հալածանք եւ մինչեւ իսկ կեանքի վտանգ. բայց հաւատարիմ մնացեր է իւր զիրքին մէջ, պաշտպաններ է Հայոց իրաւունքը, պահպաններ է Հայոց ստացութիւնները, բարձրացուցեր է Հայոց պատիւը: Այսչափ դարերու ժառանգութիւնը, որ ազգային աւանդութեամբ մինչեւ Տրդատ եւ Լուսաւորիչ կը բարձրանայ, զոր արտաքինք չեն կրցեր խել, զոր ներքինք ամենայն զոհողութեամբ մեզի հասուցեր են,

սպառսպուռն կը կորսուէր եթէ երբեք իրականութեան մտնէ այն ծրագիրը, որ Կոստանդնուպոլսոյ մէջ երեւակայուեցաւ, մոռնալով աւանդութիւնն ու պատմութիւնը, օրինականութիւնն ու իրականութիւնը: Չէ՛, պէտք չէ որ քսաներորդ դարը ոսնակիս ընէ բոլոր դարերու չնաչխարհիկ արդիւնքը, պէտք չէ որ անարգէ քսան դարերու նուիրական սկզբունքը, պէտք չէ որ իւր վրայ հրաւիրէ իւր եկեղեցին ու իւր Ազգը, իւր սկզբունքն ու իւր նախնիքը ուրացած ըլլալու մեծ նախատինքը:

Այս եղած էր իմ համոզումը. նոյն եղաւ ականատես ըլլալէս ետքը համոզմանս հաստատութիւնը:

Ի՛

Չըլլայ թէ կարծուի որ Երուսաղէմի եւ Կոստանդնուպոլսոյ յարաբերութիւնները խրդիլ ուզենք, կամ թէ Կոստանդնուպոլսոյ կողմէ Երուսաղէմի վրայ կատարուելիք վերհակողութիւնը հերքենք: Ես ալ զօրծի զուէս զանուած եմ, ես ալ միջամտած եմ Երուսաղէմի գործերուն դննութեան, եւ գործունեայ զեր ալ վարած եմ վերջին խնդիրին մէջ: Այլ չեմ ուզած, չեմ փորձած, չեմ յաւակնած Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան պատկանող հակողի դերը գործողի դերին հետ շփոթել. հետեւաբար չեմ ալ անարգած Միաբանութիւնը, չեմ անպատուած Պատրիարքը, օրինական եւ սահմանադրական եւ կոնստանդնական զիծերը չեմ ուզած բռնաբարել: Նախնի ժամանակներու մէջ երբ սահմանադրութիւն եւ վաւերացեալ կարգադրութիւններ կը պակասէին, Երուսաղէմի մասին զանազան կերպեր գործածուած էին: Սահմանադրութիւնը Երուսաղէմով ալ զբաղեցաւ, բայց միայն զգուշաւոր միջոցներ արամադրեց: Մենք մանրամասնօրէն վերլուծեցինք Սահմանադրութեան տասն ու հօդին, տեսնք 1880՛ի եւ 1888՛ի Կանոնադիրները, որոնց մէջ կարեւորը նախատեսուած է, եւ ցուցուցինք թէ եղած կարգադրութիւններ ամէն

պարագաներու բաւական են. այնպէս որ ոչ մի պարագայ նորութիւններ չպահանջեր, բաւական է անոնց արամադրութիւնները լիապէս զօրծադրել: Եթէ երբեք անտեղի հետեւանք մը ծագած է, պատասխանատուութիւնը Կեղրոնին վրայ է, որ ժամանակին պարտուպատշաճ գործադրութիւնը զանց ըրած է, եւ իբր իրեն արգարացում՝ կարգապարտութեանց անբաւականութիւնը կ'ուզէ պատճառել: Մենք կը պնդենք որ ճշգրութեամբ պահուին ցարդ տիրող կանոնները. այն հաստատուն համոզմամբ թէ անոնք բաւական են ամէն վտանգի առջեւ տանել, եւ պէտք չկայ նոր դրութիւններ ծրագրելու: Արդ Սահմանադրութիւնէն եւ հին Կանոնադիրէն Կոստանդնուպոլսոյ Կեղրոնին համար կը քաղուին հետեւեալ ձեւնհաստութիւնները.

1. — Կոստանդնուպոլսոյ կ'ընտրէ Երուսաղէմի Պատրիարքը.
2. — Կոստանդնուպոլսոյ կը դատէ Երուսաղէմի Պատրիարքին գործերը.
3. — Կոստանդնուպոլսոյ կը հաստատէ Երուսաղէմի Երեւմտացոյցը.
4. — Կոստանդնուպոլսոյ կը վաւերացնէ լրացեալ հաշուեցոյցը.
5. — Կոստանդնուպոլսոյ կը միջամտէ բացառիկ դէպքեր կարգադրելու առժամեայ կերպով:

Այլ Կոստանդնուպոլսոյ չկրնար Երուսաղէմի օրինական զիրքը փոխել եւ իրաւունքները չնջել:

Ի՛

Պատրիարքի ընտրութեանը Կոստանդնուպոլսոյ Լ'նդհանուր Ժողովին վերապահուած ըլլալը, եօթնունն փակեալ ցանկի մը սահմանին մէջ, Պատրիարքը Կեղրոնին ներկայացուցիչ կ'ընէ, քան թէ Միաբանութեան ընտրեալը, և կ'իրականացնէ Երուսաղէմի մէջ Կեղրոնին աչքն ու ձայնն ունենալու զաղափարը: Պատրիարքին անձն իսկ, իւր եկեղեցականութեամբը, բարձր աստիճանովը, փորձատուութեամբը, գործունէու-

թեամբը, եւ ազդեցութեամբը շատ աւելի արդիւնաւոր կերպով կը կատարէ վերին հսկողութիւնը, կ'առաջնորդէ ժողովոց ուղղութեանը, կը վարէ գործերու եւ զսպելու դերերը, քան որեւէ աշխարհիկ անձ մը, ըլլայ պարզ բանասէր անձ մը, ըլլայ համետ պաշտօնեայ մը, որ դժուարաւ պիտի ազդէ պատրիարքէ, եպիսկոպոսներէ եւ քաղմաթիւ վարդապետներէ կազմուած մարմինի մը վրայ:

Բայց միթէ նոյն ինքն Պատրիարքի բարձրաստիճան անձնաւորութիւնն ալ ենթարկուած չէ՞ ի հարկին կոստանդնուպոլսոյ զատաստանին. եւ ասկէ աւելի ի՞նչ զօրաւոր միջոց պէտք կ'ըլլայ, եթէ երբեք Պատրիարքը աղիկամի ու ապօրէն, եւ Սահմանադրութեան ու կանոնի հակառակ գործերու մէջ գտնուի: Երեսփոխանութիւնը ի՞նչ աւելի ազդու միջոց ունի, եթէ երբեք իւր ներկայացուցիչը գտնուի այն դիրքին մէջ, որուն մէջ Պատրիարքը կ'ենթադրուի: Աշխարհականի մը դէմ եւ ոչ իսկ դատելու եւ զատապարսկու եւ պատժելու միջոցները կը մնան իւր ձեռքը, որոնք դիւրաւ կը գործադրուին եկեղեցականի մը վրայ: Փորձով ալ տեսնուած է, որ Պատրիարքի դէմ ձայն բարձրացնողներ եւ օրինական ձեւեր գործածողներ, եւ ոչ իսկ փորձեցին բերան բանալ աշխարհական ժողովականներու վրայ: Ուրեմն հսկողութեան եւ զգուշաւորութեան եւ դարմանի միջոցները առաւելօքն տպահովուած էին եւ են տիրող կանոններուն մէջ:

ցոյցեր քննեց, այլ տարապարտ խնդիրներով ժամանակ անցուց, եւ ժամավաճառութեամբ Երուսաղէմը շարունակ յոռեզոյն կացութեան մատնեց: Այս նախընթացը զիստալով, մարդ մը շատ միամիտ ըլլալու է նոր կանոնադիրին կարգադրութեանց վատահելու, որ հսկողի դերին մէջ թերացող Երեսփոխանութեան վրայ՝ գործողի դերն ալ կ'ուղէ աւելցնել, եւ անոր մէջ գտնել Երուսաղէմի բարեկարգութեան սրմամբը:

Եթէ կոստանդնուպոլսոյ Լ'նդհանուր ժողովը գործօն դեր ունենալու կամք եւ կար ունենար, նախեւառաջ իւր Պատրիարքարանին ելեւմտացոյցը կը հաստատէր. մինչդեռ 1908'է սաղին վեց տարիներ անցան, եւ տարիները լրանալէն ետքը միայն նախահայեւներու խօսքն անցաւ իբրեւ ատենը անցած գործ: Կոստանդնուպոլսոյ Լ'նդհանուր ժողովին այդ գործը, կամ անգործութիւնը, աշխարհաքարոզ է այլեւս. եւ զուր ակնկալանք եւ սնտօի խարկանք է անկէ սպասել գործերու ընթացքը: Մենք կ'ուզենք որ հսկողութեան իրաւունքները Լ'նդհանուր ժողովը գործածէ, բայց այն ալ չենք յուսար. եւ կրնանք համարձակ հետեցնել, թէ մեծ մասամբ կեդրոնին իրեն ինկածը չընելէն առաջ եկած է Երուսաղէմի վրայ տիրող անտեսական տագնապը: Տակաւին Սաղիմական եւ ոչ մի տարեկան հաշիւ Լ'նդհանուր ժողովէն քննուած չէ, եւ ոչ իսկ նայուած է, մինչ նոր կանոնագիրը Լ'նդհանուր ժողովէն շատ բան կը սպասէ:

ԻՐԹ

Լ

Երեսփոխանական ժողովին իրաւունք արուած է նախահայելի ելեւմտացոյցները հաստատել, և լրման հաշուեցոյցերը վաւերացնել. բայց 1893 տարին իվեր կեդրոնը այդ իրաւունքը գործածած չէ: Թերեւս 1893 տարին մինչեւ 1908 տարին Լ'նդհանուր ժողովին խափանուիլը, կերպով մը արդարացունէ այդ հնգետասանամեայ միջոցին յիտաձգումը. բայց ի՞նչ բանք 1908'է սաղին պաշտօնավարող Ազգային ժողովին, որ ոչ ելեւմտացոյցով զբաղեցաւ, եւ ոչ հաշուե-

Մենք կ'ուզենք, կը պնդենք, եւ կը պահանջենք իսկ, որ կեդրոնը իրեն իրաւունքը գործադրէ, եւ որպէսզի կարենայ գործադրել, կը պահանջենք ալ որ իրեն իրաւունքէն աւելին չմիջամտէ, որպէսզի չխափանուի իւր բուն իրաւունքը գործադրելէ: Եթէ ելեւմտացոյցեր ժամանակին քննուած եւ հաստատուած ըլլային, վանական մատակարարութիւնը կը պարտաւորուէր ճշգրտաւ ըլլալ, եւ զժուած շրջանակին մէջ մնալ. փոխառութեանց ասպարէզը չէր տարածուեր,


չինութեանց մարմաջը չէր ընդարձակուեր, կայուածական եւ հողային գնմանց եւ վաւաճումանց ազատ ասպարէզ չէր բացուեր: Ասոնք կեցնելու համար ոչ ներկայացուցիչ պէտք է, ոչ ալ կեդրոնէ պաշտօնէից խումբ մը զրկելու հարկ կայ. այլ ժամանակին եւեւամտացոյցը չինել եւ ճշդել եւ հաստատել, եւ անոր գործադրութիւնը պահանջել: Երբոր Երուսաղէմ իւր լրացեալ հաշիւները կը յղէ, պարզ բաղդատութիւն մը կը բաւէ իսկութիւնը ցոյց տալ եւ բացատիկ պարագաներն ալ պարզել: Ասոնք ամենքը օրինական պահանջներու եւ գործնական սահմաններու շրջանակին մէջ են, եւ օրինականին եւ գործնականին ոչ ոք կրնայ հակառակիլ, եւ ինչպէս կը տեսնուի՝ մենք ալ անոնց նախանձայոյզ պաշտպանը կ'ըլլանք: Ընդհակառակն աւելորդ միջոցներ, անօրինակ պահանջներ, անգործնական որոշումներ, ամէն բան տակնուվրայ ընելէն զատ, կացութիւնը կը խանգարեն, Ազգը կ'անպատուեն, Եկեղեցին կ'անարգեն, Հայութիւնը կը վտանգեն, աննպատակ ծախքեր կը ստեղծեն, վիճակը կը ծանրացնեն, ապարդիւն ձեռնարկներ կը կուտակեն. որովհետեւ պատճառ ու նպատակ չեն բաղդատուիր, միջոց եւ արդիւնք չեն կշռուիր:

ԼԱ

Այս տեղ կը սպասի Դիտողագիրիս համար որոշած նիւթերնիս, որով կ'ուզէինք ապացուցանել թէ նոր Կանոնագիրը օրինական պահանջներու համաձայն չէ, եւ մտադրուած նպատակին յարմար չէ. աւելցնելով ալ թէ տիրող Կանոնագիրով հնար է նոյն նպատակը ձեռք բերել, որ է Երուսաղէմի Վանքին անտեսական կարգադրութիւնը: Այս ճշմարտութիւնը այլեւս ամէնուն յայտնի եղած է, եւ ինչ որ մենք այստեղ գիրի ստինք՝ ներկայից գիտակցութեան եւ ապագայից յիշատակին համար, պէտք է անհակառակ ընդունուած ճշմարտութիւն համարուի: Նոյնիսկ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքարանին մէջ ու շուրջը եղող պաշտօնական անձեր եւ մարմիններն ալ համարձակ կը խոստովանին,

թէ նոր Կանոնագիրը թերութիւններ ունի, թէ սպասուած նպատակին չհամապատասխաներ, եւ թէ շատ դժգոյք կը սրբազրուելիք կէտեր կան: Եթէ տրամաբանական ըլլալ ուզէին, պէտք էր հետեւցնէին, թէ ուրեմն գործադրելի չէ. բայց սխալ իմացուած արժանապատուութիւն մը իրենց ջնքերց յայտնի ճշմարտութիւն մը խոստովանիլ: Թո՛ղ այդ բարոյական քաջութիւնն ու հոգեբանական արիւնքիւնն ունենան, եւ ահա ամենայն ինչ կատարեալ և ամէն խնդիր վերջացեալ է: Աւելի պարզ խօսած ըլլալու համար աւելցնենք, թէ պահուելիք յօդուածները անոնք են, զորս նորը հինէն փոխանցած է. ջնջուելու են այն յօդուածները, զորս նորը իւր տեսութեամբ կազմած է: Ա՛լ աւելի պարզ խօսելու համար, հինը բաւական է, նորի պէտք չկայ:

Մեր նպատակն էր խնդիրը իւր սկզբունքին մէջ քննել. ուստի չենք ուզեր յօդուածներու մանրամասնութեանց մտնել, մասնաւոր անոնք ակնբերել կը յայտնուին արդէն գրածներէս:



ԼԲ

Ներկայ ուսումնասիրութիւնը լրացնելու համար երկու խօսք ալ աւելցնենք, թէ ուսկից յառաջ եկած է պարտքը, որ այսօր 38000 օսմանեան ոսկւոյ հասած է: Ազգին հանրութեան եւ պաշտօնական մարմիններուն միտքը ճշնողը այդ պարտքն է, եւ նոր Կանոնագիրը իբր թէ պարտքը մաքրելու եւ պարտքը չնորոգելու նպատակով կազմուած է: Հետեւաբար պարտքին մասին լուստարտութիւնն ալ Դիտողագիրիս էական մաս մը պիտի նկատուի:

Արդ, Երուսաղէմ դարաւոր եւ փառաւոր Ազգային Հաստատութիւն է, եւ նոր չէ որ պարտքի տաղնապ ունեցած է: Այս ալ յառաջ եկած է, որովհետեւ,

1. Իւր հասոյթները բարեպաշտական կամաւորութեան վրայ հաստատուած են.
2. Իւր ծախքերը ստիպողական են եւ անակնկալներէ յառաջ կուգան.
3. Իւր պարագայք զինքն զօրութիւնն-

բու և կարողներու մրցակցութեան կը ստիպեն.

4. Սուբբ Տեղեաց պաշտպանութեան զլխաւոր միջոցը դրամական գոհողութիւնն է .

5. Տեղեական անհաւասարութիւն կը տիրէ իւր հասոյթից և ծախուց մէջ .

6. Կալուածական հասոյթներ անազան սկսած են :

Այսուհանդերձ Ազգն բովանդակ Սուբբ Տեղեաց ջերմեանդութեամբ և հոգեպինդ եռանդով , ամէն ատեն երուսաղէմի օգնութեան հասած է , պարտքերը վճարած է , շինութիւնները ընդարձակած է , դիրքը բարձրացուցած է , և ասոնց ամէնքը ըրած է գոհողութեանց յանձնառութեամբ : Պարոնտէրի և Շղթայակիրի ժամանակներն ու գործերը բացառիկ երեւոյթներ չեն . իրենց նախընթացներն և իրենց հետեւորդներն ունին երուսաղէմի պատմութեան մէջ , թէպէտ ոչ միշտ նոյն աստիճանով :

ԼԳ

Բայց ասոնք հին պատմութիւններ են , որ թերեւս շատ չազդեն նորերուն վրայ , որոնց հոգեբանական վիճակն ալ փոփոխուած է դարերուն հետ : Պարտքերու վերջին մաքրութիւնը տեղի ունեցաւ 1900 փետրուարին , կալուածական հաստատուն ստացութեան մը գոհողութեամբ , ինչպէս էր Աղեքսանդրիոյ գետինը , 28000 և ւաւելի ոսկւոյ վաճառուած : Նոր պարտքը 1900 մայիսի սկիզբէն մինչև 1914 ապրիլի վերջ 38000 ոսկւոյ բարձրացած է 14 տարիներու ընթացքին , որ եթէ հաւասար յառաջխաղացութեամբ հաշուուէր՝ տարեկան 2714 ոսկւոյ յաւելուած կուտայ : Սակայն այսպէս յառաջացած չէ , զի 1905'ին , պարտքերը մաքրուելէն հինգ տարի ետքը , 23000 և ւաւելի պարտք մը կը քաղուի տոմարներէն , որ է տարեկան 4600 ոսկւոյ յաւելուած : Եթէ այդ տարեկան յաւելումէն մաս մը հասութից և ծախուց սովորական անհաւասարութեան վերագրենք , տակաւին ամբաստանէ իբր 4000 ոսկի պարտքի յաւելուած կը գտնուի , սովորականէ դուրս պատճառներէ գոյացած : Այս պատճառը շինուածական մենամոլութիւնն է , որ արդէն

Մեր Տիրոջ եւ Փրկչի միասնի Բրիստոսի Ս. Ծննդեան աւետիսը այն սքանչելի առիթներէն մինն է, որ բայցիբը կ'առաջնորդէ զէպի Աստուածային Ճշմարտութեան: Հաւատքով ամբողջած, Հոգեպէս առաւել զօրացած Հաւատացեալներ միշտ վկայութիւնը կու տան աշխարհի, թէ Աստուծոյ Ոստքը անկորնչելի Հոգեւոր Հարստութիւնն է մանաւանդ ներկայ ժամանակներուն մէջ:

Այս առթիւ կ'աղօթենք սո Բարձրեալն Աստուած, Ձեր առողջութեան եւ Սրբոց Բակուրեանց Միաբանութեան անսասանութեան եւ միշտ բարգաւաճման համար:

Մնամք Եղբայրական ուղջունիւ եւ սիրով ի Բրիստոս,
Ազօթակից՝

HIS BEATITUDE PATRIARCH
TORKOM MANOOGIAN
ARMENIAN PATRIARCHATE IN JERUSALEM
POST BOX 14235 OLD CITY
JERUSALEMISRAEL

I WISH YOU ALL THE BEST OF HEALTH SPIRITUAL STRENGTH AND COURAGE IN THE ACCOMPLISHMENT OF YOUR ACTIVITIES DEVOTED TO OUR HOLY CHURCH ON THE OCCASION OF THE NEW YEAR AND THE HOLY NATIVITY YOU ARE ALWAYS IN OUR THOUGHTS AND OUR PRAYERS. RESPECTFULLY,
MIKHAEL ESSAYAN

Ս. ՅԱԿՈՒԻ ԼԵՐՍԷԼ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Կիր. 1 Դեկտ. 1996.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն: մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Գշ. 3 Դեկտ.- Նախատեսակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Կարիպեան:

Դշ. 4 Դեկտ.- Ընծայումն Ս. Աստուածածնի: Տ. Սեւան Եպս. Կարիպեանի գլխաւորութեամբ: Միարան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, հանդիսապետ Սրբազան օրուան Ս. Պատարագը մատուց Տիրամօր Ս. Գեղեցիկանին վրայ:

- Բարեբրար Կիւլապի Կիւլպէնկեանի եւ իր գերդաստանի ննջեցելոց հոգիներուն համար կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն: Հանդիսապետն էր Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղջանեան:

Շր. 7 Դեկտ.- Սրբոցն Գրիգորի Սմանչլագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարսիսեան:

Կիր. 8 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ խորանի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Սահակ Արդ. Մաշայեան:

Ուր. 13 Դեկտ.- Նախատեսակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

Շր. 14 Դեկտ.- Առաքելոցն Թաղէտի եւ Բարբողիմէտի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Արաջանեան:

Կիր. 15 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Կարիպեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

Շր. 21 Դեկտ.- Նախատեսակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

Կիր. 22 Դեկտ.- Յղութիւն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանի գլխաւորութեամբ Միարան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գեղեցիկանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց եւ քարոզեց հանդիսապետ Սրբազանը, եւ տուաւ Ս. Տաճարին պատմականը:

Ուր. 27 Դեկտ.- Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շր. 28 Դեկտ.- Ս. Յակոբայ Մծքնայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան: Վերաբերումը կատարուեցաւ Սուրբին նկարով կառուցուած շարժական Սեղանին վրայէն:

Կիր. 29 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Ժամարարն էր Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Շր. 4 Յունուար 1997.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր. ժամարարն էր Տ. Թէոդորոս Արդ. Ջախարեան:

Կիր. 5 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին: Ժամարարն էր Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղջանեան:

- Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր նախատեսակին, որմէ ետք Միարանութիւնը Ս. Աթոռայ «Օրհնեցէ՛ք զՏէր» շարականի երգեցողութեամբ բափօրով բարձրացաւ Պատրիարքարան:

Բշ. 6 Յուն.- Ս. Դաւիթ Մարգարէին եւ Յակովբայ Տեառնեղբոր (Տօն Առաքելական Ս. Աթոռոյ Ս. Երուսաղէմի):

- Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը, շուրջաւ եւ եմփոքոն գեցեց թարձրացաւ Տեառնեղբոր Աթոռի պատուանդանին, ուր մնաց մինչեւ ժամերգութեան աւարտիլը եւ ընդունեց Միարանութեան եւ զպիբնեւրուն շնորհաւորութիւնները:

Լուրարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեան «Քրիստոս Աստուած մեր» մաղբանքի ընթացքին մասնաւոր քարեմաղբութիւններ ըրաւ Նորին Ամենապատուութեան երկար քարոզ կենաց համար եւ ապա մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ եւ քարոզեց:

«Հայր Մեծ»էն առաջ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հանգստեան պաշտամունքին:

- Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Ս. Ստեփանոսի նախատեսակին: Տօնին բուրվառակիր հայրերն էին Տ. Էմմանուէլ Արդ. Արաջանեան եւ Տ. Թէոդորոս Արդ. Ջախարեան:

Գշ. 7 Յուն.- Սրբոցն Ատեփանոսի Նախասարկաւազին եւ Առաջին Մարտիրոսին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս. Աթոռոյս

բարեշնորհ Սարկաւագները թիւով 9, առաջնորդութեամբ երկու բուրվառակիր վարդապետներուն, մարգարտագարդ սաղաւարտներով եւ տապանակ ու բուրվառ ի ձեռնին, կատարեցին «Սարկաւագաց Հանդէսը»: Արարողութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ Ս. Ստեփանոսի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

- Ժառանգաւորաց Վարժարանի նաշարահին մէջ տեղի ունեցաւ Միաբանական ընթրիք՝ Սարկաւագաց Տօնին առթիւ: Խօսք առին, Տրց. Կարէն Բարսեղեան, որ հրաւիրեց Սարկաւագապետներէն Տ. Էմմանուէլ Արդ. Աքաջանեանին, եւ ապա Տրց. Հայկ Գազազեանին. սարկաւագները միաբերան երգեցին «Նախասարկաւագ» շարականը: Ուսուցչական կազմին կողմէ խօսեցաւ Պրն. Հրաչիկ Միրզոյեան: Խօսք առաւ էջմիածնէն Ս. Գայիանէ վանքին ֆահանայ Տ. Յարութիւն Գարրինեանը, որ երուսաղեմ ուխտի եկած է երէցկնոջ հետ:

Ապա Պատրիարք Սրբազան Հայրը ըրաւ իր փակման խօսքը եւ հանդէսը վերջացաւ «Պահպանիչ»ով:

Գշ. 8 Յուն.- Գլխաւոր Առաքելոց նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Եշ. 9 Յուն.- Ս. Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ Ս. Պատարագը մատուցեց Տ. Դանիէլ Քինյ. Գարանեան:

Ուր. 10 Յուն.- Ս. Յակոբայ Մայր Տաճարին գաւիթէն կատարուած «Հրաշափառ»ի արարողութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

- Ժամերգութեանն էր նախատեսակէն ետք Միաբանութիւնը «Որ էն յեութեան» Ս. Աթոռոյ շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան:

Շր. 11 Յուն.- Տօն Սրբոց Որդուցն Որոտման: Մայր Տաճարի Ս. Գլխաղբի մատրան մէջ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ ֆարօգեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ապասարկող վարդապետներն էին Տ. Աւետիս Արդ. Իփրանեան եւ Տ. Բագրատ Արդ. Պուրեմեան: Իսկ բուրվառակիր վարդապետներն էին Տ. Թեոդորոս Արդ. Ջաֆարեան եւ Տ. Էմմանուէլ Արդ. Աքաջանեան:

Ապա Պատրիարք Սրբազան Հայրը ամպիոզանի տակ, Ս. Խաչափայտի մասունք ի ձեռնին, նախագահեց եռադարձ մեծահանդէս բափօրին:

Թափօրէն վերջ Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Որ էն յեութեան» Ս. Աթոռոյ շարականի

երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան: Պատրիարք Սրբազան Հայրը օրհնուած նշխար թաժնեց բոլորին փակելով շարքը Աւագ Տօներուն:

Կիր. 12 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Բշ. 13 Յուն.- Իրիկեանդէմին, Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութիւնը ներկայ եղան ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցած «Կաղանդ»ի հանդէսին:

- Հանդէսէն ետք Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութիւնը միասին ընթրեցին Պարտիզաբաղի սեղանատան մէջ:

Գշ. 14 Յուն.- Կաղանդ, Նոր Տարի, ըստ Հին Տոմարի: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Տ. Թեոդորոս Արդ. Ջաֆարեան: «Հայր Մեր»էն առաջ ֆարօգեց Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջոզանեան:

Պատարագէն ետք բոլորը բարձրացան Պատրիարքարանի դահլիճը երգելով Ս. Աթոռոյ Մաղբերգը:

- Նորին Ամենապատուութիւնը ըրաւ իր պատշաճ խօսքը, մտիկ ընելէ յետոյ Վարժարանի մանուկներէն Մակի Յովհաննէսեանի յստակ առողանութեամբ կարդացած բարի մաղբանկները, եւ ներկաներուն թաժնեց նարինջ:

- Նոյն առաւօտուն Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աքաջանեան: Պատարագէն ետք եղան Պատրիարքարան:

Շր. 18 Յուն.- Ճրքագլուխ Ս. Ծննդեան: Առաւօտեան ժամը 10ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ ամբողջ Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով մը ճամբայ եղան դէպի Բեթղեհէմ:

Ճամբու կիսուն Յունաց Ս. Նոյա վանքին առջեւ դիմաւորութեան եկած էին մուխթարներ եւ ֆաղաֆապետարանի ներկայացուցիչներ:

Ինքնաշարժերու թափօրը հասաւ Ռաֆէլի գերեզմանը, որմէ ետք թափօրը մտաւ Պաղեստինեան թաժին եւ հայ Սկաուտական նուագախումբերու առաջնորդութեամբ դէպի Ս. Ծննդեան հրապարակը, ուր Պատրիարք Սրբազան Հայրը դիմաւորուեցաւ ընդհանուր ուսիկանապետէն, կառավարիչէն, ֆաղաֆապետէն եւ ներկայացուցիչներէն, կազմուեցաւ թափօր, միաբանութեան անդամներով եւ ժառանգաւոր սաներով:

«Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ թափօրը բարձրացաւ Ս. Ծննդեան Տաճարի Հայկական Վանքը:

Տեսչարանին մէջ բարի գալուստի խօսքերէն եւ Պատրիարք Սրբազան Զօր խաղաղութեան եւ բարօրութեան մաղթանքներէն յետոյ տեղի ունեցաւ պատուասիրութիւն:

- Յետ միջօրէի ժամը 2ին Պատրիարք Սրբազան Զօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»ով մուտք կատարուեցաւ Ա. Ծննդեան Տաճարը եւ Ա. Այրը:

Ճրագալոյցի Ա. Պատարագը Ա. Այրին մէջ կը մատուցանէ Տ. Բագրատ Արդ. Պուրնէ՛քեան:

Ապա բոլոր Միաբանութիւնը կը բարձրանայ Հայոց Վանք, ուր բակին մէջ կը կարդացուի Ա. Ծննդեան Աւետարանը եւ կ'երգուի «Փառք ի Բարձունս»:

- Գիշերուան ժամը 7.30ին վանքի հիւրարահին մէջ, տեղի կ'ունենայ հիւրասիրութիւն: Գիշերուան ժամը 10ին կը վերսկսին արարողութիւնները: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Կիր. 19 Յուն.- Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն: Կես գիշերին, ամբողջ միաբանութիւնը կ'իջնէ Ա. Ծննդեան Այրը, ուր կը շարունակուին արարողութիւնները:

Պատրիարք Սրբազան Հայրը կու տայ իր պատգամը Հայերէն եւ Անգլիերէն լեզուներով: Նոր Պաղեստինեան կառավարութեան ներկայացուցիչները որոնք ներկայ էին Ա. Այրին մէջ կատարուած արարողութեան, կը շնորհատրեն Պատրիարք Սրբազան Հայրը եւ կը մեկնին: Պատրիարք Սրբազան Հայրը կը վերադառնայ Երուսաղէմ:

- Աւագ Սեղանին վրայ կը պատարագէ եւ կը քարոզէ Տ. Յարութիւն Քհնյ. Դարբինեան: «Ջրօրհնէ՛ք»ի արարողութեան կը նախագահէ եւ կը քարոզէ Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեան, որ Պոլիսէն հաւատացեալներու խումբի մը ի գլուխ, Երուսաղէմ եկած են ուխտի:

- Ա. Ծննդեան Այրին մէջ կը պատարագէ Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Բոլոր Միաբանութիւնը կը բարձրանայ Հայոց Տեսչարան, ուր բակին մէջ կը կարդացուի Ա. Ծննդեան Աւետարանը եւ կ'երգուի «Փառք ի Բարձունս» եւ Միաբանութիւնը կը վերադառնայ Ա. Արոտ:

- Իսկ Երուսաղէմի մէջ, Ճրագալոյցի արարողութեան, Ա. Յարութեան Տաճարին մէջ՝ Ա. Գերեզմանին վրայ, նախատեսակին կը նախագահէ Տաճարին տեսուչը՝ Տ. Վաղարշ Եպս. Խաչատրեան:

Ա. Գերեզմանին վրայ կը պատարագէ Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէ՛քեան:

Արարողութիւնը կ'աւարտի Տաճարի մեր Տեսչարանին մէջ Ա. Ծննդեան Աւետարանի ընթերցումով «Փառք ի Բարձունս»ի երգեցողութեամբ:

- Ա. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ յաջորդ առաւօտ կը պատարագէ Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէ՛քեան: «Ջրօրհնէ՛ք»ի արարողութեան կը նախագահէ Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

- Կեսօրէ ետք ի Ա. Յակոբ պաշտուած նախատեսակին Հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Բշ. 20 Յուն.- Յիշատակ Մեռելոց: Ըստ սովորութեան Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Աւագ Թարգման Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան: Իսկ Հոգեհանգստեան կարգին հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 25 Յուն.- Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին ձախակողմեան դասուն Ա. Աստուածամայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

- Նախատեսակին ի Ա. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 26 Յուն.- Տօն Անուանակոչութեան Տեառն: Պատրիարք Սրբազան Զօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ա. Յարութեան Տաճար:

Օրուան հանդիսաւոր Ա. Պատարագը Քրիստոսի Ա. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Գեւոր վանք դարձին, հայոց բազի մուտքէն Միաբանութիւնը «Լոյս ի Լուսոյ» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարանի դահլիճը, ուր Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց «Տնօրհնէ՛ք»ի արարողութեան, որ կրկնուեցաւ վանքի սեղանատուններուն մէջ:

- Նախատեսակին ի Ա. Յակոբ հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Բշ. 27 Յուն.- Տօն Ծննդեան Ա. Յովհաննու Կարապետին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Արաջանեան:

Շր. 1 Փետր.- Արքեպիսկոպոսի քաղաքին եւ Եօթն մանկանցն եփեսոսի: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխաղիք. ժամարարն էր Տ. Յարութիւն Քհնյ. Դարբինեան:

Կիր. 2 Փետր.- Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասուն մէջ գտնուող Ա. Աստուածամայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Սահակ Արդ. Մաշալեան:

Շր. 8 Փետր.- Արքեպիսկոպոսի քաղաքին եւ Կիրղի: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխաղիք. ժամարարն էր Տ. Զաւարիա Քհնյ. Սարիբէկեան:

Կիր. 9 Փետր.- Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, մեր վերնամասերուն մէջ:

Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեան:

Շր. 15 Փետր.- Սրբոյն Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Կիր. 16 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Ուր. 21 Փետր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 22 Փետր.- Ս. Աարգսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի Ս. Աարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Ըստ սովորութեան կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, հանգուցեալ ազգային բարերար Գալուստ Պէլ Կիւլպէնկեանի, եւ իր ծննդաց Աարգսի եւ Տիրուհոյ, եւ գերդաստանի ննջեցելոց հոգիներուն համար: Հանդիսապետն էր Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 23 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արդ. Զաւարեան:

Դշ. 26 Փետր.- Տեառները առաջի մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, որմէ ետք կատարուեցաւ «Անդաստան» եւ մոմավառութիւն, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

- Գիշերակիգրին, Մայր Տանարին մէջ կատարուեցաւ «Եկեցե՛ք» ի հսկման կարգը: Հանդիսապետն էր Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

Եշ. 27 Փետր.- Տեառընդառաջ: Ս. Պատարագը Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ ֆարոգեց Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

Շր. 1 Մարտ.- Իսահակայ Պարբեւի Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 2 Մարտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Ժամարարն էր Տ. Շնորհի Ծ. Վրդ. Գասպարեան:

Դշ. , Մարտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եշ. 6 Մարտ.- Ս. Վարդանանց Զօրավարացն Մերոց 1036 վկայիցն (Յիշատակ Մեծելոց եւ Տօն Ազգային):

- Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ ֆարոգեց Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զղբանեան:

Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի անուան տօնին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղրանք»ին:

Ուր. 7 Մարտ.- Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Ասորոց Ս. Մարկոս Աւետարանիչ եկեղեցոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան, որ նաեւ ֆարոգեց: Ժամարարն էր Տ. Բագրատ Արդ. Պորնէֆեան: Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ասորոց կողմէն:

Շր. 8 Մարտ.- Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Սահակ Արդ. Մաշայեան:

- Կէսօրէ ետք, Մայր Տանարի խորաններուն գլխաւոր սրբանկարները, Համբարձի շարականը երգուելու ժամանակ, վարագուրուեցան Պատրիարք Սրբազան Հօր. Գերաշնորհ եւ հոգեշնորհ հայրերու ձեռնով:

Կիր. 9 Մարտ.- Բուն Բարեկենդան: Փակեալ - Խորանի Ս. Պատարագը Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Տ. Բարսեղ Վրդ. Գալէմտէրեան, իսկ Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան ֆարոգեց: Ըստ սովորութեան, զպրապետի պաշտօնը վարեց Լուսարարապետ Տ. Գաւիթ Արք. Սահակեան:

Դշ. 12 Մարտ.- Սկիզբն Կարգաց Մեծի Պահոց: Առաւօտուն Մայր Տանարին մէջ տեղի ունեցաւ «Արեւագալ» ի առաջին, իսկ կէսօրէ ետք՝ «Թաղաղական» ի առաջին ժամերգութիւնը:

Եշ. 13 Մարտ.- Մեծ Պահոց առաջին հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց եւ ֆարոգեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Ուր. 14 Մարտ.- Ս. Թէոդորոսի նախատօնակը պաշտուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Գաւիթ Արք. Սահակեան:

Շր. 15 Մարտ.- Ս. Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տանար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն եւ հանդիսաւոր թափօր Տանարէն ներս: Թափօրապետն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Կիր. 16 Մարտ.- Քառասներորդաց: Արտախմբան: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Գաւիթ Արք. Սահակեան: Հոն մատուցուեցաւ նաեւ Ս. Պատարագ:

ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէրեան: Ապա կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս բափօր Քրիստոսի Ս. Գեորգեանին եւ մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԵՂ. 5 Դեկտ. 1996.- Երուսաղէմի եւ Յորդանանի Ասորի ուղղափառ եկեղեցւոյ պատրիարքական փոխանորդ՝ Գերշ. Մար Սվերիոս Մալիի Մուրատի հրաւերով, Ջիբնեաց լեռան պանդոկներէն մէկուն մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Կիր. 8 Դեկտ.- Երուսաղէմի մէջ, Մարոնիք եկեղեցւոյ Պատրիարքական փոխանորդ՝ Գերշ. Տ. Փոյ Սայայի կողմէ կազմակերպուած ընդունելութեան Մարոնիք վանքին մէջ ներկայ գտնուեցաւ Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

ԲՂ. 9 Դեկտ.- Երուսաղէմի Բաղաբայտի եւ Տիկ. Օլմերքի կողմէ կազմակերպուած մոմավարութեան ընդունելութեան Խանուկայի հինգերորդ գիշերուան առթիւ, Բաղաբայտարանի սրահին մէջ, ներկայ գտնուեցան Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեան:

ԲՂ. 9 Դեկտ.- Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Սահակ Արդ. Մաշայեանի, մեկնեցաւ Հոռմ, մասնակցելու համար Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի կողմէ տրուելիք այցելութեան, Հոռմէական եկեղեցւոյ Սրբազան Պապին, Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ.ին, Դեկտեմբեր 10-14 օրերուն, Վատիկանի մէջ: Պատրիարք Սրբազան եւ Հայր Սահակ Ս. Արոժ վերադարձան Դեկտեմբեր 16, Երկուշաբթի երեկոյեան:

ԴՂ. 25 Դեկտ.- Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեանի, Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաւր Արաֆատին այցելութիւն մը տուաւ Բեքդեմի մէջ, տօնական օրերու բարի մաղթանքներուն հետ անդրադառնալով հայ ժողովուրդի պատմութեան, եւ ներկայ կացութեան մէջ ժողովուրդներու գոյակցութեան:

ԵՂ. 26 Դեկտ.- Պատրիարք Սրբազան, ընկերակցութեամբ Տ. Դաւիթ Արք. Սահակեանի եւ Տ. Յուսիկ Եպս. Պաղեստինեանի մասնակցեցաւ Իսրայէլի նախագահ Էզեր Ռայզմանի կողմէ կրօնական պետերուն ի պատիւ, նոր տարուան

առիթով կազմակերպուած հիւրասիրութեան:

Ուր. 27 Դեկտ.- Առաւօտուն, Միաբանութիւնը Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ այցելեց Յրանչիսկեանց Միաբանութեան Հայր Կիւսրոտին, եւ Լատինաց Ամենապատիւ Պատրիարք Միշէլ Սապպահին, շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը: Ապա Պատրիարք Սրբազան Հայրը Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան, գացին Պապական նուիրակին եւ Անկլիքան Եպս.ին շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը:

- Նոյն օրը Միաբանութեան հոգեւորական հայրեր Տ. Յուսիկ Եպս. Պաղեստինեանի գլխաւորութեամբ այցելեցին Յոյն կաթողիկ Պատրիարքարան, եւ Մարոնիքներու Եպս.ին, շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը:

Եր. 28 Դեկտ.- Առաւօտուն լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեանի գլխաւորութեամբ, մի քանի Միաբան Հայրեր գացին լուսերականներու Եպս.ին շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը:

ԳՂ. 7 Յուն. 1997.- Պատրիարք Սրբազան Հայրը Պաղեստինի Նախագահ Եսաւր Արաֆատին կողմէ կազմակերպուած ճաշկերոյթին ներկայ գտնուեցաւ Բեքդեմի Բաղաբայտի մէջ, Քրիստոնեայ պետերուն հետ: Պատրիարք Սրբազան Հօր ընկերացան Լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Ասագ Թարգման Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

ԴՂ. 8 Յուն.- Առաւօտուն լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր, գացին Ասորիներուն, Հապէշներուն եւ Դպտիներուն շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը:

- Պաղեստինեան իշխանութեան Զրօսաշրջիկութեան բարձրագոյն խորհուրդի կողմէ ի պատիւ Երուսաղէմի ճամբորդական ընկերութիւններու կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

ԵՂ. 9 Յուն.- Առաւօտուն Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր այցելեցին Յունաց Ամեն. Տ. Տիոտորոս Պատրիարքին, շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը:

ԳՂ. 14 Յուն.- Իսրայէլի վարչապետ՝ Բենիամին Նաբանիաի կողմէ ի պատիւ լիհաստանի վարչապետ՝ Վրոնցիմիրից Սիմոնցիկիցի տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զոհանեան:

ԲՂ. 20 Յուն.- Հայոց Ս. Ծնունդեան Տօնին առթիւ շնորհաւորութեան համար Պատրիարքարան այցելեցին ֆրանչիսկեան Միաբանութիւնը, Լատինաց Ամեն. Պատրիարքը, Դպտոց, Ասորոց

և Հապէշաց Եպիսկոպոսները իրենց միաբանութիւնով, Անկլիքան Եպս.ի փոխանորդը, Յոյն կաթողիկ և Մարօնիթ Եպիսկոպոսները և Լատներականները:

Գշ. 21 Յուն.- Ս. Մենդեան շնորհաւորութիւնները շարունակուեցան:

- Կրօնից նախկին նախարարը Բրօֆ. Շիրքիթ. Յունաց Ամեն. Ս. Պատրիարքը իր Միաբանութեամբ և Երուսաղէմ տարբեր երկիրներէ եկած 12 Օրթոտոքս Եպիսկոպոսներով և ներկայացուցիչներով: Ավգաֆի նախարար Հասան Թահպուպ. Երուսաղէմի քաղաքացի է հուս Օլմէրք և իր քարտուղարը Պրն. Կոլտսքին: Կրօնից նախարարութեան ներկայացուցիչները:

Եշ. 6 Փետր - Երուսաղէմի Քաղաքացիտ՝ էհուտ Օլմէրքի կողմէ տրուած ընդունելութեան ի պատիւ Պերլինի Քաղաքացիտ՝ Պրն. էպերհարտ Տիպկենի, ներկայ գտնուեցաւ Տ. Գաւրի Արք. Սահակեան:

Կիր. 2 Մարտ.- Երուսաղէմի քաղաքացիտ՝ էհուտ Օլմէրքի և Քաղաքացիտարանի խորհուրդին կողմէ կազմակերպուած ընդունելութեան, ի պատիւ Իսրայէլի նախկին հանգուցեալ վարչապետ Իցիալ Ռապինի Յուշարձանի բացման արարողութեան, ներկայ գտնուեցան Տ. Անուշաւան Մ. Վրդ. Ջղջանեան և Տ. Շնորհի Մ. Վրդ. Գալուստեան:

Գշ. 11 Մարտ.- Անկլիքան Եկեղեցւոյ Քէնթրըպըրիի Արքեպիսկոպոս ձօրն Քէրիի և Առաջնորդներու համագումարը տեղի ունեցաւ Երուսաղէմի Անկլիքան Մայր Տաճարի, Սէյնթ ձօրնի մէջ: Երուսաղէմի Անկլիքան Եպս. Գերշ. Սէմիր Քաֆիթիի և իր փոխանորդ Գերշ. Սիա Ապու էլ Ասալի հրաւերով կազմակերպուած պաշտամունքին և հիւրասիրութեան ներկայ գտնուեցան Տ. Անուշաւան Մ. Վրդ. Ջղջանեան, Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան և Տ. Թէոդորոս Արք. Ջաւաբեան:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

1) Ռամազանի տօնին առիթով՝

- Յորդանանի Վսեմ. Հիւսէյն Թագաւորին.

- Պաղեստինի իշխանութեան Նախագահ Վսեմ. Եասըր Արաֆաթին.

2) Նախագահական ընտրութեան առիթով.-

- Միացեալ Նահանգաց Ամերիկայի ընտրեալ նախագահ Ուիլիլմ Քլինթընին.

3) Իսրայէլի վարչապետ Բենիամին Նաթանեահուին, Ջինուորական երկու ինֆնա-թիռներու ընդհարումէն 73 աղետեալներուն առիթով ընտանիքներուն ցաւակցական.

Armenian Patriarchate



ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ ՀԱՅՈՑ

بطريركيسة الارمن

القدس في ٦ شباط ١٩٩٧

جلالة الملك الحسين المعظم
ملك المملكة الاردنية الهاشمية - عمان

بالاصالة عن نفسي وبالنيابة عن أخوية مار يعقوب
والطائفة الأرمنية في الديار المقدسة والاردن ابعث الى مقام
جلالتكم باصدق التهاني والتبريكات بمناسبة عيد الفطر السعيد
واسأل المولى تعالى ان يبارك خطاكم في سبيل تحقيق السلام في
منطقة الشرق الأوسط .

Խորհրդ Խորհրդ Խորհրդ
+ Խորհրդ Խորհրդ Խորհրդ

رئيس الاساقفة طوركوم مانوكيان

بطريرك الارمن في الديار المقدسة والاردن



Armenian Patriarchate



ՄԱՏԻԱՐԿԱՐԱՆ ՀԱՅՈՑ

بطيرير كيسة الارمن

القدس في ٦ شباط ١٩٩٧

الاخ الرئيس ياسر عرفات حفظه الله
غزه

بالاصالة عن نفسي وبالنيابة عن اخوية مار يعقوب
والطائفة الأرمنية في الديار المقدسة أبعث الى مقامكم باصدق
التهناني والتبريكات بمناسبة عيد الفطر السعيد واسأل المولى
تعالى ان يبارك خطاكم في سبيل تحقيق السلام في الديار المقدسة

طويرير طوركوم مانوكيان

رئيس الاساقفة طوركوم مانوكيان

بطيريرك الارمن في الديار المقدسة



11.11.97

TELEGRAM ברוק ברקיע

מספר 7448-0092

נמוכר באמצעות
 נכנס האורד

בארץ פי הבלאד לחו"ל ללארץ לאניה ללספיענה

חנות
 פרע המריד

תעלמות המדעה	הוראת שירות	הסכום	מסי מלים לתשלום	מספר מלים	שעה	תאריך משלוח
		שאל חדיעה	עדד הכלמאט ללדע	עדד הכלמאט	השעה	תאריך הארסאל

מספר סטורי
 הרקמ האצילי
 שודר בשעה
 ארפת פי השעה
 כידי
 מס סודר
 רקמ התלסאל

מרטני הנמען (נמברוק לחו"ל רשום בלועזית) תפאציל המרשל איה (ברקיע ללארץ - סחל באלעה האחניה) ADDRESSEE

NAME **HIS EXCELLENCY**
 STREET & NO. **PRESIDENT WILLIAM CLINTON**
WHITE HOUSE
 LOCALITY **WASHINGTON (DC)**
 COUNTRY

מרטני השולח (לא לשידור)
 תפאציל המרשל (לכסת לארסאל)
SENDER'S PARTICULARS
(NOT TO BE TRANSMITTED)
Patriarch
Torkom
Manoogian
Armenian
Patriarchat
 6282331
 6282331
 חתימה
 התופע

TEXT:
THE ARMENIAN PATRIARCHATE AND COMMUNITY OF
JERUSALEM CONGRATULATE YOU ON YOUR ELICTION AS
THE PRESIDENT OF THE UNITED STATES AND OFFER
THEIR PRAYERS FOR YOUR HEALTH LONG LIFE AND
SUCCESS OF YOUR ENDEAVOURS IN THE FURTHERANCE
OF WORLD PEACE.
ARCHBISHOP TORKOM MANOOGIAN
ARMENIAN PATRIARCH OF JERUSALEM.

ראה נמוכר לזר תנאי חלוקת המברקים ביישובים השונים
 מן החאפ ג'ד תפאציל ען תזריע הברקיעאט פי הברקיעאט האחנה


426-05 7448-0092

EXCELLENCY BINYAMIN NETANYAHU


PRIME MINISTER

HAKIRYA 91130 JERUSALEM


OUR CHRISTIAN COMMUNITIES ARE DEEPLY GRIEVED BY THE TRAGIC INCIDENT WHICH CAUSED THE DEATH OF 73 MEMBERS OF THE ISRAELI DEFENSE FORCES STOP WE PARTICIPATE IN THE SORROW OF THE ISRAELI PEOPLE AND THROUGH YOUR EXCELLENCY CONVEY OUR CONDOLENCES TO THE VICTIMS BEREAVED FAMILIES ASKING ALMIGHTY TO REPOSE THE SOULS OF THE DECEASED IN THE BOSOM OF ABRAHAM




DIODOROS GREEK ORTHODOX PATRIARCH



MICHEL SABBAB LATIN PATRIARCH



TORKOM MANOOGIAN ARMENIAN PATRIARCH



p. GIUSEPPE NAZZARO OFM CUSTOS OF HOLY LAND

ראש הממשלה
Prime Minister

February 16, 1997


Your Beatitude,

On behalf of the people of Israel, and especially the bereaved families, I thank you for your condolences following the helicopter disaster.

I deeply appreciated your participation in our grief. Your message of solace and support in this time of national tragedy has helped ease the agonizing pain as our people mourn the loss of 73 of our finest and bravest young soldiers.

The anguish suffered by the parents and families in these circumstances is indescribable. We pray that they will be granted comfort in their sorrow, and the strength to rebuild their lives.

Sincerely,



Benjamin Netanyahu

His Beatitude Archbishop Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem
Armenian Orthodox Patriarchate
P.O. Box 14235
Jerusalem 91140

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ



ՀԱՆԳԻՍ
Տ. ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆԻ
ՄԻԱԲԱՆԻ
ՈՒԽՏԻՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ
(1904–1996)

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ «Սիոն» ամսագրի խմբագրութիւնը խոր սուգով կը գուժեն մահը Գերաշնորհ Տ. Նորայր Արքեպս. Պողոսեանի, որ հանգեաւ ի Տէր 19 դեկտեմբեր 1996, հինգշաբթի ժամը 10:30-ին, Երուսաղէմի Ֆրանսական Հիւանդանոցին մէջ:

Իրմով Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին եւ ի մասնաւորի Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը կը կորսնցնեն բազմավաստակ, լուսամիտ եւ ներհուն հոգեւորական մը, որ իր ամբողջ կեանքը ի սպաս դրաւ Աստուծոյ եւ իր ժողովուրդին ծառայութեան:

Իր մահով կ'ողբանք կորուստը վաստակաւոր ուսուցչին եւ եկեղեցւոյ կարգին բազմամուտ վարդապետին, որ եօթը տասնամեակէ աւելի երկարաձգուող ժամանակի ընթացքին Դուրեանի եւ Կիւլիսէտեանի Հայեցի շուկին տակ ստացած իր ուսման սէրը եւ իր իսկ ջանքերով ամբարած գիտութիւնը փոխանցեց նորահաս սերունդներուն, որոնք իրենց կարգին լծուեցան եկեղեցւոյ դործին եւ ազգային ծառայութեան:

Կ'ողբանք կորուստը «Սիոն» ամսագրի երկարամեայ աշխատակիցին, որ ժրջանօրէն պեղեց մեր մշակոյթի գանձերը եւ հանրութեան սեփականութիւն դարձուց զանոնք: «Սիոն» ամսագրի նոր շրջանի սկզբնական թիւերէն սկսեալ երեւցան անոր բովանդակալից կրօնական, գրական եւ բանասիրական յօդուածները, որոնք մեծապէս գնահատուեցան:

Կը սգանք մահը Հաւատաւոր Հինաւուրց միաբանի մը, որ առանց դժկամակութեան եւ անթերի կերպով կատարեց իր վրայ դրուած բոլոր պարտականութիւնները մայրավանքէն ներս եւ Սուրբ Տեղեաց մէջ: Ազգային իրաւունքներու ի խնդիր բազմաթիւ դժուարութիւններու դէմ մաքարող եռամեծար Պարոնտէրնու եւ Շղթայակիրներու օրինակին հետեւելով՝ ան ամէն կերպով արժանի դարձաւ դասակիցը ըլլալու այն նուիրեալներուն, զորս ինք կը կոչէր «Սիոնի որդիք»:

Կ'ողբանք նաեւ կորուստը մեծ բանասէրին, որ առանձինն կատարեց մի քանի տասնեակ գիտնականներու գործը՝ ցուցակագրելով տասնմէկ մեծադիր հատորներու մէջ Սրբոց Յակոբեանց ձեռագրատան Հազարաւոր գրչագիր մատենաները: Այդ կոթողական աշխատանքին առընթեր ան մոռացութենէ փրկեց բազմաթիւ նիւթեր մեր մշակոյթի պատմութեան վերաբերեալ, որոնցմէ ոմանք լոյս ընծայեց հատորներով իսկ մնացեալներուն անդրադարձաւ յօդուածներով: Իր աշխատասիրութեանց երկար շղթային օղակները կը կազմեն մատենագիրներու, աշուղներու, գրիչներու, վանքերու,

վաւերագրերու, ծիսագիտութեան, կանոնագիտութեան եւ այլ նիւթերու նուիրուած ուսումնասիրութիւններ, զորս միայն իրեն նման մեթոտիկ աշխատասիրող մը կրնար լոյս ընծայել:

Նորայր Սրբազան մեկնեցաւ այս աշխարհէն լի աուրբքի կ'աղօթենք որ Տէր Աստուած իր Արքայութեան լոյսերուն արժանի ընէ անոր հոգին եւ անոր օրինակելի կեանքին հետեւողներ ընծայէ ի փառս Անուան Իւրոյ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ԿՈՉ

«Սիոն» ամսագրի խմբագրութիւնը ներկայ կոչով կը հրաւիրէ հանգուցեալ Տ. Նորայր Արքեպս. Պողարեանի աշակերտած հոգեւորականները եւ գրչի մշակները, որ հանգուցեալին վերաբերեալ իրենց յուշերը գրի առնեն եւ այդպիսով մասնակցութիւն բերեն Սրբազանին յիշատակին նուիրուած բացառիկ թիւին, զոր կը ծրագրենք լոյս ընծայել ընթացիկ տարուան վերջաւորութեան: Նոյն թիւին մէջ ընդարձակ բաժին պիտի յատկացուի բանասիրական յօդուածներու եւ պիտի տրուին Սրբազանին կենսագրութիւնը եւ աշխատասիրութիւններուն ցանկը: Հաճեցէք ձեր գրութիւնները ուղարկել խմբագրութեանս հասցէին մինչեւ 31 յուլիս 1997:



ՄԱՀԱԶԴ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը եւ Միաբանութեան անդամները խոր ցաւով կը գուժեն մահը՝

ՏԻԱՐ ՏԻՐԱՆ ՈՍԿԵՐԻՉԵԱՆՆԻ
«Ժնեալ Կարին»
1912 - 1997

Երկարամեայ հարտարապետ Ս. Յարութեան Տաճարի եւ նախկին Ատենապետ Ամմանի Տեղական Խորհուրդի որ տեղի ունեցաւ 24 Փետրուար 1997-ին Ամերիկայի մէջ:

Յուդարկաւորութեան տխուր արարողութիւնը տեղի պիտի ունենայ Պոսքընի մէջ, Կիրակի 2 Մարտ 1997-ին:

Տէրը լուսաւորէ բազմավաստակ պաշտօնէի հոգին եւ Ս. Հոգիի մխիթարութիւն պարգեւէ իր այրի կնոջ, զաւակաց եւ պարագաներուն:

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի մահուան Ութօրէքի առիթով, Հինգշաբթի, 6 Մարտ 1997, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ

Պատրիարքարան Հայոց
Երուսաղէմ

Հանգուցեալ Տիար Ոսկերիչեանի հոգեհանգստեան պաշտօն կատարելու ձեր որոշումին համար, վշտահար ընտանիքին անդամները շնորհակալութիւն կը յայտնեն Երուսաղէմի Հայոց Պատրիարքին եւ Սբ. Յակոբայ միաբանութեան անդամներուն:

Տիրանը Երուսաղէմն ու Հայոց վանքը միշտ յարգած ու աշխատած էր եւ պայքարած մեր կրօնական թէ ազգային իրաւունքներու ի պաշտպանութիւն:

Սբ. Վարդանանցի տօնին առթիւ պատշաճ է որ յարգանք եւ հոգեհանգստեան պաշտօն կատարուի ազնուական հարտարապետին հոգւոյ հանգստեան համար:

Անահիտ Ոսկերիչեան եւ Զաւակունք
Պոսքըն

Վշտահար ազգականներ,
Սգակիր հայրենակիցներ,

Այս դագաղով հողին մէջ պահ կը դնենք բառին բովանդակ իմաստով բացատրիկ անձ մը, եւ նաեւ հայ մարդ մը որ խորհրդանշին է ամբողջ սերունդի մը որ կէս դար մեր ազգային կեանքի բեմը գրաւեց: Բառ չկայ պատշաճօրէն նրակելու Տիրան Ոսկերիչեանի բարդ եւ այլազան անհատականութեան բոլոր երեսները: Ամենէն ցայտունը՝ իր ազնուական ու վեհանձն նկարագիրն էր, սրտառույ մարդկայնութիւնը որով կը յարաբերէր բոլոր մարդոց հետ ծանօթ անծանօթ, բանտօրէն մինչեւ Պատրիարք, Նախարար ու Թագաւոր: Ազնուականութիւն մը որուն մէջէն ստեղծագործ արուեստագէտի իր մեծութիւնը եւ նուրբ հաշակը կը յայտնուէին ամէն վայրկեան, կեանքի առօրեայ ու սովորական արարքներէն մինչեւ հարտարապետի իր սեփական իրագործումները: Ամմանի թէ Երուսաղէմի մէջ «Խառուհաճ» Տիրանը համատարած յարգանքի արժանացած մարդկային ու մշակութային սէնպոլ մը, խորհրդանշան մըն էր: Ամմանի մէջ իր կառուցած Թագաւորական պալատները, շքեղ ապարանքները ու բազմաթիւ շէնքերը, եւ Երուսաղէմի սրբավայրերու, եւ յատկապէս

Սրբ. Յարութեան Տաճարի նորոգութեան մէջ իր բերած հսկայական բաժինը վկաներն են իր վայելած մեծ վարկին: Տիրանը քարի ու երկաթի վրայ աշխատող՝ բայց նիւթին ու հաշիւին տիրակալութենէն բոլորովին անկաշկանդ ազատ հոգի մըն էր, վեհանձնն եւ առատածնն, խորապէս զգայուն, բանաստեղծ հոգի մը՝ որ իր բարիքները բաշխեց բոլոր մարդոց անխոր, սկսելով իր գաւակներէն ու հասնելով յետին հայը, յաճախ մնալով անանուն:

Տիրանը սակայն սոսկական անձ մը չէր այլ Մեծ եղեռնի մէջէն իսկ ծնունդ առած հայութեան լուսազոյն նախատիպարը, իր էրզրումցի մօր ուսերուն վրայ կտրած տարագրութեան արհաւիրքը եւ ապրած ամբողջ Սփիւոֆի պատմութիւնը, իր առաջին եղբրական տասնամեակներէն մինչեւ ներկան: Ես զինքն ներգաղթի տարիներուն ճանչցայ, երբ խնամիացանք, եւ 50 տարիէ ի վեր միայն հիացում ունեցած եմ իր իտէպիսք ու բուն կուսակցականի եւ հաւատար, հայրենասէր հայու խառնումաճֆին համար: Ատկէ ետք Փարիզ գացիմք ուսումը կատարելագործելու, ես՝ գրականութիւն, ինքը՝ քարտարապետութիւն, կեանքի դժուար պայմաններու մէջ: Յետոյ՝ ետ Միջին Արեւելեան հայ գաղութները, ուր իր աշխատանքի կիրքը, քարտարագիտական տաղանդը, ազնիւ նկարագիրն ու կեանքի ոճը ի վերջոյ յարթանակեցին եւ Տիրանը դարձաւ ազգային դէմք ու հանրային կարեւոր անձնատրութիւն:

Տիրանը վերջիններէն եւ ազնուագոյններէն է այն սերունդին, Սփիւոֆի առաջին սերունդին՝ որ իր մարմնին ու հոգիին մէջ ապրեցաւ ամբողջ յուսախաբութիւնները, երազները, խանդավառութիւնը, դառնութիւնն ու առանձնութիւնը մեր պատմութեան վերջին կէտ դարուն: Վիպային հերոսի տիպար մըն էր գրեթէ Տիրանը, այնքան քոյր էր իր ներքին կեանքը, եւ նոյն ատեն՝ բաց էր անոր միտքը քաղաքակրթութեան նորութիւններուն, մնալով սակայն հիմնատր՝ իրաւ հայկականութեան ապրումին մէջ: Խանդավառ էր անկախ Հայաստանով ու հպարտ՝ Հայաստանի կառավարութեան իրեն շնորհած անցազրով:

Սիրելի Տիրան՝ ովկիանոսներ եւ անապատներ կը բաժնէին մեզ ողջութեանդ, բայց հիմա որ միայն յիշատակի ու գաղափարի վերածուած ես՝ մաս կը կազմես մեզի ուր որ ալ ըլլանք մոլորակին վրայ: Լեցուն, քոյր, արդիւնատր եւ արժեքատր տարիներուդ այս աւարտին, ես միայն կրնամ ըսել՝ արուեստի գործ մը եղաւ կեանքդ ու երջանկութեամբ լեցուցիր ով որ բախտը ունեցաւ քեզ մօտէն կամ հեռուէն ճանչնալու: Եկար, ապրեցար եւ ահա կը մեկնիս՝ այս աշխարհը անլի գեղեցկացուցած քու ստեղծած գործերովդ եւ նաեւ կեանքիդ օրինակովը: Կը մեկնիս՝ բայց չես մեռնիր որովհետեւ արուեստագէտները անմահ են իրենց ստեղծած գեղեցկութեան նման, ճշմարտութեան նման:

Սիրելի Տիրան, վարձքդ կատար..... մնաս բարով:

Վահէ Օշական

Ս. ԱԹՈՒՈՅՍ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ Է ՀԵՏԵԻԵԱԼ ԳԻՐՔԵՐԸ

1. ԷՋԵՐ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Բարխուդարեան Փրոֆ. Վ. Բ., Դոկտ. Ջաւէն Եկաւեան խմբագիրներ: Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիա Երեւան, 1996 էջ 239
2. ԳՐՈՒԱԳՆԵՐ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ
Յակոբ Քէօսեան: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, 1995 էջ 299
3. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ
Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1990 էջ 112
4. ԱՐՑԱԽԵԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ
Բագրատ Ուլուբարեան: Երեւան «Գիր Գրոց» 1994 էջ 299
5. ԱՆԴՐԱՆԻԿ
Համբարձում Կարապետեան: Երեւան «Հայաստան» 1992 էջ 268
6. ՄՈՎԱԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ
Մովսէս Խորենացի: Ասոյթներ, Խոհեր, Բնութագրումներ: Աշխատասիրութեամբ Պ. Մ. Խաչատրեանի: Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն Երեւան, 1992 էջ 71
7. ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՆՐԵՐ
Վ. Ս. Ներսիսեան եւ Հ. Գ. Բախչինեան խմբագիրներ: Հայկական ՍՍՀ Գա Հրատարակչութիւն, Երեւան 1984 էջ 426
8. ԿԱՐՄԻՐ ՇՈՒՇԱՆՆԵՐ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ
Նահապետ Մելիֆոնեան: Տպուած՝ Միացեալ Նահանգներ, 1993 էջ 420
9. ԿՈՐԻՒՆ Ե. ԳԱՐ
Կորիւն: «Հայոց Մատենագիրներ» Մատենաշար «Հայաստան» հրատր. Երեւան, 1994 էջ 176
10. ՄԵԾ ԵՂԵՈՆ
Վերծինէ Սվազեան: Արեւմտահայոց Բանաւոր Վկայութիւններ: ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն Հրատարակչութիւն Երեւան 1995 էջ 223
11. ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ
Եզնիկ Կողբացի: Թարգմանութիւնը եւ Ծանօթագրութիւնները Ա. Ա. Աքրահամեանի: Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, Երեւան 1994 էջ 345
12. ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ
Աշխատասիրեց Հայոքի Պատկերագրող Ա. Տպագր., Յովհ. Մարտիրոսեանցի Տպարան, Թիֆլիս 1882 էջ 208
13. MAKARAVANK
Documenti Di Architettura Armena. Documents of Armenian Architecture. Published in Venice, Italy 1994 pp. 63
14. THE DECLINE OF EASTERN CHRISTIANITY UNDER ISLAM FROM JIHAD TO DHIMMITUDE
Ye'or Bat. Seventh-Twentieth Century. Madison Teaneck Fairleigh University Press. London Associated University Press 1996 pp. 552

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ

- Աստուած Ընդ Մեզ	Վեհ. Գարեգին Ա.	3-6
- Ծննդեան Պատգամ Բեթղեհեմի	Թ.Ա.Մ.	7-9
- Armenian Christmas in Bethlehem	Torkom Patriarch	10-11
- Նոր Տարին	Անուշաւան Մ. Վրդ. Զղջանեան	12
- Յակոբոս Տեառնեղբայր	Բարգէն Թօփնեան	13-15
- Քրիստոսի Հրաշագործութիւնները	Էմմանուէլ Արդ. Աբաջանեան	16-18
- Israeli Law Prohibits		18

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

- Հարոյտի Որդւոյն Պաղտոսութիւնը	Լորտ Պայրըն	19
- The Veil Unveiled	Arthur Hagopian	20-22
- Քօղագերծուած Քօղը	Թրգմն. Շէն-Մահ	21-23
- Հայու Ցաւ	Անել	24
- Տիրերական	Բագրատունի	25
- Դիմանկարս	Միշա Ավարեան	25

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- Նարեկացի - Լեզուի Պատկերաւորութեան Միջոցների Համակարգը	Ա. Ղազինեան	26-31
--	-------------	-------

ԳՐԱԿԱՆ

- Խորին Յարգանք Գրարարին Հանդէպ	Լեւոն Հախլերդեան	32
- Անդրանիկը եւ Եռագոյնը	Մարգարէտ Մարկոսեան	33-38
- Վերյուշ մը Անցեալէն	Կարպիս Եսայեան	38-39
- Վ. Թէլեան - Շէյխապիր - Շէն-Մահ		40-41

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

- Աստուածաշունչի Հայկական Համարաբարտները	Գէորգ Թօսունեան	43-49
--	-----------------	-------

ԵՐԳԻԾԱՆՔ

- Թէ Որքան Խրքին կարող է լինել Գրարարը		50-52
--	--	-------

ՊԱՏՄԱԿԱՆ

- Հայաստանի Հնագոյն Մշակոյթից	Արամ Գէորգեան Գրիգոր Կարախանեան	53-61
- Ս. Երուսաղէմի Հայոց Վանքը Ինչո՞ւ Պարտք ունի (1883)	Մամբրէ Վրդ. Մարկոսեան	62-69
- Դիտողագիր Երուսաղէմի Նոր Կանոնագիրին	Մաղափիա Արք. Օրմանեան	70-94

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

- Ամենայն Հայոց Հայրապետի Այցը Հոռմի Պապին 95-96
- Քրիստոնեական Համագործակցության Վեհ. Գարեգին Ա. 97-101
- Ս. Յարութեան Տանարի ներքին Գմբեթի նկարագրագում 102
- History of The Holy Sepulchre 103-123
- Երուսաղեմ, Երուսաղեմ Մ. Հայկենց 124-125
- Կաղանդը Ս. Թարգմանչաց եւ Ժառանգաւորաց Վարժարաններուն մէջ 126

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆՔ

- 127
- Ամենայն Հայոց Կաբողիկոսէն 128
- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաբողիկոսէն 129
- Հոռմի Սրբազան Պապէն 130
- Ռուսաց Սրբազան Պատրիարքէն 131
- Կ. Պոլսոյ Սրբազան Պատրիարքէն 132
- Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Նախագահ Միքայէլ Նսայեանէն 132

Ս. ՅԱԿՈՒԹԻ ՆԵՐՍԷՆ

133-138

ՀԵՌԱԳԻՒՆԵՐ

- Թամազանի տօնին առիթով--
- Յորդանանի Վեմ. Հիւսէյն Թագաւորին 139
- Պաղեստինի Իշխանութեան Նախագահ Վեմ. Եսաըր Արաֆատին 140
- Նախագահական Ընտրութեան առիթով--
- Միացեալ Նահանգաց Ամերիկայի ընտրեալ Նախագահ Ուիլիքմ Բլինքըրնին 141
- Իսրայէլի Վարչապետ Բենիամին Նաբանեախուն, Զինուորական երկու օդանաւերու ընդհարումէն աղէտակներուն առիթով ցաւակցական 142-143

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Նորայր Արք. Պողոսեանի
Կոչ

144-145

ՏԻՐԱՆ ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

146-147

ՅԱՆԿ ԳԻՐՔԵՐՈՒ

148

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ


149-150



10-14 Դեկտեմբեր 1996. Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա. Կաթողիկոսի այցը Հռոմի Պապին: Փոխանակում եղբայրական «Ողջոյնին»:



10-14 Դեկտեմբեր 1996. Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա. Կաթողիկոսի այցը Հոռոմի Պապին:
Փոխանակում եղբայրական «Ողջոյնին»։ Ազէն Զախ' Հոռոմի Պապը Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ., Կ. Պոլսոյ Պատրիարք Տ. Գարեգին Արք. Գազաննեան, Տ. Խաժակ Արք. Պարսամեան, Թորգոմ Պատրիարք Մանուկեան:



10-14 Գեկտեմբեր 1996. Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաբոդիկոսի այցը Հոռմի Պապին: Հոռմի Պապին շարաքական ժողովրդային եանդիպումին մասնակցեցան Ամենայն Հայոց Հայրապետը, Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ Սրբազան Պատրիարքները եւ վեհին ընկերացող Հայ Հոգեւորականները:



25 Դեկտեմբեր 1996. Բեդդեհեմի մէջ Եսաբր Արաֆատին հետ հանդիպումը Պատրիարք Սրբազանին եւ Դաւիթ Արք. Սահակեանին:



29 Դեկտեմբեր 1996. Կաղանդը Սրբոց Թարգմանչաց Վարժարանի մէջ, Պատրիարք Սրբազանին եւ Միարանուրեան մասնակցութեամբ: Վարժարանի Տնուչ Սահակ Արք. Մաշալեան մաղթանքի իր խօսքը կ'ուղղէ ներկաներուն:



29 Դեկտեմբեր 1996. Կաղանդը Սրբոց Թարգմանչաց Վարժարանի մեջ.
մանուկները կ'երգեն եւ կ'արտասանեն:



29 Դեկտեմբեր 1996. Կաղանդը Սրբոց Թարգմանչաց Վարժարանի մեջ.
մանուկները նուէրներուն կը սպասեն:



2 Յունուար 1997. Ս. Յարութեան Տանարի ներքին գմբէթի նկարագարդման գոհարանական արարողութիւն: Աշէն Զախ՝ Դաւիթ Արք. Սահակեան, Թորգոմ Պատրիարք, Յունաց Տիտորոս Պատրիարք, Լատինաց Միշէլ Սապպահ Պատրիարք, Ֆրանչիսկեանց Հայր Ճիւսեփի Նագարօ:



2 Յունուար 1997. Ս. Յարութեան Տանարի ներքին գմբէթի նկարագարդման Գոհարանական արարողութիւն: Թորգոմ Պատրիարք նկարի Օրհնութեան աղօթքը կը կարդայ: Զախի՛ն՝ օտար երկիրներու հիւպատոսներ:



2 Յունուար 1997. Ս. Յարութեան Տանարի ներքին գմբէթի նկարագարդման Գոհարանական արարողութիւն: Զախէն Աջ՝ Յոյն Կաթողիկ համայնքի Լահամ Եպիսկոպոս, Պապական նուիրակ Անտրիա Մօնթեգամօյօ, Դպտի համայնքի Արրահամ Արքեպիսկոպոս, Ասորի համայնքի Սեւերիոս Արքեպիսկոպոս, Եթովպեական համայնքի Ապա Մաթէոս, Անկլիքան համայնքի Սամիր Քափիթի Արքեպիսկոպոս:



2 Յունուար 1997. Ս. Յարութեան Տանարի ներքին գմբէթի նկարագարդման Գոհարանական արարողութիւն: Լայնացմբ դէպի գմբէթի ծածկոցին բացումը: Առաջամասին դրուած է քանդակը Յիսուսի Գերեզմանին եւ Տանարի գմբէթին, Ս. Տեղեաց Լոգատար երեք Միարանութեանց նուերն է բարերար Տէր եւ Տիկին Ճօրն Տօթիին տրուած:



2 Յունուար 1997. Ս. Յարութեան Տանարի ներքին գմբէթի նկարագարդման Գոհարանական արարողութեան պահուն, բարերար Տէր եւ Տիկին Ճօրն եւ Մըրի Տօթիի ուրախ հայեացքը գմբէթի բացումին եւ ծածկոցի վերացումին:




2 Յունուար 1997. Ս. Յարութեան Տանարի ներքին Գմբէթի նկարագարդման Գոհարանական արարողութեան պահուն՝ գմբէթին բացումը եւ ծածկոցին վերացումը:



2 Յունուար 1997. Ս. Յարութեան Տանարի Ներքին Գմբէի նկարագարդման Գոհարանական արարողութեան աւարտէն յետոյ հիրասիրութեան ընթացքին, ձախէն աջ՝ Ճիւլի Եւ Արա «Կորգի» Նորմարդ (Ֆրեգնօ, Գալիֆօրնիայէն), Թորգոմ Պատրիարք, Բարեբար Տէր Եւ Տիկին Ճօրն Եւ Մըրի Տօթի (Նիւ Եօրքէն), Մօնսինեըր Տօպէրը Սթըրն «Նիւ Եօրքէն»:



2 Յունուար 1997. Ս. Յարութեան Տանարի ներքին գմբէի նկարագարդման Գոհարանական արարողութեան պահուն՝ գմբէին բացուումը Եւ ծածկոցին Վերացումը:



1994-1996 Ս. Յարութեան Տանարի ներքին գմբեթի նկարագարդման համար կառուցուած աշխատանքի բարձրահարթակը:



7 Յունուար 1997 Տօն Ս. Ստեփանոս Նախասարկաւագի Ս. Պատարագէն յետոյ, օրուան երկու սարկաւագապետ վարդապետներու առաջնորդութեամբ, սարկաւագներ կը բարձրանան Պատրիարքարան: Պատրիարք Սրբազանի Աջէն սկսելով՝ Թեոդորոս Արդ. Զաֆարեան, Հայկ Միրզախանեան, Հայկ Գազազեան, Արմէն Գեորգեան, Կարէն Բարսեղեան, Լեւոն Աղոսեան, Հրաչեայ Գրիգորեան, Մասիս Իսայեան, Արման Մինասեան, Արմէն Նաչատուրեան, Էմմանուէլ Արդ. Աբաջանեան:



13 Յունուար 1997. Կաղանդ ժողովագաւորաց Վարժարանի մէջ: Միաբանութիւն, աշակերտութիւն, պաշտօնէութիւն:



13 Յունուար 1997. Կաղանդ ժառ. Վարժարանի մէջ: Երեկոյթի յայտագրին մասնակցող ժառանգաւորներ:



13 Յունուար 1997. Կաղանդ ժառանգաւորաց Վարժարանի մէջ. կաղանդ-պապուկը եւ նուիրարաշիում:



18 Յունուար 1997. Հայկական Ս. Ծնունդի Տօնին առիթով մուտք ի Բեթղեհէմ: Երուսաղէմէն դէպի Բեթղեհէմ ինքնաշարժերու քափօրը առաջնորդող իսրայէլեան Ոստիկանական եւ Զինուորական ներկայացուցիչներ եւ Հայաստանի Պատուոյ Հիւպատոս Տիար Յուլակ Մոմենեան:



18 Յունուար 1997. Հայկական Ս. Ծնունդի Տօնին առիթով մուտք ի Բեթղեհէմ: Զախէն Աջ՝ Վաղարշ Եպս. Խաչատուրեան, Կիւրեղ Եպս. Գաբրիկեան, Թորգոմ Պատրիարք, Դաւիթ Արք. Սահակեան, Մեսրոպ Արք. Մուրաֆեան (Պոլիսէն), Յուսիկ Եպս. Պաղտատեան, Ենտրիկ Մ. Վրդ. Գառնարեան:



18 Յունուար 1997. Հայկական Ս. Մնունդի Տօնին առիթով մուտք է Բեքդեհէմ: Հայոց Վանքի Տեսչարանին մէջ «Բարիգալուստի» խօսք՝ Պաղեստինեան իշխանութեան նախագահ Նասրը Արաֆաթի անունով, խորհրդարանի Բրիտանեայ անդամ Տէք. Էմիլ շարնուի:



18 Յունուար 1997. Հայկական Ս. Մնունդի տօնին առիթով ի Բեքդեհէմ, նոյն երեկոյեան հիւրասիրութեան հրաւիրուած պետական անձեր եւ ազգայիններ:



18 Յունուար 1997. Հայկական Ս. Ծնունդի Տօնին առիթով ի Բեքդեհէմ, կէս գիշերուան պաշտամունքին, Ս. Այրին մէջ, Պետական անձնք եւ Պատրիարք Սրբազանի Պատգամը:



18 Յունուար 1997. Հայկական Ս. Ծնունդի տօնին առիթով մուտք ի Բեքդեհէմ, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական նուագախումբով:



18 Յունուար 1997. Հայկական Ս. Մնունդի տօնին առիթով մուտք ի Բեքդեհէմ, Հ.Ս.Մ.ի սկաուտական նուագախումբով:



18 Յունուար 1997 Հայկական Ս. Մնունդի տօնին առիթով մուտք ի Բեքդեհէմ, Թէրա Սանթրայի սկաուտական նուագախումբով:



18 Յունուար 1997 Հայկական Ս. Ծնունդի տօնին առիթով մուտք ի Բեք-դեհէմ, Պետական, Հայկական սկաւուտական դրօշակներով



Բեք-դեհէմի Ս. Ծննդեան Տանարի արտաքին մուտքի հրապարակը հայկական Ջանգակատունով, եւ Յոյն եւ Կաթոլիկ Վանքերուն աշտարակներով:

